

ՍՏ. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ
ԵՐԵՎԱՆ

891.99

14554

88


Կարփիյան Ս.

Խաչիկ Դաւթյան:

Տ.՝







891.99
4-88

Մ Տ Ե Փ Մ Ն
Կ Ո Ւ Ր Տ Ի Կ Յ Մ Ն

ՅՈՒՂԼՈՒ Է 1981 Ք.

ԼԵՈՆԱԳԵԼԱԳՔԻ
ԴՈՒՍՏՐԸ

~~14.554~~

A " 28266



ԵՐԵՎԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ
1-9-4-8

СТ. КУРТИКЯН
РАССКАЗЫ И ОЧЕРКИ

(На армянском языке)

Советский писатель

Ереван, 1948 г.

Բ Ո Յ Ա Ն Կ Ա

Ուշ աշնան օրը երեկոյանում էր: Անտառի բարձունքում, դարավոր կաղնու տակ, կիսամուշտակ հագած և փամփուշտակալ կապած մի աղջիկ յուղոտ շորով մաքրում էր քանդած հրացանը: Նրանից քիչ հեռու, հանգչող խարույկի շուրջ բոլորվել էին նույն ձևով հագնված մի խումբ մարդիկ: Բարձրահասակ ու թխադեմ տղամարդը, հենվելով հրացանին, կաղնու բնի հետևից դիտում էր թեթև մշուշով ողողված հովիտը, որը կիսվում էր Մարիցա գետի աղոտ-արծաթափայլ ժապավենով: Աշնանաթափ տերևների վրա ընկողմանած մարդիկ լուռ մտորում էին:

Թշնամու շրջապատումից նոր դուրս եկած պարտիզանական այս ջոկատի յուրաքանչյուր ռազմիկ մտածում էր անհավասար մարտում ընկած ընկերների մասին, սրտի խորքում երգվելով կուլել մինչև վերջ և վրեժխնդիր լինել թշնամուց:

Ճակատամարտում զոհված հրամանատարին փոխարինող Ստոյան Դաներ, մոտենալով պարտիզանուհուն, հրացանն զգույշ հենեց կաղնու մամռապատ բնին, նստեց մոտը և սկսեց ուժեղ քաշել ծխամորձը, ծխի հետ սրտի խորքերից քո՛ւլա քո՛ւլա արձակելով իր մեծ վիշտն ու ցասումը: Մտախոհ՝ նա հետևում էր զենքը խնամքով մաքրող գնչուական դիմագծերով պարտիզանուհուն:

Հանկարծ նա հարց տվեց.

— Բոյանկա՛, ասա՛ ինձ, ի՞նչը քեզ ստիպեց մտնել մեր պարտիզանական ջոկատը:

Յուզոտ կտորով փաթաթված ձողն արագ հանելով հրացանափողի միջից, աղջիկը կտրուկ շարժումով բարձրացրեց գլուխը։ Ստոյանի հարցը հուզել էր նրան։ Վառվում էին թուխ աչքերը և սև հոնքերը շարժվում էին անհանգիստ։

— Իսկ քեզ ի՞նչը սափակեց, — հուզմունքը զսպելով հարցրեց աղջիկը։

— Ե՛ս՝ ուրիշ։ Ե՛ս բուլղար եմ։ Բայց նույնիսկ բուլղար տղամարդկանցս համար դժվար է պարտիզանի կյանքը...

— Իսկ վելա նեւը կին չէ՞, — առարկեց պարտիզանուհին։

— Այո՛, բա՛յց... վելան էլ բուլղարուհի է։ Այս հողը մեզ՝ բուլղարներիս համար մայր է... Մեր պապերն այս հողը սրբապործել են իրենց արյունով՝ ազատագրելով օտար բռնակալներից և այժմ հանգստանում են այս հարազատ հողի ծոցում։ Իսկ դու բուլղարուհի չես...

Հայացքը սևեռելով Ստոյանի աչքերի մեջ, Բոյանկան գլուխն ավելի բարձրացրեց և նրա մեղմ ձայնը դողդողաց.

— Դու ճիշտ ես ասում, ընկե՛ր Դանև, ես բուլղարուհի չեմ. այս հողում չեն հանգստանում իմ հարազատների աճյունները։ Բա՛յց...

Նա մաքրեց ձեռքերը, արագ հավաքեց հրացանի մասերը և մի պահ լռությունից հետո շարունակեց.

— Եթե հետաքրքիր է, ես կպատմեմ իմ կյանքի մասին և այն ժամանակ դու կհասկանաս ամեն ինչ։ Այս մատանին, — ցույց տվեց նա իր մատնեմատը, — որ ինձ փրկել է ստրկությունից, հաճախ է հիշեցնում իմ մռայլ անցյալը։

Դանևը զարմացած դիտում էր ոսկե օղակը, որը Բոյանկան հանել էր իր մատից։ Ի՞նչ պատմություն կարող էր ունենալ այդ փոքրիկ, ոսկյա մատանին։

— Դեպքը պատահել է վաղուց՝ տասնհինգ թվականին, — սկսեց պարտիզանուհին իր պատմությունը, — հազիվ հինգ-վեց տարեկան աղջիկ էի։ Մորս փեշից կախ, ինձանից երեք տարով մեծ եղբայրս ու ես, դժբախտ ամբոխի հետ քշվում էինք անհայտ ճամփաներով, ինչպես փոթորկից պոկված աշնան տերևներ։ Մեր բաղմահագար բարավանում

ոչ մի տղամարդ չկար. նա կազմված էր բացառապես կանանցից ու երեխաներից: Հաճախ ինձ զբաղեցնում էր մի միտք, — թե ինչո՞ւ բազմամարդ այս ամբոխի մեջ ոչ մի երեխա հայր չունի, ինչո՞ւ մեզ հետ չեն իմ հայրը, իմ բարի տատիկն ու պապիկը...

Օրերով և շաբաթներով տանջալի ճանապարհ էր անցնում մեր նտարաբախտ քարավանը, հալածվելով դաժան ուղեկցողների կողմից:

Եվ ահա մի օր, արյունոտ մայրամուտին, մեր առաջը պարզվեց ավազոտ, ծառերից ու բուսականությունից զուրկ մի գորշ հարթություն — «անապատ» ինչպես լացով բացականչեցին ինձ շրջապատող կանայք:

Բոլորի հագուստներն էլ արդեն պատառոտվել էին, գզգզվել, ցնցոտիների վերածվել, երկար ու բոբիկ քայլելուց ոտներն ուռել ու արյունոտվել: Ես հաճախ լաց էի լինում, պահանջելով որ ինձ ետ տանեն մեր հայրենի տունը, իմ հոր, իմ բարի տատիկի ու պապիկի մոտ:

— Լաց մի լինիր, իմ անուշի՛կս, լաց մի լինիր, մենք բոլորս գնում ենք պապայի մոտ... Մի քիչ ևս համբերիր, — փորձում էր ինձ հանգստացնել խեղճ մայրս և ես ահով նկատում էի, որ նրա փոս ընկած աչքերից արցունքներ էին թափվում: Հիշում եմ, այդ միջոցին, չնայած հոգնածությամբ, եղբայրս ինձ կոնակը վերցրեց և ամբողջ ուժերը լարելով, մի քանի տասնյակ քայլ առաջ տարավ, մինչև որ նրա տանջանքը տեսնելով, ես ինքս խնդրեցի՝ ինձ ցած իջեցնել ավազոտի վրա: Այս ամբողջ եղելությունից ոչինչ չէի հասկանում, — ինչո՞ւ գիշերով մենք թողեցինք հայրենի տունը, ինչո՞ւ շար մարդիկ այրեցին ու մոխիր դարձրին այն, ինչո՞ւ մեզ քշում էին անմարդաբնակ վայրերով: Իմ այս հարցերին մայրս հուսակտուր պատասխանում էր.

— Չգիտե՛մ, ես էլ չգիտեմ...

Այս պատասխանն ինձ տարօրինակ էր թվում. մտածում էի, եթե մեծահասակները չգիտեն, հապա էլ ո՞վ կարող էր իմանալ, էլ ինչո՞ւ էին գնում իրենց չմաքած վայրերը...

Այս երկար ու ամայի ճանապարհներին քաղցից, ծա-
րավից, հողնածովայունից և հյուծումից դուրս էին ցցվել
կանանց ու երեխաների աշտոսկրերը, փոսացել ու մթնել էին
կյանքից զրկվող նրանց աչքերը, և, մարդիկ դարձել էին
քուրջերով պարուրված ուրվականներ: Կաթը ցամաքել էր
կանանց ստինքների մեջ ու ծծկեր երեխաները մեռնում էին
մայրական գրկում: Ինձ հետ դնացող մի փոքրիկ աղջիկ
գետին ընկավ ավազների վրա և քիչ հետո մահացավ: Մայ-
րը գրկած մեռած աղջկա վտիտ մարմինը, լուռ, առանց ար-
ցունքների շարունակում էր քայլել: Կիզիչ ճանապարհների
տառապանքները շորացրել էին արտասուքի ակունքները...

Երբ հետևյալ կայանում կանայք մոր գրկից բռնի վերց-
րին փոքրիկ աղջկա անշնչացած մարմինը և փոսի մեջ դրին,
ես բարձրաձայն հեկեկում էի, պահանջելով, որ նրան հողով
չծածկեն, չէ՞ որ,—մտածում էի,—իմ փոքրիկ ընկերուհին
կարող էր կուրանալ և շնչահեղձ լինել հողի տակ...

Մի օր էլ, արշալույսին, հորիզոնի վրա երևաց արծա-
թափայլ մի ժապավեն:

— Եփրատ, Եփրատ,—հառաչանք անցավ ամբողջ քա-
րավանով:

Հինավուրց գետի ափերին զարհուրելի մի տեսարան
սկսեց: Տանջանքներին շղիմանալով, կանայք խաշակնքում
էին իրենց երեսները, անեծքի խոսքեր ասում դահիճների
հասցեին ու իրենց գցում սգավոր Եփրատի մեջ: Ես սար-
սափով էի դիտում այդ զարհուրելի տեսարանը, սպասելով,
որ գետեզերքին մոտեցած մայրս էլ կնետվի պղտոր ջրերի
մեջ, մենք էլ կգնանք գետի մոլթ հատակն ու այլևս երբե՞ք-
երբե՞ք դուրս չենք գալ...

Այդ միջոցին, ամուր կառչելով մորս փեշից, ահով
շշնջացի.

— Մամա, մենք ջուրը չենք նետվի, մենք պապայի մոտ
կգնանք, չէ՞, չէ՞, մամա'...

Արցունքներ երևացին մորս աչքերին, գրկելով ինձ, նա

ջերմորեն համբուրեց, խոր խանդաղատանքով նայեց իմ
երկյուղով լի աչքերի մեջ և մրմնջաց.

— Չէ՛, անուշի՛կս, մի վախենա, մենք գետը չենք
նետվի. մենք դեռ կշարունակենք մեր Գողգոթան... Բայց
այլևս մի խոսիր պապայի մասին: Այլևս դու հայր չունես...

— Հապա ո՞ւր է պապան, ո՞ւր է գնացել...

— Նրան սպանեցին թուրքերը:

— Իսկ պապիկի՞ն, տատիկի՞ն:

— Բոլորին էլ սպանեցին թուրքերը, բալիկս:

— Ինչպի՞սի թուրքերը:

— Ինչպիսին սրանք են,—ցածրաձայն պատասխանեց
մայրս, ցույց տալով քարավանն ուղեկցող թուրքերին: Եվ իմ
երևակայության մեջ հետագա տարիներին ևս նրանք պատ-
կերանում էին որպես հրեշներ, որոնք սպանում են հայրե-
րին ու պապերին, տատիկներին ու փոքրիկ երեխաներին...

— Իսկ պապայի վրա՞ էլ հող լցրին,—սարսափով
հարցրի ես:

Մայրս չպատասխանեց: Մեր հետևից հայհոյում էին,
սպառնում, ծեծում ու առաջ շտապեցնում:

— Բայց ինչո՞ւ պապային սպանեցին,—մանկական
հետաքրքրությամբ շարունակեցի իմ հարցումիորձը:

— Որովհետև պապան հայ էր:

— Իսկ տատիկի՞ն ու պապիկի՞ն:

— Նրանք էլ հայ էին...

Ես, իհարկե, չհասկացա մորս խոսքերի իմաստը, բայց
ինձ մոտ մի զգացում մնաց, որ թե՛ հայրենի տան կործան-
ման և թե՛ հարազատների ոչնչացման միակ պատճառը
«հայ» բառն է:

Մեղ քշում էին արաբական արյունոտ անապատներով՝
դեպի Տեր-էլ-Ջոր կոչվող բնակավայրը—հայ ժողովրդի այդ
մեծ գերեզմանոցը:

Ճանապարհներին հաճախ սոսկումով նայում էի հյուծ-
վածությունից երերացող մորս: Չէ որ ուրիշների նման նա

էլ կարող էր ընկնել գետին, նրա մասին էլ կասեին «մեռել է» և նրա աչքերին էլ հող կածեին...

Մեր հալածական քարավանը, որ քաղցից ու ծարավից կոտորվելով մնացել էր մի քանի հարյուր հոգի միայն, անապատում կանգ առավ գիշերելու: Այդ օրը ես նկատեցի, որ մայրս շափաղանց անհանգիստ էր: Երկյուղը նստել էր նրա աչքերի խորքում:

Մոր նախազգացումն ուժեղ է լինում: Ըստ երևույթին նա գուշակում էր մեծ դժբախտություն և դրա համար էլ ջե՛րմ-ջե՛րմ համբուրում էր մեկ ինձ, մեկ եղբորս՝ Վրթանեսին ու նրան խորհուրդ էր տալիս, որ ուշադիր լինի իմ հանդեպ, ձեռքս միշտ բռնի և ինձանից չբաժանվի:

Ապա դժբախտ մայրս իր մատից հանեց այս մատանին, թելով կախեց վզիցս ու ինձ գրկելով հուզված շնչաց.

— Տե՛ս, անուշիկս, այս մատանին չկորցնե՛ս. մի՛ հանիր վզիցդ և ուրիշներին էլ թույլ մի՛ տա, որ հանեն: Մատանին որ կորցնես, էլ երբե՛ք, երբե՛ք մամային ու Վրթանեսին չես գտնի՛ր...

Այս խոսքերը խոր տազնապ առաջացրին իմ մանկական սրտում. մորս ու եղբորս կորցնելու ահը համակեց ինձ: Ես սկսեցի հաճախ շոշափել մատանին՝ համոզվելու համար, որ նա իր տեղումն է:

Երեկոյան, երբ մթնշաղը տարածվեց խաղաղ ու ամայի գետեզերքի վրա, շորս կողմից հանկարծ լսվեցին կանանց ու երեխաների աղիողորմ ճիչեր: Ու ոչ հեռու, սարսափահար ամբոխի մեջ ես տեսա դաժան դեմքերով տղամարդկանց, որոնք մայրերից բռնությամբ խլում էին երեխաներին ու տանում: Այդ զարհուրելի, սրտաճմլիկ մի տեղարան էր: Այն մայրերը, որոնք դիմադրում էին, վայրենի մարդիկ խփում և սպանում էին տեղնուտեղը: Հենց անմիջապես մոտիկ ես տեսնում էի, որ մի սոսկալի, դահիճի տեսքով մարդ մոր գրկից խլում էր երեխային, որն իր փոքրիկ թաթիկներէ ամբողջ ուժով մոր վզին փաթաթված՝ լաց էր լինում ու աղեկտուր ճչում: Դժբախտ մայրը սարսափից և երեխայի

ցավից խելագարված՝ սկսեց կծուտել դահճի ձեռները: Այդ վայրկյանին շողաց թուրը և մայրը ճեղքված գլխով գետին ընկավ: Ես տեսա, որ մարդասպանն անմիջապես խլեց մայրական արյունով ներկված երեսային...

Եղբորս և իմ ձեռքից բռնած՝ մայրս սկսեց փախչել: Բայց ո՛ւր: Մենք շրջապատված էինք դահճի ավազակներով: Նրանք շուտով ինձ և եղբորս էլ խլեցին ու ես վերջին անգամ գետեղերքից լսեցի մորս հեկեկանքն ու ճիչը, որն անմիջապես կտրվեց...

Ինձ բաժանեցին նաև եղբորիցս...

Բոլանկան մի պահ ընդհատեց իր պատմությունը. դժվարությամբ էր շնչում և դողում էր ամբողջ մարմնով: Խոշորացած թուխ աչքերը նայում էին հեռուները...

Նա մտապատկերում էր կոշմարային այն օրերը, երբ ինքը մեն-մենակ ու անպաշտպան մնաց աշխարհում...

— Ես աչքերս բացեցի արաբական մի անդամակ ընտանիքում, — շարունակեց Բոլանկան, — իմ անունը Ֆերիդե դրին և ես աստիճանաբար վարժվեցի այդ անվանը, մոռանալով իմ իսկական անունը: Ամբողջ անցյալն ինձ թվում էր մի սոսկալի երազ: Առաջին շրջանում հաճախ զարթնում էի ճշալով ու լաց լինելով, մինչև լուսաբաց չէի քնում. դրա համար ջղայնանում ու վիրավորական խոսքեր էին ասում իմ նոր «ծնողները»:

Առաջին իսկ օրը, ծերունի արաբը ցանկացավ ինձանից խլել վզիցս կախված ոսկե մատանին, բայց ես սկսեցի այնպես աղեկատուր լաց լինել, որ սնահավատ արաբ «ծնողներս» այն թողեցին ինձ մոտ, վախենալով, որ եթե մատանին վզիցս հանեն, ես այլևս չեմ ապրի:

Այսպես, արաբական ընտանիքում աստիճանաբար ես մոռացա մայրենի լեզուն, և հասկանում էի միայն արաբերեն: Նրանք արդեն ինձ լծել էին ուժիցս բարձր աշխատանքի — առավոտից մինչև ուշ երեկո զբաղվում էի այծերով, կթում էի, թել էի մանում և միայն գիշերը ուժասպառ անկողին էի ընկնում:

Մի օր էլ—այդ արդեն տասնինը թվին էր,—արաբ հայ-
րըս տուն եկավ ինչ-որ բանից հուզված: Նա շշնջալով խոսեց
կնոջ հետ: Նա լսեցի «էմերիքենի» (ամերիկացի) և «էրմենի»
(հայ) բառերը, բայց ոչինչ չհասկացա:

Այդ պահից ինձ խստորեն արգելեցին տնից դուրս գալ
և մարդկանց աչքին երևալ, իսկ իմ արաբ մայրը՝ Ֆաթման
սկսեց լավ վերաբերվել, համարյա գուրգուրալ ինձ վրա:

Օգտվելով նրա անսովոր բարությունից, ես հարցրի այդ
արգելքի պատճառը: Նա բացատրեց, որ «չարքեր» են երևա-
ցել անասլատում, որոնք փոքրիկ աղջիկներին փախցնում են
ու գոթխք են սանում և որ «ճիների» հեռանալուց հետո՝ ես
նորից ազատ կլինեմ:

Մի առավոտ փարախը մաքրելիս լսեցի օտար մարդ-
կանց ձայներ և իմ արաբ հոր բարձր խոսակցությունը: Ցան-
կապատի հետևից նկատեցի եվրոպական կոստյումներ հա-
գած, լայնեղր, սպիտակ գլխարկներով մի քանի մարդկանց:

Տուն մտնելով, արաբ հայրս Ֆաթմայից պահանջեց ինձ
բերել օտար մարդկանց մոտ: Օտարականները խոսում էին
իրար հետ, ուշադիր ինձ դիտելով: Հետո, նրանցից մեկը
ինձ դիմեց ինչ-որ խոսքերով: Նա չհասկացա նրա խոսքերի
իմաստը, թեև ձայնի մեջ ծանոթ ու հարազատ ինչ-որ բան
զգացի: Գլուխս շարժելով, ես արաբերեն պատասխանեցի,
որ նրան չեմ հասկանում: Հայրս ուրախացած բացականչեց.

— Ասոված վկա, որ Ֆերիդեն իմ հարազատ աղջիկն է.
ի՞նչպես կարող է նա խոսել օտար լեզվով...

Անծանոթ մարդկանցից մեկն արաբերեն լեզվով հարց
տվեց, թե ինչ է իմ անունը: Նա հաստատեցի հորս ասածը:
Վզիցս կախ թելը նկատելով, նա ձեռքը երկարեց վերցնելու:
Նա ճշացի, լաց եղա, կասկածելով, որ նա ուզում է ինձանից
խլել մատանին: Անծանոթ մարդը համբերեց, մինչև ես
հանգստացա, հետո ինձանից խնդրեց ցույց տալ, թե ինչ կա
թելի ծայրին, խոստանալով չվերցնել: Նա հավատացի և
ցույց տվի մատանին: Մարդը կարգաց մատանու ներսի
փորագրությունը և հանկարծ ուրախ ճիչ արձակելով, բարձ-

րաձայն ինչ-որ բան ասաց: Օտարականներից ամենատարի-
քոտը գուրգուրանքով բռնելով ձեռքիցս, շոյեց մազերս և
թարգմանչի միջոցով ասաց, որ մատանու մեջ փորագրված
է իմ ազգանունը, որ ես հայուհի եմ և որ ինձ պիտի տանեն
քաղաք՝ հայ որբերի մոտ:

Ծերուկ արաբն ու կինը քարացած կանգնել էին: Ամեն
ինչ պարզ էր և նրանք այլևս չէին կարող առարկել, ընդդի-
մանալ:

Այսպես, մորս մատանին, ընկեր Դաւնէ, երևան հանեց իմ
ազգանունը, վկայեց իմ հայ լինելը և ես նորից վերադար-
ձա իմ բազմաշարշար մայր ժողովրդի գիրկը...

Հետագայում ես ընկա Պոլսի որբանոցներից մեկը:
Այստեղ հանդիպեցի հազարավոր ինձ նման որբերի, որոնց
ծնողներն ևս սպանվել էին թուրքերի կողմից, ինչպես իմը:
Նրանցից ամեն մեկի կյանքին ծանոթանալը աստիճանաբար
ինձ վերհիշեցրեց անցյալը, իմ մանկությունը, հիշողությանս
մեջ մթադնած սև օրերն ու գաղթը անապատներում, մորս
ողբերգական մահն ու եղբորս կորուստը: Ես նորից զգացի,
թե ինչպե՞ս եղբորս մատները սեղմում էին իմ ձեռքերը, որ-
պեսզի իր խնամքին հանձնված փոքրիկ քրոջը չկորցնի, նո-
րից մշուշի միջից պատկերացավ նրա դեմքը և քունքի վրա-
յի սպին:

Մի անգամ, գրականության դասին, ուսուցչուհին մեզ
հանձնարարեց նյութի ազատ ընտրությամբ շարադրություն
գրել: Ես գրեցի մեծ ջարդի մասին անապատներում, նկարա-
գրեցի մորս մահը, եղբորս կորուստը և հիշեցի մայրական
մատանին, որ ինձ փրկեց ցմահ ստրկությունից արաբների
մոտ:

Հետևյալ դասին ուսուցչուհին բոլորին վերադարձրեց
շարադրության տետրակները, բայց իմը պահեց: Ասաց, որ
այդ դեռ հարկավոր է իրեն:

Մի օր էլ, ուրախ դեմքով դասարան մտնելով, նա ինձ
կանչեց, ասաց, որ մեծ երջանկություն է սպասում ինձ և
ձեռքիցս բռնելով տարավ իր սենյակը: Այնտեղ, աթոռին

նստած էր թխադեմ մի պատանի: Երբ մենք ներս մտանք, նա անմիջապես ոտքի բարձրացավ:

— Չե՞ս ճանաչում սրան, — հարցրեց ուսուցչուհին:

Սիրտս ուժգին տրոփեց: Ես լուռ դիտում էի պատանու քունքի կլոր սպին: Նկատում էի, որ հետզհետե պայծառանում էին նրա աչքերը և նա անզգալաբար ինձ մոտենալով, ուշադիր դիտում էր իմ աջ աջտի փոքրիկ խալը: Հետո, նա արագ քաշեց վզիցս կախ թելը, շուռ տվեց մատանին, որսիկս լույսն ընկնի օղակի միջի փորագրության վրա և... և հանկարծ փաթաթվելով ինձ, արտասուքն աչքերին շնչաց.

— Քո՛ւյրս, իմ փոքրիկ, դժբա՛խտ քո՛ւյրս...

Ուսուցչուհին լաց լինելով, դուրս եկավ սենյակից:

Այսպես, ընկեր Դանե, հինգ տարվա բաժանումից հետո քույր ու եղբայր նորից իրար գտան:

Մինչև ուշ գիշեր մենք զրուցում էինք: Եղբայրս պատմում էր, թե ինչպես ինձանից բաժանվելուց հետո, գիշերն իրեն հաջողվել էր փախչել արաբի ձեռքից և գետեզերքով բավական հեռանալով՝ թաքնվել եղեգնուտների մեջ: Հետեվյալ օրը, երեկոյան, իր թաքստոցից նա ականատես էր եղել զարհուրելի մի տեսարանի: Տեր-էլ-Ջորից սալների մեջ լցնելով գետեզերք էին բերել երկու-երեք տարեկան հարյուրի չափ երեխաներ: Դահիճը կանգնել էր գետեզերքում՝ թուրը ձեռքին և երեխաների գլուխները թրատելով շարտում էր Եփրատի արյունոտ ջրերի մեջ: Նա սոսկումով փախել էր այնտեղից: Բայց ո՞ր կարելի էր փախչել անապատում: Բարեբախտաբար հետևյալ օրը նա հանդիպել էր մի արաբի, որը նրան որդեգրելով, դարձրել էր իր հովիվը: Եղբայրս շատ բան էր հիշում անցյալից — հիշում էր թուրքերի կողմից մոխրակույտի վերածված մեր պապենական օջախը, ոչընչացված մեր հարազատներին, հորս, մորս, պապիկին ու իմ բարի տատիկին...

Հետագայում ես շատ բան լսեցի ու կարդացի մի միլիոն հայերի կոտորածների մասին, իմ ժողովրդի այն մեծ վշտի,

մասին, որը եթե ծխար, ամբողջ աշխարհը ծխով կապտեր։
Եվ ես ատեցի դահիճներին ու բռնակալներին, որոնք ան-
բուժելի վերք էին առաջացրել իմ մանկական հոգում, ատե-
ցի կյանքի թշնամիներին։ Ու իմ սրտում աճեց հայությունը,
հայ ժողովրդի վշտի մեծությամբ... Մայրական սիրուց
զրկված՝ ես ամբողջ հոգով սիրեցի իմ բազմաշարժար, հալա-
ծական ժողովրդին...

Տարիներ անցան, ես ավարտեցի որբանոցային դպրոցը
և եղբորս հետ մեկնեցի Բուլղարիա։ Ես սիրեցի ձեր երկիրն
ու նրա ազատասեր ժողովուրդը, որն անցյալում բախտակից
է եղել հայ ժողովրդին, արյուն է թափել իր հայրենիքն ազա-
տագրելու համար թուրքական լծից։

Քսանշորս թվին եղբայրս մեկնեց այն երկիրը, որի մա-
սին դարեր շարունակ երազել է իմ տանջված ժողովուրդը։
Նա խոստացավ հետադաշում ինձ էլ վերցնել իր մոտ՝ Սո-
վետական Հայաստան։ Սկզբնական շրջանում մենք հաճախ
թղթակցում էինք իրար հետ, մինչև իմ Սոֆիայից մեկնելը։
Հետո... Հետո պայթեց այս պատերազմը։ Եվ ահա, ինչպես
տեսնում եք, ես ձեզ հետ եմ, ընկեր Դանև, ձեզ հետ եմ
որովհետև...

Նա մի վայրկյան կանգ առավ, հայացքը կապտամշուշ
հովտին ու մտասուչ լավելացրեց.

— ...Որովհետև ես հայո՛ւհի եմ...

Նա լռեց։ Խոշոր, սև աչքերը վառվում էին դժգույն դեմ-
քի վրա և դողդողացող ձեռներով անհաջող փորձում էր մատ-
նեմատն անցկացնել ոսկե մատանին...



Քառասունչորս թվի սեպտեմբերի վերջերին, Դիմիտրո-
վի անվան պարտիզանական ջոկատի նախկին հրամանատար
Ստոյան Դանևին զանգահարեցին Բուլղարիայի ժողովրդա-
կան բանակի շտաբից, տեղեկացնելով, որ սովետական մի
հրամանատար ժամագրություն է խնդրում՝ լսելու համար իր
ջոկատի պարտիզանների մասին։

Նշանակված ժամին Դանևի մոտ եկավ հրետանավորի
սերիզ գլխարկով և ուսադիրներով բարձրահասակ, թուխ,
առնական դիմագծերով մի սպա: Ջերմորեն ընդունելով
սպային՝ Դանևը հարցրեց, թե հատկապես ինչի՞ մասին էր
ցանկանում լսել հրետանու ենթագնդապետը:

— Ես ուզում եմ իմանալ, թե ձեր պարտիզանական ջո-
կատում Սոֆիայից կին կա՞ր, ընկեր Դանև, — հարցրեց սպան:

— Սոֆիայի՞ց... կարծես՝ ո՛չ...

Սպա մի վայրկյան պրպտելով իր հիշողությունը, ավե-
լացրեց.

— Թեև իմ դժբախտ Բոյանկային կարելի է Սոֆիայի
քնակիչ համարել. երկար տարիներ նա ապրել է Սոֆիայում:

— Բոյանկա՞... հուսախար կրկնեց զինվորականը, —
իսկ այժմ որտե՞ղ է նա:

— Նա չկա... նա զոհվեց մի արյունալի ճակատամար-
տում:

Ու Դանևը ձեռքը տանելով ծոցագրպանը, որպես նվի-
րական մասունք այնտեղից հանեց մի փոքրիկ, ոսկե մա-
տանի և երկարեց հյուրին:

— Բոյանկայից ինձ հիշատակ մնաց միայն այս մա-
տանին, — հուզված շշնջաց նա:

Սովետական սպան անմիջապես ոտքի բարձրացավ,
համիշտակեց մատանին և աչքից անցկացրեց օղակի միջի
մակադրությունը:

Եվ պարտիզանական ջոկատի նախկին հրամանատար
Ստոյան Դանևը դարձանքով տեսավ, որ ենթագնդապետ
կրթանես Սարաֆյանի աչքերում փայլում էր արտասուքը և
զսպված հեկեկոցը ցնցում էր նրա կոկորդը, նրա ամբողջ
մարմինը:

Հետո, խորհրդության մեջ, լսվեց մի խուլ մրմունջ.

— Քո՛ւյրս, իմ փոքրիկ, իմ դժբա՛խտ քո՛ւյրս...

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Երբ դուռը բացվեց՝ շեմքին երևաց զինվորական մուգ-
կանաչ համազգեստով դեռատի մի կին: Սպայական կար-
միր, արծաթափայլ ուսադիրների վրա ուներ չորս փոքր
սառուղի: Արտակարգ բերկրանքից առկայծում էին թուխ աշ-
քերը և նա ժպտում էր համակող ժպտով:

Բժշկական ծառայության կապիտանը մի ձեռքով բռնել
էր ճամբրուկը, մյուսով՝ փոքրիկ, ոսկեհեր մի աղջկա թա-
թիկը:

Սպիտակած մազերով, կլոր, բարեհամբույր դեմքով
տիկին Հռիփսիկն ու այժամիրուք Համբարձում Եգորիչը՝ ըն-
դառաջ գալով նախասենյակ, ուրախության արցունքներով
դիմավորեցին իրենց միակ աղջկան: Ինչքա՞ն էր փոխվել
Սառուղիկը: Կարծես ավելի դրավիչ էր դարձել զինվորական
համազգեստի մեջ:

Պատերազմի հենց սկզբի ամիսներին, ինստիտուտի
ավարտական կուրսից նա մեկնել էր ռազմաճակատ, աշխատել
սանիտարական գումարտակում և ահա չորս տարվա բացա-
կայությունից հետո, անսպասելիորեն տուն էր վերադառնում:

Անակնկալ երջանկությունից սլայծառացած աչքերով և
սրտի հեշտագին թրթռումով իրար հանդիպեցին նաև Աստ-
ղիկն ու նշանածը՝ ինժեներ Վարդան Այվազյանը, որ հան-
գրատի օրը այցելության էր եկել Աստղիկի ծնողներին:

— Աղջիկ ջան, ինչո՞ւ նախօրոք չէիր տեղեկացնում,
որ կայարան գայինք քեզ դիմավորելու, — գուրգուրանքով
շշնջում էր մայրը՝ արտասուքների միջից:

— Հռիփսի՛կ, աղջիկդ սովորել է գինվորական կյանքի, էլ սրանից հետո ամեն ինչ այսպես հանկարծակի է կատարելու, — ուրախ կատակախոսում էր Համբարձում Եգորիչը՝ գողունի նայելով մեկ Աստղիկին, մեկ՝ Վարդանին:

Օրը կիրակի էր, ամառային շողշողուն մի օր, որ ավելի էր պայծառացնում հողիները:

Սակայն, մայր մտնող արևի ճառագայթերի նման, անմիջապես չքացավ կարոտի սրտահույզ բերկրանքն ու, ասես, մթնշաղվեց լուսավառ սենյակը, երբ փոքրիկ, ոսկեհեր աղջիկը «մա՛մա՛, մա՛մա՛, գրկի՛ր ինձ» — թոթովելով փաթաթվեց Աստղիկի ոտքերին:

Ծնողներն ու ինժեները անխոս դիտում էին Կարմիր Դրոշի և Կարմիր Աստղի շքանշանները Աստղիկի կրծքին:

Ինչպե՛ս թե՛ մա՛մա, մամա՛...

Աստղիկը գրկեց փոքրիկին և ջերմորեն համբուրեց:

— Զանի՛կս, տե՛ս ի՛նչ լավ տեղ բերեց քեզ մաման: Պապիկն ու տատիկը քեզ համար լա՛վ-լա՛վ խաղալիքներ պիտի առնեն, — շնչաց նա՛ գողունի նայելով ծնողներին ու Վարդանին. և սրտին սեղմեց թոթովախոս աղջկա լուսնյակի նման կլոր ու դեղին գլուխը:

Այդ միջոցին կարծես ինչ որ բան ցավադին պոկվեց Վարդանի կրծքի տակ:

«Այ թե ինչու իր գալստյան մասին չէր հայտնել ինձ. հիմա արդեն պարզ է, թե ինչու նամականերիս ուշ-ուշ էր պատասխանում... Այստեղ ավելորդ մարդ եմ նա», — վշտահար մտածեց Վարդանը և ավելի խորը քաշելով գլանակը, ծուխն ուժեղ արձակեց բաց լուսամուտից դուրս:

«Ինչո՛ւ Աստղիկն այդ մասին ոչինչ չէր գրում, գոնե մեզ մի թեթև նախազգուշացներ», — մտածում էին ծնողները՝ իրենց շափազանց անհարմար զգալով Վարդանի մոտ, որին ահա հինգ տարի է համարում էին իրենց հարազատ որդին, իրենց փոքրիկ ընտանիքի հարազատ անդամը:

Փշրվեց Վարդանի կարոտով ու խանդադատանքով լի սիրտը և մի պահ մթաղնեց նրա գիտակցությունը: Ուրեմն

խորտակվե՞ց իր հավատը, իր հույսը: Մի՞թե սերն ալոքա՞ն
խաբուսիկ է, ալոքա՞ն հեղհեղուկ: Մի՞թե Աստղիկը կարող էր
նման թեթևամիտ խաղ խաղալ իր զգացմունքների, իր սրբ-
տի հետ:

Հայացքը լուսամուտից դուրս, Վարդանը երկար վայր-
կյանների անխոս ու մորմոքուն հոգով վերհիշում էր դեռ մո-
տիկ, երջանիկ սիրո հիշատակներով հարուստ անցյալը,
վերհիշում նախապատերազմյան Նրեանի կապույտ երեկո-
ները՝ Զանգվի զովաշունչ, փրփրաբաշ ջրերի մոտ, սպիտա-
կափառ Արարատի դիմաց՝ Նորքի փիրուզյա ալգիների մեջ
Աստղիկի հետ թևանցով զբոսնելը, վերհիշում կոմերիտական
ժողովները, իրենց ջե՛րմ-ջե՛րմ զրույցները, խոստովանները,
վառ երազները: Ինչքա՞ն լավ էր ամեն ինչ, երբ կյանքի ուժով
բարախում էին երիտասարդ սրտերը, երբ ժամերն անցնում
էին թռչունի թևերի վրա և աստղածով գիշերների կախար-
դանքից՝ մոռանում էին իրենց գոյությունն իսկ...

Անցան պատերազմի սպասումներով ու կարոտով լի
տարիները ու ա՛յժմ... Այժմ ահա նա միայնակ կանգնել էր
իր անդրանիկ սիրո խորտակված մակույկի առաջ՝ տխրա-
մած ու շվար...

Ճնշող լռությանը վերջ տալու համար, մայրը ահամա
զանազան հարցեր էր տալիս աղջկան, պատմում էր քաղաքի
նորություններից, տեղեկություններ էր հաղորդում աղջկա
ընկերների և ընկերուհիների մասին, մտքումը դատապար-
տելով Աստղիկի բոլորովին անսպասելի, բոլորովին անթույ-
լատրելի վարմունքը՝ Վարդանի հանդեպ:

Սակայն նրանք խուսափում էին իրենց մտատանջող ու
հուզող խնդրի մասին խոսելուց:

Աշխատում էր ռադիոն: Համերգ էր: Ռադիոկայանը հա-
ղորդում էր մեծ աշուղի կախարդական երգը.

Աշխարհումս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա...
Անմահական ջըրով լեքըն օսկե փընջան իս ինձ ամա...

— Ինչքա՞ն կարոտել էի մեր Մայաթ-Նովային ու Կոմիտասին, — շնչում էր Աստղիկը՝ կրծքին սեղմելով փոքրիկ աղջկա ոսկյա գլուխը:

Հայրը՝ Համբարձում Եգորիչը հազիվ էր թաքցնում իր հոգու տազնապը:

— Հռիփսի՛կ, ժամանակն է այդի իջնելու, — վերջապես խոսեց նա՝ Աստղիկին ու Վարդանին ազատ թողնելու համար:

Ամուսինները երկուսով դուրս եկան սենյակից, աստիճաններից դանդաղորեն իջան տնամերձ այգին ու հոգեխռով վիճակում բազմեցին մեծ թթենու տակ դրված թախտին: Նրանք իրար չէին նայում: Առժամանակ տիրեց ծանր լռություն: Համբարձում Եգորիչը հայացքը հառել էր անորոշ ուղղությամբ և խոր մտորումների մեջ էր ընկել: Արագ-արագ քաշում էր համրիչի խոշոր, սաղաֆե հատիկները: Հետո տիկին Հռիփսիկին դառնալով, նա դայրույթով և հուզումով խառը ձայնով խոսեց.

— Ո՛չ մի դեպքում չեմ կարող ներել Աստղիկին: Հռիփսիկ, ասա՛, ինչպե՛ս կարելի էր դավաճանել Վարդանի նման համեստ, ոսկի տղին. խեղճը հինգ տարի էլ սպասեց... Երբե՛ք չեմ կարող ներել, երբե՛ք...

Չնայած սրտի խորքում իր ամուսնուն համակարծիք էր նաև տիկին Հռիփսիկը, բայց խոսք էր փնտրում Աստղիկին առերես արդարացնելու՝ իր ամուսնու առաջ:

— Համբարձո՛ւմ, — խոսեց նա ընկճված, վշտահար ձայնով, — ֆրոնտ է, չորս տարի տնից-տեղից հեռու, ո՛վ դիտելն է պատահել աղջկան...

Պատասխան չստանալով՝ տիկին Հռիփսիկը մի քանի վայրկյան լուռ դիտեց ամուսնու մռայլված դեմքը, ապա քնքշություն ու սեր արտահայտող մտերիմ ձայնով ավելացրեց.

— Անպիտանն էլ այնքան գեղեցի՛կն է — ասես կուկլալինի... Թմբկիկ, կլորիկ լուսնյակ, երկնակապույտ աչքեր...

Հայրն անպայման ուռա կլինի,—ավելի ցածրացրեց նա իր ձայնը:

Նույն կարծիքին էր նաև Համբարձում Եփորիշը, բայց այդ մասին ոչինչ չխոսեց: Նա հենվել էր թախտի վրա դրված մեծ, կլոր բարձին և մռայլ մտքերի մեջ ընկղմած ծխում էր:

«Երբե՛ք չեմ կարող ներել, երբե՛ք»,—կրկնում էր նա մտքումը:



— Իսկ այդ ինչպե՛ս պատահեց,—վերջապես խոսեց Վարդանը՝ հայացքը հառած փոքրիկ աղջկան, որ այդ բուսկին սենյակի մի անկյունում նստած՝ խաղում էր տիկնիկի հետ:

Աստղիկը իր աթոռը ավելի առաջ քաշեց լուսամուտի մոտ՝ Վարդանի անմիջապես կողքը և տրամուրախ, գրավիշ աչքերը սևեռելով նրա վրա, հանգիստ պատասխանեց.

— Այդ երկար պատմությունն է, Վարդան, այսօր ժամանակը չէ...

Վարդանն իր մռայլ հայացքը կենտրոնացրեց Աստղիկի դեմքին: Վիրավորված ինքնասիրությամբ, այլևս չկարողանալով տիրապետել հոգին փոթորկող զգացումներին, նա շարունակեց.

— Դո՛ւք, ընկեր Աստղիկ, պարտավոր էիք այդ մասին պատմել ոչ թե այսօր, այլ հենց սկզբից՝ մի քանի տարի առաջ... Այդքան աղնվություն ես սպասում էի ձեզանից...

Դժգույն դեմքին հուզումից պղտորվել էին թուխ աչքերը, սև հոնքերը կիտվել էին կռակերի վրա: Նա ուզում էր ազատ արձակել սիրտը ճմլող վիշտը, վիրավորական խոսք ասել Աստղիկին ու ազատ շունչ քաշել: Բայց դեռ ազատություն չէր գտնում: Ամեն ինչ խանգարում էր Աստղիկի հանդրատությունը, նրա տրամաժպիտ աչքերը, որոնք տակավին սեր ու երջանկություն էին խոստանում...

— Ուրեմն ինձ մնում է ձեզ հրաժեշտ տալ՝ առանց բա-

ցատրություն իսկ լսելով, — զուտ ավելացրեց Վարդանը:

Աստղիկը խուզարկու հայացքով նայեց Վարդանի աչքերի խորքը և նրա մեղմ, երաժշտական ձայնը թրթռաց.

— Վարդան ջան, մի քանի տարի առաջ այդ մասին ես չէի կարող պատմել, իսկ հիմա՝ կարող եմ, քանի որ դու շտապում ես. միայն թույլ տուր նախ մի հարց պարզել...

Նա կանգ առավ: Մի պահ սենյակում տիրեց ծանր լռություն:

Վարդանը նկատեց, որ տագնապով էին լցվել դեռատի բժշկուհու աչքերը:

— Ես ուզում եմ ասել... Ես ուզում եմ իմանալ, — շշուրջաց նա՝ երկյուղած հայացքը խոնարհելով դետնին, — համաձայն ես Ռիմոշկայիս հայր դառնալ, թե՞...

Ու կտրվեց նրա ձայնը:

Վարդանը նկատեց, որ խիստ դժգունել էր Աստղիկը:

— Թե, — վերջապես հուզումը զսպելով շարունակեց նա, — հրաժարվել ինձանից ես...

Հոգու տագնապը զսպելով՝ Վարդանը լսում էր Աստղիկին: «Մերեմն երեխայի հայրը կամ սպանվել է ուղղամահատում, կամ բաժանվել Աստղիկից», — մտածեց նա և մեղմանալով ցածրաձայն պատասխանեց.

— Նախ և առաջ պետք է լսել երեխայի ծնողների պատմությունը...

Աստղիկը տրտում հայացքով նայեց Վարդանի շփոթ ու մոայլ դեմքին, աչքերին, որոնք խոր վիշտ էին արտահայտում, միջպահ դիտեց այդու թարմ ու փարթամ սաղարթը, Երևանյան խաղաղ երեկոն, որի մեջ հալչում էին մեղմ, հոգեթով սիրերդի տրամանուշ հնչյունները... Եվ այդ միջոցին Վարդանը նկատեց, որ դողդողաց Աստղիկը ու նա մետաքսե փոքրիկ թաշկինակը հագնելով մոտեցրեց բերանը՝ հեկեկոցը դրա մեջ խեղդելու համար...

Ամբողջ մարմնով ցնցվում էր:

Վարդանը սարսուռ դդաց. «Ինձ լքելու և ուրիշից դժբախտանալու վիշտը տանջում է նրան», — մտածեց և այդ

բուպեին նրա սիրտը լցվեց գութով, անսահման գութով ու ներողամտությամբ... Ներե՛լ ամե՛ն ինչ... ամե՛ն ինչ ներե՛լ...

Ու իր լայն ափերի մեջ վերցնելով Աստղիկի փոքրիկ, ջերմիկ ձեռքերը, շունչը նրա շնչին՝ շշնջաց.

— Հանգստացի՛ր, ջանի՛կս, հանգստացի՛ր, աշխարհում բոլորն են թույլ տալիս սխալներ...

Այդ միջոցին, հանկարծ բարձրաձայն հեկեկաց Աստղիկը: Ու քիչ անց, նրա սրտի խորքերից լսվեց ողբաձայն մի մրմունջ.

— Ռիմոշկա սո՛րբ է, Վարդան ջան... Մի ուռմբով սպանվեցին Լյուբան ու Բորիսը...

Վարդանը դողահար, սեղմ գրկել էր Աստղիկին ու շէր կարողանում զսպել իր արցունքները: Հետո, թողնելով նրան, գրկեց փոքրիկ, ոսկեհեր աղջկան...

Ռիմոշկան իր սպիտակ, փափուկ թաթիկներով խաղում էր Վարդանի լայն ճակատից կախ ընկած մազերի սև փնջի հետ և ուրախ թոթովում:

Այդ վայրկյանին քնքշանքով ու սիրով լի երկու հայացքներ իրար հանդիպեցին:

Վարդանն ու Աստղիկը երջանիկ ժպտում էին արցունքների միջից...

— Պապային համբուրի՛ր, Ռիմոշկա՛, ջանի՛կս, համբուրի՛ր պապային, — խանդավառտանքով շշնջում էր Վարդանը:

Մ Ա Յ Ր Ը

Վերջին նամակը ստացվել էր Կիևից: Թեև եռանկյունի ծալված փոքրիկ թղթի վրա կար միայն դաշտային փոստի ոչինչ շասող համարը, սակայն Թագուհի մայրիկն ու հարսը՝ Անահիտը գիտեին, որ Անդրանիկը պաշտպանում է Կիևը: Բեսարաբիայից մինչև Կիև նրա անցած ռազմական ճանապարհը հայտնի էր տնեցիներին, քանի որ նամակներում նա պայմանական գրում էր. «Այսօր մեր Անդրանիկին անակընկալ կերպով հանդիպեցի Կորոստեն քաղաքում, իրեն շատ լավ էր զգում». կամ «Այսօր Թագուհի մայրիկի Անդրանիկին տեսա ժիտոմիրում»: Իսկ վերջին նամակում գրել էր. «Երեկ Անդրանիկին տեսա Կիևում, ձեզ ջերմորեն բարևում էր»:

Թագուհի մայրիկը սրտի դողով էր հետևում որդու նամակներին: Ռազմաճակատից ստացված այդ եռանկյունի թղթերից հասկանում էր, որ դրուժյունը շափազանց ծանր է՝ թշնամին հետզհետե առաջ է շարժվում և հասել է Կիևի մատույցներին:

Դաժան մարտերի այդ օրերին, մի երեկո, կենտրոնական թերթի նոր համարը ձեռքին, Անահիտը հեռվով ներս ընկավ սենյակ և հուզումից արցունքակալած աչքերով փարվեց մայրիկին: Կարմրել էր դեմքը և վառվում էին թուխ աչքերը: Մի պահ նա չէր կարողանում խոսել:

— Մա՛մ, մա՛մ, ուրախ լուր Անդրանիկից, — վերջապես շշնջաց նա՝ արտասուքների միջից ժպտալով: Ու դողդաջուն ձեռներով շտապ բացելով թերթի առաջին էջը՝ կարդաց կառավարական որոշումը. «Գնդացրային ջոկի հրամանատար,

գվարդիայի ավադ սերժանտ Անդրանիկ Դեմիրճյանին պարգևատրել է նրանի շքանշանով»:

Այս բերկրալի լուրից հետո անցան ամիսներ, բայց Անդրանիկից այլևս նամակ չստացվեց: Նամակ չստացվեց նաև կոլտնտեսության պարտիական կազմակերպության նախկին քարտուղար Արամ Հակոբյանից, որն Անդրանիկի հետ միասին գտնվում էր միևնույն դնդապրային վաշտում:

Մտահոգված էր ամբողջ ավանը:



Դարնանամուտի մի երեկո, գործկոմի ավտոմեքենան կանգ առավ ավանի փոքրիկ հրապարակում, բացվեց մեքենայի դռնակը և դանդաղորեն դուրս եկավ մի կարմիրբանակային ու հենակների օգնությամբ քայլեց փողոցով:

— Արամն է, Անուշենց Արամն է, — լսվեցին կանացի ուրախ բացականչություններ:

Հենակները թևատակին, զինվորական տոպրակը և մի մեծ, ոլորուն կապոց ուսին, նա դանդաղ առաջանում էր:

Կիևի պաշտպանության մարտերում ծանր վիրավորվել էր ոտքից: Միջին Ասիայի զինվորական հիվանդանոցներից մեկում բուժվելով, ահա վերադառնում էր տուն՝ որպես հաշմանդամ:

Թագուհի մայրիկն ու Անահիտը շտապեցին նրա մոտ: Ցանկանում էին որևէ լուր իմանալ Անդրանիկի մասին:

Նրանք հետաքրքրվեցին Արամի առողջությամբ, վիրավորվելու հանգամանքներով, ռազմաճակատի դրությունով, ավանից ռազմաճակատ մեկնած բազմաթիվ ծանոթների վիճակով: Բայց ոչ մայրիկը, և ոչ էլ հարսը չկարողացան որևէ հարց տալ Անդրանիկի մասին: Սպասում էին, որ Արամն ինքը խոսի, պատմի Անդրանիկի կյանքից, իսկ նա՝ չգիտեալինչու, համառորեն լռում էր:

Այդ միջոցին Արամի կինը ցանկացավ ամուսնու կողքից վերցնել ոլորուն կապոցը և բաց անել: Արամը շտապ երկարեց ձեռքն ու այն պահեց տագնապով:

— Թող մնա՛, — ասաց նա, շփոթ նայելով Թագուհի մայրիկին ու հարսին:

— Իսկ ի՞նչ կա մեջը, — հետաքրքրվեց կինը:

— Ոչի՛նչ... զինվորական մեծ քարտեզ է, — ավելացրեց նա՝ շանաչով թաքցնել իր հոգու տագնապը:

— Ռազմական գաղտնի՞ք, — ժպտաց կինը:

Սպառվում էր Թադուհի մայրիկի համբերությունը: Ինչու իր որդու մասին ոչինչ չէր խոսվում:

— Արամ ջան, Անդրանիկից ոչինչ չե՛ս պատմում, — վերջապես խոսեց Թադուհի մայրիկը:

Նրա ձայնի մեջ կար և՛ երկյուղ, և՛ տագնապ:

Արամը նախօրոք պատրաստվել էր այդ հարցը լսելու, բայց չգիտես ինչո՞ւ նրան թվաց, թե մայրիկի հարցը բոլորովին անակնկալ էր:

Դեռ նոր ապաքինված վիրավորի դժգույն դեմքին շարժվեցին կապտավուն շրթունքները:

— Մայրիկ, — ասաց նա, — պատերազմի հենց սկզբից մինչև կիևի պաշտպանությունը Անդրանիկի հետ միասին էինք: Կիևում ես վիրավորվեցի ու մենք իրար կորցրինք:

...Այդ օրերին ավանում շշուկներ տարածվեցին, որ Անդրանիկը զոհվել է: Բայց ոչոք Թադուհի մայրիկին այդ մասին հարցուսիրձ չարեց: Կարիք չկար, որ նրա սրտում կասկածներ առաջանային...

Արամի վերադառնալուց մի քանի օր հետո Թադուհի մայրիկը ներկայացավ կոլտնտեսության վարչության նախագահ Տիգրան Աղաջանյանին:

Գրասենյակում կոլտնտեսականները մի կողմ քաշվեցին, նրան հարգանքով ճանապարհ տվեցին, իսկ նախագահն իր կողքին տեղ բացեց և բամբ ձայնի մեջ մեղմություն ու քնքշանք մտցնելով հարցրեց.

— Խեր լինի՛, մայրի՛կ:

Թադուհի մայրիկը խուզարկու հայացք պտտեցրեց գրասենյակում հավաքված մարդկանց վրա, ուղղվեց, ապա նախագահին դառնալով.

— Եկել եմ, որդի՛, որ ինձ աշխատանքի ուղարկես:

Նրկարատե հիվանդությունից դեռ նոր էր վեր կացել նա և կարիք էր զգում կազդուրվելու: Դրա համար ուներ նյութական հնարավորություններ: Ընտանիքը մեծ չէր—ինքը, հարսը և թոռը, որ ծնվել էր Անդրանիկի զորակոչվելուց միայն երկու օր առաջ: Հարսը տասնամյակում աշխատում էր որպես ուսուցչուհի: Բայց ինչո՞ւ Թագուհի մայրիկը շտապում էր աշխատանքի:

Այս մտորումներով Աղաջանյանը հարց տվեց.

— Ի՞նչ աշխատանքի, մայրիկ:

— Ինչ աշխատանքի՞... Աշխատանքի բրիգադում:

— Ո՞ր բրիգադում:

Թագուհի մայրիկին տարօրինակ թվաց նախագահի այդ հարցը: Մի՞թե չգիտե որ բրիգադում:

Նա բազմախորհուրդ ու հարցական նայեց Աղաջանյանին, ապա՝

— Անդրանիկիս բրիգադում, — նկատելիորեն դողդողացին նրա շրթունքները:

Այդպես էին անվանում այգեգործական առաջին բրիգադը, որի բրիգադիրը երեք տարի շարունակ եղել էր Անդրանիկը:

Աղաջանյանն ու Արամը ջանացին Թագուհի մայրիկին համոզել, որ այգեգործական բրիգադում աշխատանքը ծանր կլինի, նրա հիվանդությունից նոր վեր կենալը պատճառաբանելով՝ ավելի թեթև գործ առաջարկեցին պահեստում, բայց մայրիկն իր որոշման մեջ մնաց անդրդվելի:

— Այգումն եմ աշխատելու, — պնդեց նա:

Հաջորդ օրը, լուսաբացին, երբ Կառավարության անդամ Թագուհի մայրիկը երևաց Անդրանիկի բրիգադում, կոլտընտեսուհիները խանդաղատանքով ու ջերմությամբ շրջապատեցին նրան:

Հինգ տարվա ընդմիջումից հետո մայրիկի բաժը նորից խրվեց հողի մեջ, այն հողի, որի վրա արդեն կանաչ թուփ էին կազմել Անդրանիկի տնկած վազերը:

Նրանք փափկացնում էին որթատունկերի շուրջի հողը և առու էին հանում՝ այգին ջրելու համար:

Բոլորի ուշադրությունը Թագունի մայրիկի վրա էր: Նա աշխատում էր անխոնջ՝ երիտասարդական եռանդով:

— Կարծես ջահել աղջիկ լինի, — նրան դիտելով ասում էր Հեղնար քույրիկը:

— Աշխատանքով վշտից վրեժ է լուծում, — ավելացնում էր մեկ ուրիշը:

Եվ ամբողջ բրիգադը հիշում էր հաղթանդամ ու թխու-
թյան մեջ գեղեցիկ Անդրանիկին:

Ուշ երեկոյան, երբ կապույտ մշուշը սկսեց թանձրա-
նալ հովտի և ավանի վրա, մայրիկը տուն վերադարձավ հոգ-
նած, բայց ինքնագոհ ու թեթևացած հոգով...

Անահիտը գրասեղանին հենած՝ վառ կանաչ լուսամփո-
փի առաջ՝ ուղղում էր աշակերտների տետրակները, թոռնի-
կը քաղցր քնել էր իր փոքրիկ օրորոցի մեջ:

Թագունի մայրիկը մի պահ գուրգուրալի հայացքով դի-
տեց իր «մանչուկի» պայծառ, լուսնկա դեմքը և երջանկու-
թյամբ լիացավ սիրտը:



Անցնում էին դաշտային եռուն աշխատանքի օրերն ու
շաբաթները: Մայրիկը սեւացել ու խիստ նիհարել էր:

— Մայրիկ, տես ի՞նչ օրի ես ընկել, այնքան շեն աշ-
խատի, — մի երեկո պաղատեց վշտահար հարսը, երբ մայ-
րիկն ընդհատելով մարտիկների համար բրդյա գուլպա գոր-
ծելը՝ շոյում էր իր ծնկներին նստած թխաշյա թոռնիկի
գանգրահեր գլուխը:

Թագունի մայրիկը բազմախորհուրդ նայեց հարսի սևով
երիզված աչքերին, որոնք մտատանջություն ու վիշտ էին
արտահայտում և մեղմ ձայնով խոսեց.

— Աղջիկս, մի մտածի, ոսկորը որ սաղ լինի, միսը
միշտ էլ կլինի...

Հարսը լուռ էր: Նրա կարեկից հայացքը դիտելով, մայրիկն ավելացրեց.

— Այժմ, աղջիկս, մեր աշխատանքով թույլ չպետք է տանք, որ թշնամին ջարդի մեր ոսկորները...

Կուտնտեսուհիների հոգատար շրջապատն ավելի էր քաղմապատկում Թագուհի մայրիկի աշխատանքային եռանդը:

...Հուլիսյան մի երեկո, աշխատանքից վերադառնալիս, Թագուհի մայրիկը մտախոհ դիտում էր արտը, ուր իրիկվա դովից ակեկոծվում էին մայրամուտից ծիրանավորված ցորենի հասկերը: Արտի մի ծայրին երևում էին սպիտակ գլխաշորերով կուտնտեսական կանայք, աղջիկներ ու պատանիներ, որոնք դլխահակ, իրենց աջ ձեռքով կիսաշրջան էին կատարում, մերթ ընդ մերթ շողացնելով մանգաղներն ու դերանդիները:

«Արտերը կծղում են, իսկ հունձը դանդաղ է առաջ գնում», — մտածեց Թագուհի մայրիկը՝ աչքով շափելով ցորենի ծիւղն ծովը:

Բացառապես կանանցից կազմված դաշտավարական բրիգադան, որ գերակատարել էր ցանքի պլանը, այժմ չէր հասցնում առատ բերքը ժամանակին հնձելը, թեև երեք օր է ինչ գիշերը լուսացնում էին դաշտում:

Մթությունը հետզհետե ավելի առատորեն էր մաղվում դաշտավայրի վրա, երբ նրանք մոտեցան բարձրավանդակում դտնվող նորաշեն ավանի երկհարկանի, կանաչ պարտեզներով շրջապատված տներին:

— Աղջկերք, — դարձավ Թագուհի մայրիկը բրիգադի առաջնորդին, — երեք ժամից հետո մանգաղներն ու դերանդիները վերցրած կհավաքվեք աղբյուրի մոտ:

Թուրը հասկացան մայրիկի նպատակը:



Երբ Թագուհի մայրիկը տուն մտավ, Անահիտը երեխային վաղուց բերել էր մանկամսուրից, կերակրել ու պառ-

կեցրել փոքրիկ անկողնում: Թոռնիկը լուսե, սպիտակ թա-
թիկները վերմակից դուրս պարզած՝ մուշ-մուշ քնել էր: Եր-
բեմն, ինչպես զեփյուռը ծաղիկների վրա, մի թեթև, դուրե-
կան ժպիտ էր խաղում նրա փոքրիկ, կեռաս շուրթերին ու
թշիկներին:

Թագուհի մայրիկը մի պահ լիացած հոգով դիտեց իր
«մանչուկին», համբուրեց նրա փափլիկ թաթիկներն ու թշեկ-
ները և թեթևացած հոգով շտապեց դեպի դռմ:

Այնտեղ, լուսավոր գոմում նրան ընդառաջեց սպիտա-
կաճակատ շեկ հորթուկը, որ պոչը վեր պահած, շարաճճի
դառան նման ոստոստելով եկավ և կանգնեց ուղիղ մայրիկի
առաջ: Նա կարոտել էր: Ոստումներից թե հրճվանքից լայ-
նացել էին նրա լորձունքոտ, մուգ կապույտ պնչածակերը:
Դուրս հանելով փշոտ լեզուն, նա սկսեց լիզել մայրիկի ձեռ-
ները: Ինչ-որ դուրեկան զգացում առաջացրեց այդ: Թագուհի
մայրիկը գուրգուրանքով նայեց հորթի խոշոր ու վճիտ աչ-
քերին, թախծածոր աչքերին ու սկսեց խոսել նրա հետ: Հոր-
թը ասես հասկացավ Թագուհի մայրիկի կարոտալի, հոգե-
բուխ խոսքերը, նրա թաքուն վիշտը: Ականջները խլշած, նա
ուշադիր լսում էր մայրիկին:

Թագուհի մայրիկը շոյեց նրա գլուխը և սեղմեց կրծքին.
հետո կեր դրեց առաջը, մաքրեց տեղ-տեղ ընկած թարմ
աղբն ու դուրս եկավ:

Մայրիկի շուտ վերադառնալուց հարսն անախակալի
եկավ ու շփոթվեց: Անդրանիկի նկարը նրա ձեռքին էր և
աչքերը լճացել էին: Նա անմիջապես ծոցը դրեց նկարը,
առաջացավ դեպի գրապահարանը և սկսեց ինչ-որ գիրք
փնտրել: Մայրիկն ասե՛ք չնկատեց հարսի հուզմունքը և
մահճակալի վրա երկարելով, ասաց.

— Անահի՛տ, աղջի՛կս, երկու ժամից հետո ինձ ձայն
կտաս. ջրափի արտերն ենք գնալու՝ հնձի:

Անահիտը ոչինչ չպատասխանեց, վախեցավ, որ ձայնը
կմատնի իր հուզումը:

Հազիվ մի ժամ էր քնել Թագուհի մայրիկը, երբ ներս

մտան կողտնտեսության նախագահն ու հաշվապահը: Շորերը հաղին, անկողնի վրա պառկած տեսնելով մայրիկին՝ Տիգրանն ու Արամը անհանգստացան:

— Մայրի՛կ, հոմ քեզ վատ չես դդում, — հետաքրքրվեցին նրանք:

— Չէ՛, զավակներս, մի քիչ հոգնել էի, այսպես շորերով պառկեցի, — հանգստացրեց նա հյուրերին. հետո զննական հայացքով նայելով նրանց դեմքին, մեկուսի հարցրեց.

— Խեր լինի ձեր գալը:

— Խեր է, մայրի՛կ, — պատասխանեց նախագահը:

Անորոշ բերկրանքից թփրտաց Թադուհի մայրիկի սիրտը: «Գուցե Անդրանիկիցս լավ լուր կա, դրա համար էլ գիշերով շտապել են մոտս: Շատ հավանական է: Չէ՞ որ Մանուշակի ամուսնու մասին նույնիսկ «սև թուղթ» ստացվելուց հետո նամակ էր եկել, որ ողջ-առողջ է», — կայծակեց մայրիկի մտքում:

Էլեկտրական ուժեղ լույսով լուսավորված սենյակում լռություն տիրեց. մարդկային խոսակցությանն առժամանակ փոխարինեց ժամացույցի մինչ այդ չսվող թիկ-թակը, որ մայրիկի մտքում միշտ կրկնվում էր՝ «Ան-դրա՛նի՛կ, Ան-դրա՛նի՛կ...»:

Աղաջանյանի հայացքը սևեռվեց սենյակի անկյունում դրված հարուստ դրապահարանին, Անդրանիկի դրապահարանին, հիշեց այն օրերը, երբ նրա հետ միասին սովորում էին Երևանի Կոմհամալսարանում: Ինչքա՛ն էր Անդրանիկը սիրում գիրքը:

Հետո հայացքները կենտրոնացան դրասեղանին, որի վրա, կանաչ լուսամփոփի կողքին դրված էր վառ կարմիր տուփով պատեֆոնը:

Թադուհի մայրիկն անհամբեր էր դարձել, նրան թվում էր, որ հյուրերը երկար ժամանակ է ինչ չէին խոսում:

Աղաջանյանը դանդաղ փաթաթեց ծխախոտը, ուժբաձև, փոքրիկ հրահանով վառեց այն և ծուխն ուժեղ արձակելով խոսեց.

— Մայրիկ, դու էն ասա, ո՞նց է թող է՛. դու չ տղա է
չինելու հա՛, դու լո՛ւմ... Իսկական հոր պատկերը.— նա մո-
ռեցավ օրորոցին:

«Սա նախաբանն է» — մտածեց մայրիկը:

Պատասխան չստանալով Աղաջանյանն ավելացրեց.

— Կգա՛ Անդրանիկը, մայրի՛կ, մի լավ քեֆ կանենք
նրա տնկած այգում, դու չ տղին հերոսի անուն կդնենք...
Կնքահայրն էլ ես եմ լինելու հա՛... Թամադան էլ ե՛ս... պա-
րոզն էլ ե՛ս...

«Սրա լեզվի ծայրին անպայման մի բան կա», — նորից
անցավ Թագուհի մայրիկի մտքով և նա հուսալից շշնջաց.

— Տա՛ աստված:

Բաց լուսամուտից, խաղաղության մեջ, լավում էր առ-
վակի դուրեկան քչքչոցը:

Արամը նայում էր դուրս: Լիալուսնի տակ փայլվում
էին առուն եզերող սլացիկ բարդիների արծաթ տերևները և
ուրվագծվում էր մենավոր արագիլի սիլուետը, որ կանգնել էր
բարդու գագաթին իր ծղոտե բնի մեջ:

— Մայրի՛կ, քեզ մոտ մի խնդրով ենք եկել, — վերջա-
պես խոսեց Աղաջանյանը:

Խնդրո՞ւմ: Ուրեմն այդպե՛ս: Ինքը սխալվե՛լ էր:

— Ի՞նչ խնդրով, Տիգրա՛ն, — արդեն թուլացած հարցրեց
հուսախաբ մայրիկը:

— Քեզ ուզում ենք բրիգադիր դարձնել, — ասաց նա՝
աչքի տակով Արամին նայելով:

Թագուհի մայրիկն անհանգիստ շարժվեց տեղում, հուզ-
վեց: Հայացքը բաց լուսամուտից դուրս՝ մի պահ չէր խոսում:

Երեքով երկար սպասում էին Թագուհի մայրիկի պա-
տասխանին: Իսկ նա դանդաղում էր:

— Շնորհակալ եմ, Տիգրան ջան, — վերջապես խոսեց
նա, — շա՛տ շնորհակալ եմ, բայց այդ իմ գործը չէ. ես շար-
քային աշխատող եմ, ջահելներից նշանակեք բրիգադիր:

Նվ մայրիկը նորից լուսամուտից դուրս հանեց հա-
յացքը:

Լեռներից փշուղ զոլից օրորվում էին Անդրանիկի տնկած
քարդինների սուր դադաթները: Ամեն ինչ հիշեցնում էր Անդ-
րանիկին, ամեն ինչ...

Դրսից՝ խճուղու կողմից մի պահ լսվեց հեռացող ավտո-
մեքենայի խուլ ձայնը և նորից լռություն տիրեց սե-
նյակում:

— Թագուհի մայրիկ, լավ չես մտածում, չէ՛, լավ չես
մտածում... Դու չպետք է մերժես Տիգրանի առաջարկը, —
լռություներ խղելով խորախորհուրդ ավելացրեց պարտկադ-
մակերպության քարտուղար Արամը:

Թագուհի մայրիկը խորապես ազդվեց Արամի ասած
բառերից: Նա դժգույն էր, արձանացած, հայացքը՝ մի կետի:

Այնտեղ, հայացքի դեմը ասես Անդրանիկն էր կանգնել,
իր որդին ու իրեն էր նայում՝ հրապուրիչ ժպիտը սև, առկա-
ծուն աչքերին... Կարծես նա ասում էր.

— Մայրիկ, այդ ի՛մ բրիգադն է, ի՛մ հարազատ բրի-
գադը...

Գոմից լսվեց հորթի կարոտալի, աղերսող բառաչը:

Հուզվել էին բոլորն էլ: Նրանք հասկանում էին, որ Թա-
գուհի մայրիկի լռությունն այս անգամ համաձայնության
լռություն էր:

— Վաղվանից գրիր Թագուհի մայրիկի բրիգադը, — ոտքի
ելնելով Արամին կիսաձայն կարգադրեց Աղաջանյանը:

— Բրիգադի անունը չփոխե՛լ, — դողդողաց Թագուհի
մայրիկի ձայնը, երբ հյուրերը սենյակից դուրս էին գալիս:
Հարսը ձեռքը ավելի պինդ սեղմեց կրծքին...



Գիշերվա ժամը տասներկուսին կանայք ձանապարհ ըն-
կան դեպի արտերը: Բարձրադիր ավանից, այգիների միջով
նրանք ներքև էին իջնում: Բոլորի առաջից գերանդին ունին

տիրական քայլում էր բարձրահասակ, սպիտակած մազերով, վեհատեսք Թագուհի մայրիկը: Լիալուսնի շողերի տակ փայլփրլում էին կանանց գլխավերևում կիսաշրջան կազմած գերանդինները:

Կաթնամշուշով ողողված մեծ հովտում ոչ մի լույս չէր երևում: Այսպես չէր առաջ, նախքան պատերազմը: Դաշտավայրի արևելյան կողմը գիշերը վառ շողշողում էին մայրաքաղաքի կրակները, դաշտավայրի դանազան մասերում պրլպրլում էին լույսերը, կախարդական լույսերը, որ անհունի բերկրանքով էին լցնում հողինները: Այժմ լուսաքողարկում էր: Պատերազմը խավարեցրել էր այս հեռավոր հովտի լույսերը ևս: Միայն խո՜ր-խո՜ր երկնակամարում վառ թարթում էին աստղերը և թվում էր, որ մայրաքաղաքի ու մեծ հովտի լույսերը ժամանակավորապես փոխադրվել են այնտեղ և սպասում են պատերազմի վախճանին՝ խաղաղ դաշտավայրի վրա նորից անձրևելու համար...

Հեռվում, բարձր երկնակամարում, տիրական երևում էր բիբլիական լեռան սիլուետը...

Գիշերվա դովից առույգացած, աշխույժ զրույցով շուտով տեղ հասան հնձվոր կանայք: Դրանց թիվն ավելի շատ էր, քան այգեգործական բրիգադինը: Շատերն իրենց հետ արտ էին բերել ընտանիքի ուրիշ անդամների: Այդ խոռապես հուզել էր մայրիկին:

Աշխատանքի անցնելուց առաջ Թագուհի մայրիկը միայն մի խոսք ասաց.

— Աղջկե՛րք, հարսնե՛ր, քշտե՛ք թևներդ, այս կտոր արտը մինչև լուսաբաց պետք է հնձված լինի...

Ու լուսնի լույսով ողողված արտում արագորեն լողում էին արծաթափայլ մանգաղներն ու գերանդինները: Քաղցր խշշյունով հակնթահատիկ հասկերը շարք առ շարք փռվեցին արտի մեջ: Հունձն արագորեն նահանջում էր հնձվորների առաջ: ⁶

Ամբողջ գիշերը լավում էր հնձվող հասկերի ոսկե խըշ-
շյունը...

...Վաղ առավոտյան, երբ կոլտնտեսության նախագահ
Տիգրան Աղաջանյանը հաշվետարից, պահեստապետից և
տնտեսիչներից բրիգադ կազմած, գերանդին ուսին, իջնում
էր դաշտավայր՝ ջրափի արտը հնձելու համար, դեռ հեռվից
բարձունքի վրա կանգ առավ զարմացած... Չէ՛, դա աչքի
պատրանք չէր, թյուրատեսություն չէր... արտը հնձված էր,
այո՛, ջրափի ամբողջ արտը մի գիշերվա ընթացքում հնձված
էր և ցորենի խուրձերը կանոնավոր դարձված էին արտի
մեջ:

Բերկրանքից բաբախեց նրա սիրտը:

Ա՛յ քեզ երջանիկ անակնկալ...



Այդ օրը Թագուհի մայրիկն ավելի քշախոս էր դարձել:
Այդ նշանակում էր, որ նա շատ էր հուզված: Իր բրիգադի
անդամ Աղավնին ծանուցագիր էր ստացել՝ ամուսնու զոհ-
վելու մասին: Բոթը մռայլել էր բոլորին: Բրիգադը դարձել
էր մի միաձուլ, հարազատ ընտանիք: Մեկի և՛ վիշտը, և՛
ուրախությունը համակում էր մյուսին: Կանայք իրենց
առանձնապես դուրգուրալի վերաբերմունքով ցավակցություն
էին հայտնում Աղավնուն, ուրիշները հուսադրում էին նրան,
որ ծանուցագրերին այնքան էլ չպետք էր հավատալ: Ինչ-
քա՞ն թյուրիմացություններ կարող են պատահել կյանքում,
մանավանդ ռազմաճակատում: Իսկ Հեղնար քույրիկը՝ Աղավ-
նու հետ միասին, լաց էր լինում, ազատ թողնելով կրծքի
տակ կուտակված արտասուքները:

Այդ միջոցին Թագուհի մայրիկը մոտեցավ Աղավնուն,
որ և՛ արտասվում, և՛ դժխահակ աշխատում էր, ու կարեկ-
ցարար ասաց.

— Աղջիկս, գնա տուն՝ երեխաներիդ մոտ. քո աշխա-
տանքը մենք կկատարենք. հույսդ էլ մի կտրի: Աշխարհին
երես մի դարձնի, որ աշխարհն էլ քեզանից երես չդարձնի...

Բրիգադի կանաչք ազդված լսում էին Թագուհի մայրիկի ամեն մի խոսքը: Հոգատար, մայրական խոսքերը:

Ճաշի ընդմիջումին, մի կողմ կանչելով Հեղնար քույրիկին՝ Թագուհի մայրիկը զգուշացրեց.

— Բա այդ եղավ, Հեղնար քույրիկ, բա վերքի վրա փուշ կդնե՞ն... երեխի նման լաց կլինե՞ն...

Հեղնար քույրիկը լուռ էր:

— Սիրտը սուփրա չէ, որ ամեն տեղ բանաս, քույրի՛կ, — հետո հանդարտ ավելացրեց մայրիկը, — այս նեղ օրերին պիտի յուր տանել ջահելներին, որ գործը հաջող դնա...

Ուշ երեկոյան Թագուհի մայրիկը տուն վերադարձավ, նախ գնաց գոմ, հորթի առաջ կեր դրեց, ապա շտապեց սենյակ մտնել:

Բրդոտ, լայն թափերին դունչը դրած, աստիճաններից վերև, դռան շեմին նստել էր ծեր դամփուր: Ունամայնից շունը կիսախուփ բացեց աչքերը և նորից փակեց: Թագուհի մայրիկին թվաց, որ դամփուր լաց է լինում...

Ինչպիսի՜ արտաբուխ, ուրախ ճիշեր արձակելով վեր կիսոյանար նա, եթե հիմա մոտենար Անդրանիկը, — մտածեց մայրիկը:

Չնայած ցերեկվա ծանր աշխատանքին ու հոգնածությանը, գիշերը նա երկար ժամանակ չքնեց: Հարսի հետ միասին ծանրոց պատրաստեց՝ ռազմաճակատում կռվող մարտիկների համար, փոքրիկ արկղի մեջ խնամքով դասավորեց գաթա, պանիր, շորացրած մրգեղեն, ծխախոտ, լուցկի, թուղթ ու մատիտ և իր ու հարսի գործած բրդյա գուլպաները:

Հետո, աշխատանքն ավարտելով ասաց.

— Անահի՛տ, գրի՛ր Անդրանիկի հասցեն:

Հարսը զարմացած ու հարցական նայեց կեսրոջ դեմքին, բայց ոչինչ չառարկելով ենթարկվեց նրան:

Երբ վերջացրեց հասցեն գրելը, մայրիկը լրացրեց.

— Աղջիկս, ավելացրու՝ Անդրանիկին կամ նրա ընկերներից որևէ մեկին...

Կես գիշերին Թադուհի մայրիկը շտապ վեր կացավ անկողնուց և սկսեց հագնվել: Գամփուր մոռաց: Աղմուկից դարձնեց հարսը և տեսավ, որ կեսուրը դռնից դուրս էր գալիս:

— Ո՛ւր, — հարցրեց նա՝ անակնկալի եկած:

— Այգիները, աղջիկս, շուտով կվերադառնամ:

Ասաց և դուրս եկավ փողոց:

Սպիտակ խճուղու վրա կանգնած նա մի պահ դիտեց շուրջը: Զինջ ու խաղաղ էր գիշերը: Լուսնի շողերի տակ փայլվելում էր տան առաջից անցնող առուն, երիտասարդ, սեղմիրան բարդիները առվի ափին մի շարքի կանգնել էին ձիգ ու անշարժ և հեռո՛ւ-հեռո՛ւ արտերից հասնում էր ծրդրիղների միտադադաղ, ննջաբեր գիշերերգը:

Հարևանի շունը մի քանի անգամ հաչեց, բայց հետո ճանաչելով մայրիկին, լռեց: Հեռավոր թաղերից մի աքաղաղ կանչեց, որի ձայնն անարձագանք նվաղեց լռության մեջ:

Թադուհի մայրիկն առաջանում էր այգիները տանող խճուղով: Տաղնապալի մտքերով էր տարված: Արդյոք իր նախազգացումը ճիշտ էր:

Այգիները հասնելով նա կանգ առավ, լսողությունը սրեց: Բացի ծղրիղների ախորժալուր հանդերգից, ուրիշ ոչ մի ձայն չէր լսվում: Լուսնի շողերի տակ, որթատունկերի մուգ կանաչի միջից աջ ու ձախ փայլվելում էին հակնթահատիկ ողկույզները: Ուռենու ճյուղից հյուսված խաղողի կողովներն ու թիթեղե ամանները կիտված էին պահեստի առաջ: Այնտեղից ճմլված խաղողի հոտ էր բուրում: Հնձանը մոտ էր:

Թադուհի մայրիկը ուշքը լաքած՝ դանդաղ մոտեցավ պահակակետին: Չայն ու ծպտուն չէր լսվում: Ոչ-ոք չհարցրեց «ո՞վ է գալիս»: Մտահոգ՝ նա ավելի առաջացավ: Ծերունի պահակը գլուխը հենել էր կողքը դրված կողովին և անշարժ մնում էր: Բայց արդյո՞ք քնած էր:

— Սարգիս աղբեր, Սարգիս աղբեր, — անորոշ երկյուղով ձայն տվեց Թագուհի մայրիկը:

Պահակը շարժվեց: Շնչառությունն էլ չէր լսվում: Կասկածն ավելի ուժեղացավ: «Այո՛, — տագնապեց նա, — երազս իրականութուն է դառնալու»:

Սարսափած՝ մայրիկը ավելի բարձր կանչեց.

— Սարգիս աղբեր, Սարգիս աղբեր...

Այս անգամ պահակը շարժվեց, գլուխը բարձրացրեց և իր բրիգադիրին տեսնելով՝ դարձացած հարցրեց.

— Խեղ լինի՛, քույրի՛կ, ի՞նչ է պատահել:

Թագուհի մայրիկն ուղղվեց, հանգստացավ:

— Խեղ է, Սարգիս աղբեր, — խոսեց նա, — բայց լավ չէ՛, որ դու քնել էիր, էս ամբողջ այգին քո ումուդին եմ թողել, իսկ դու քնել էիր... լավ չէ՛, Սարգիս աղբեր, լավ չէ՛:

Նրա ձայնի մեջ զսպված զայրույթ, նախատինք կար:

— Քույրիկ, ի՞նչ ասեմ, արդարանալու տեղ չունեմ, իրավունք ունես, — ընկճված և հուզված խոսեց պահակը, — ես էլ չհասկացա, թե ինչպես եմ քնել: Ասենք ծերությունից՝ ճիշտ չի լինի: Մեր Վարդգեսից որ վերջերս նամակ չեմ ստանում, քունը բոլորովին փախել է աչքերիցս: Էլ չգիտեմ ինչպես պատահեց քնեցի: Երազ էլ էի տեսնում, թե իբր ֆրոնտից եկել է Վարդգեսը: Հենց այդ էր՝ ձայն լսեցի, արթնացա:

— Երազդ բարին, Սարգիս աղբեր, բայց սա մեա մեր մեջ, չիմանան, որ դու քնել էիր:

Ծերունի պահակը աղղված էր: Նա չպատասխանեց: Այդ զգալով՝ Թագուհի մայրիկը շարունակեց.

— Իմ էլ երազը բարին կատարվեց:

— Ի՞նչ երազ, քույրի՛կ, — աշխուժացավ պահակը:

— Սարգիս աղբեր, ես էլ քիչ առաջ երազ էի տեսել, իբր գողեր էին մտել այգին, քեզ վիրավորել, կապկապել ու բերքն էին հափշտակում:

Սարգիս աղբերը հասկացավ ամեն ինչ: Ա՛յ քեզ բրիգադիր...

— Ա՛յ քույրիկ, հենց դրա համար էլ քնահարա՞մ եղար...

Թագուհի մայրիկը նստեց Սարգիս աղբոր կողքին ու նրանք սկսեցին մտերմորեն զրուցել:

...Օտար, հեռավոր երկրներում ազգային արհամարհանքի ենթարկված՝ նրանք երազել էին հայրենի կառուրի տակ՝ Արարատի դիմաց կառուցել իրենց նոր օջախը: Ահա իրենց այդ երազները կենսագործվել էին: Սովետական իշխանությունը նրանց հայրենիք էր տվել և հնարավորություն՝ պանդխտությունից պապենական հողը վերադառնալու: Այստեղ, կախարդական լեռան դիմաց, գեղատեսիլ մի բարձրավանդակում, Թագուհի մայրիկը՝ Սարգիս աղբոր հետ միասին դրել էին առաջին տան հիմքը: Նախկին ամայի տարածություններում վարդագույն ու սև տուֆից հայրենադարձ մարդիկ կառուցել էին բազմաթիվ բնակարաններ՝ իրենց տնամերձ այգիներով: Հետո նոր ավանում բարձրացել էին դպրոցի, կինո-թատրոնի, ակումբ-գրադարանի, մանկամսուրի տուֆաշեն ու լուսավոր շենքերը, ավելի ուշ՝ մետաքսի ու տրիկոտաժի գործարանների հսկա շենքերը: Փոքրիկ ավանն իրենց աչքերի առաջ կարճ ժամանակամիջոցում վեր էր ածվել շրջանային բարեկարգ կենտրոնի:

Այստեղ ամեն ինչ նոր էր: Սկիզբ էր դրվել նոր, երջանիկ կյանքի: Եվ ահա նորից պատերազմ, նորից աղետ:

Մռայլ տրամադրությունը Թագուհի մայրիկը փորձեց փարատել:

— Սարգիս աղբեր, դարդ մի անի, — հուսադրեց նա ծերունուն, — սովետական իշխանությունը որ մեր թիկունքին կանգնած է՝ այլև մեր օջախների ծովսը չի մարի... Դարդ մի անի, տղադ էլ ողջ-առողջ կվերադառնա:

— Բերանդ օրհնվի, քույրի՛կ, — մեջքն ուղղելով մրմընչաց ծերունին:



Գարնանը արագիլը վերադարձավ հեռավոր երկրներից, վերանորոգեց ձմեռվա քամիներից քանդված ծղոտե բույներ

և բարդու կատարից, մի ոտի վրա կանգնած, երկա՞ր ու երկա՞ր դիտում էր Թագուհի մայրիկի տունը, գարնանային արևով ողողված ոսկեմշուշ հովիտը:

Թագուհի մայրիկը շատ ուրախ էր, որ այս տարի արագիլը նորից վերադարձավ: Մի տեսակ նախասլաշարում ունեւր—արագիլը որ անվտանգ վերադարձել է, Անդրանիկն էլ անպայման կվերադառնա: Կարծես այդ թռչունից էր կախված Անդրանիկի կյանքը:

Թագուհի մայրիկը առավոտյան վաղ իր քայլերն ուղղեց դեպի այգիները: Ավանի բարձունքից նրա հայացքն ընդգրկեց խաղաղ դաշտավայրը: Կանաչը ճեղքելով ոլորապտույտ անցնում էր դետը: Ասես մի վիթխարի արծաթե մարտիկ շառաչելիս անշարժացած՝ պսպղում էր արևի ճառագայթների տակ:

Այգի հասնելով, մայրիկն անմիջապես անցավ աշխատանքի: Կաթնալի մեջ սկսեց բացել փարիզյան կանաչը՝ երթատունկերը սրսկելու համար: Պետք էր կանխել հիվանդությունները:

Նախորդ օրվա կիսատ աշխատանքը վերջացնելով, մայրիկը սովորականից շուտ տուն վերադարձավ: Երբ դուռը բացեց, մի ակնթարթ միայն հուզիչ տեսարանի ակնհասեցեղավ: Անահիտը հանել էր Անդրանիկի հագուստները և դրուկած՝ երեսին էր սեղմում ու համբուրում:

Թագուհի մայրիկն անմիջապես հայացքը շեղեց և ձեկացրեց, որ չի նկատում հարսի արարքը:

Հագուստները շտապ տեղը դնելով, հարսը կիսաձայն խոսեց.

— Հանեցի տեսնեմ չի՞ ցեցոտվել...

Մայրիկը միամիտ նայեց, կարծես հավատաց Անահիտին: Չէ, չի ցեցոտվի արցունքով թրշած հագուստը:

Հետո հարսը նրան կտրուկ օրվա թերթերը, որոնք լի էին ուրախ լուրերով: Հաղթական Սովետական Բանակն արդեն մտել էր թշնամու որջը:

Անցան ծանր ու հերոսական տարիները և բացվեց քա-
ռասունհինգ թվականի անմոռանալի դարունը: Մայիսի մե-
կին ամբողջ աշխարհն իմացավ Բեռլինի անկման լուրը:

Փոստատարը Բեռլինից ստացված բազմաթիվ հեռագրեր
բաժանեց ավանում: Հաղթանակի առթիվ ուղմիկները շնոր-
հավորում էին իրենց հարազատներին: Հեռագրեր ստացան
և՛ Սարգիս աղբերը, և՛ Մինաս քեռին, և՛ Հեղինար քույրիկը,
և՛ շատ շատերը, որոնք երկար ժամանակ նամակ չէին ստա-
ցել: Բայց փոստատարը շմոտեցավ Թադուհի մայրիկի
դուանը:

Այդ օրերին, մի երեկո, կոլանտեսուսյան նախագահ
Տիգրան Աղաջանյանի դուռը բացվեց և ներս մտավ Արամը՝
թևի տակին ուղորուն մի մեծ կտորով: Դժգույն և հուզված նա
նստեց աթոռին, հենակները դրեց կողքին, ապա գրպանից
դանդաղորեն հանելով մի նամակ՝ երկարեց Տիգրանին:

— Ինձ պատվիրել էր, որ Բեռլինի անկման օրը մորը
հանձնեմ, — ախուր ասաց նա Տիգրանին, — ես խոստացա,
բայց չեմ կարող կատարել իմ խոստումը:

Դաշտային հիվանդանոցում, մահվանից առաջ Անդրա-
նիկի գրած վերջին տողերն էին.

«Իմ հերոս մայր, իմ անգին Անահիտ, — գրված էր դող-
դոջուն ձեռքով, — բալիկիս թողնում եմ ձեզ. լավ խնամեք
նրան. թող չգրա, որ հայր չունի: Երբ մեծանա, կիմանա,
որ զոհվեց հայրը, զոհվեցին հայրերը, որպեսզի ազատ ու
երջանիկ ապրեն որդիները... Շնորհավորում եմ մեծ հաղ-
թանակը: Թող այլևս վիշտ չունանի իմ փոքրիկ, անուշիկ
բալիկը»:

Հետո Արամը բաց արեց ուղորուն մեծ կտորը և Տիգրա-
նի աչքերի առաջ դուրսադնական ու վեհ կանգնեց Անդրա-
նիկը՝ գինվորական համազգեստով, կենինի ու Կարմիր Աստ-
ղի շքանշանները լայն կրծքին...

— Այս Անդրանիկի ընկերներն են նկարել, — խոսեց նա

վշտահար, ծոցագրպանից հանելով և կոլտնտեսութեան նա-
խագահին հանձնելով Անդրանիկի շքանշանները:

Տիգրանի աչքերը խոնավացան: Գլուխը կախեց վար,
որպեսզի չնկատվի աչքերի մեջ լճացած արցունքը:

Առժամանակ սենյակում տիրեց խոր լռություն: Յուրա-
քանչյուրը խոսում էր իր սրտի հետ: Հետո Տիգրանը կիսա-
ձայն ասաց.

— Կարիք չկա՛, որ Թագուհի մայրիկն իմանա, կարիք
չկա՛...



Մայիսի իննի լուսադեմին ավանը զարթնեց երգով ու
նվագով: Աքաղաղների վաղորդյան կանչերը խեղդվեցին
ցնծութեան աղաղակների մեջ: Բոլորը—կանայք, դեռատի
աղջիկները, պատանիներն ու ծերունիները բնակարաններից
դուրս թափվեցին, հավաքվեցին ավանի հրապարակում:

Երջանկութեան արտասուքն աչքերին, մարդիկ իրար
շնորհավորում էին գերմանական ֆաշիզմի ջախջախումն ու
պատերազմի ավարտը:

Ավանում սկսվեց համաժողովրդական մեծ ցնծություն:

Հետզհետե ուժեղացող երգի ու նվագի ձայնից արթնա-
ցավ նաև Թագուհի մայրիկի թոռն ու տատիկի ծնկներին
հասած աշխույժ թոթովեց.

— Տատի՛, նվագում են, որ պապան դա՞. հա՞, տատի՛...

— Հա՛, մանչուկս, հա՛...

— Բա, տատի՛, պապան բոլոր ֆաշիստներին էլ սպա-
նե՞լ է, հա՞, տատի՛...

Թագուհի մայրիկը մի պահ անխոս ու տխուր նայեց
թոռնիկի հարցական աչքերին, որոնք Անդրանիկի աչքերի
նման սև փայլով վառվում էին, ապա մեղմ հաստատեց.

— Հա՛, մանչուկս, հա՛...

Սենյակում միայն լսվում էր պատի ժամացույցի թիկ-
թակը, Անդրանիկի դնած ժամացույցի հավերժական թիկ-
թակը...

Գոմից լսվեց երինջի կարոտալի ու ցավագին բառաշը:
Թագուհի մայրիկին էր կանչում: Բայց շփտես ինչո՞ւ, այսօր
ուշանում էր մայրիկը:

Դրսում շարունակվում էր համաժողովրդական ցնծու-
թյունը:

— Տատի՛, ալի գնանք՝ պապային դիմավորենք...

Նրանք դուրս եկան, հասան ակումբը: Մեծ հաղթանակի
առթիվ ներսը հանդիսավոր նիստ կար: Թագուհի մայրիկը
բարձրացավ ակումբի աստիճաններով, մտավ նախասենյակ:
Դահլիճի բաց դռնից լռության մեջ լսվեց Տիգրան Աղաջան-
յանի բամբ ձայնը: Թագուհի մայրիկը կամաց ներս մտավ
և նստեց վերջին շարքում, դռան մոտ, հայացքն ուղղեց կար-
միր կտորներով ու շողշողուն դրոշակներով զարդարված
բեմը:

Խոսում էր Աղաջանյանը: Իսկ Արամը՝ հենակները դրած
մոտի աթոռին՝ նստել էր:

— Այս պատմական օրը մենք անսահման հպարտ ենք
զգում մեզ, — լսվեց Աղաջանյանի բամբ ձայնը, — որ և՛
Ֆրոնտում, և՛ թիկունքում մեր անվանի կոլտնտեսականները
հանդես բերին հուզիչ հայրենասիրություն: Հաղթանակի այս
երջանիկ օրը մենք ջերմ սիրով ենք տալիս մեր հերոս կա-
նանցից հերոսագույնի՝ Թագուհի մայրիկի անունը, որ շնա-
յած իր տարիքին, աշխատանքային սխրություններ կատա-
րեց...

Թագուհի մայրիկը շարժվեց տեղում: Հուզված լսում էր՝
հայացքը բեմին: Այդ միջոցին նկատեց բեմի ճիշտ կենտ-
րոնում պարզված մի մեծ յուզանկար, մի հաղթամարմին
երիտասարդ՝ զինվորական հագուստով, լենինի և Կարմիր
Աստղի շքանշանները լայն կրծքին: Զինվորականն ասես
անհողողող քայլում էր առաջ՝ արևաբիր հայացքը հեռու-
ները...

Մայրը ճանաչեց իր որդուն...

— ...Մենք անսահման հպարտությամբ ենք հիշում, —
դահլիճի խոր լռության մեջ արձագանքեց Աղաջանյանի

հուղիված ձայնը, — մեր ֆրոնտային հերոսներին, մեր բոլորիս
սիրելի, անմոռանալի Անդրանիկին, որ իր բաշագործու-
թյուններով անմահացրեց իրեն և...

Դահլիճը, մարդիկ, ամեն-ամեն ինչ Թագուհի մայրիկի
շուրջն օրորվեց, ինչպես խարխախ նետած նավերը՝ ալեկոծ
ծովում, և նա այլևս ոչինչ չսեց: Աշխարհն ասես մթնեց ու
փղձկոցը բարձրացավ մինչև կոկորդը...

Նա շտապ դուրս եկավ դահլիճից և բացի փոքրիկ Թո-
նիկից ոչ-ոք չնկատեց, որ արտասուքի կաթիլներն ^{ուր} անասու-
րեն դնորվում էին Թագուհի մայրիկի խորշումած, դռնատ
այտերից...

— Տատի', տատի'...

Տատին լաց էր լինում...

1947 թ.

11 —

ՄԱՀՎԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԿԻՆԸ

Նրեկոյան դեմ, Փարիզի կենտրոնական փողոցներից մեկով անցնում էր միջահասակ, վաղելիակազմ, դեռատի մի կին՝ Ֆրանսուզուն հատկանշող նուրբ դիմագծերով: Բայ վարդապույն դեմքին առանձին թովչանք էին տալիս կապտավճիտ, ժպտուն աչքերն ու դեղնավուն, գանգուր մազերը, որոնք քնքշորեն օլիքվելով՝ իջնում էին մինչև ուսերը: Հագնվել էր թեթև, կապույտ շրջագգեստ և ձեռքին ուներ մի փոքրիկ պայուսակ:

Աշխույժ քայլերով մոտենալով մետրոյի կայարանին, նա ներս մտավ կամարածև մուտքից, աստիճաններով իջավ ներքև և տոմս վերցրեց: Նրբ տոմսավաճառի մոտից հեռանալով՝ նորից իջնում էր աստիճաններով՝ էլեկտրաքարշի մոտ, հանկարծ սաստիկ դժգունեց ու աչքերի վճիտ ժպիտը մի վայրկյան պղտորվեց երկյուղով:

«Քնկա ծուղակը» տաղնապեց կապույտ շրջագգեստով կինը՝ հանկարծ տեսնելով մետրոյի կայարանում շուրջկալ կազմակերպած ֆաշիստ ոստիկաններին և քաղաքացիական հագուստով Գեստապոյի գործակալներին: Նա դառնալ անհնարին էր ու վտանգավոր: Կարող էր նկատվել և լուրջ կասկածներ հրավիրել իր վրա: Նա հանգիստ առաջացավ քաղմության հետ:

Նորից ժպտում էին նրա մանուշակ աչքերը:

Դեռատի կինը մոտեցավ ոստիկանների շղթային: Խուզարկում էին ամեն մի ուղեորի, բայց էին անում կապույտներն ու նույնիսկ կանաչի ամենափոքր պայուսակները, խիստ

ստուգում ու կարգում էին մարդկանց գրականներում գտնվող
թղթերը:

Կինը սարսուռաց: Ահա շուտով հերթը կմտենա իրեն,
բաց կանեն իր ձեռքի փոքրիկ պայուսակը, ևս ու, ո՞վ սար-
սափ... Եվ այն ժամանակ փրկության ամեն հույս, ամեն ինչ
կկորչի...

Բառացի երկվայրկյաններ են մնում մահու և կենաց միջև...
բայց ի՞նչ անել, ինչպես փրկվել Գեստապոյի նկուղներում
տանջամահ լինելուց... Նա դառնա՞լ. այդ այժմ արդեն բո-
լորովին անհնարին է. թշնամու տասնչակ խուզարկու աչքեր
են հետևում յուրաքանչյուրին:

Հանկարծ մի խորամանկ, շափաղանց հանդուգն միտք
կայծակեց նրա ուղեղում, փրկարար մի միտք, որից փայլե-
ցին աչքերը:

Համարձակ մոտենալով երկարահասակ, այտոսկրները
դուրս ցցված մի ոստիկանի, կինը ժպտերես կանգ առավ:

Ֆաշիստական սվաստիկան թևին ոստիկանը մի սլահ
ոտից զուլխ զննելով դեղատեսիլ կնոջը, չոր հարցրեց.

— Իսկ դուք ի՞նչ ունեք ձեր պայուսակի մեջ, տիկի՛ն:

— Նրեք ատրճանակ, պարոն ոստիկան, — բոլորովին
անսպասելիորեն պատասխանեց նա՝ իր ժպտուն հայացքը
սևեռելով ոստիկանի ապշած աչքերի մեջ:

Բազմաթիվ ճանապարհորդուհիներ ուշադիր դարձան
դեպի անժանոթ կինը: Նրա այդ անակնկալ պատասխանից
ոստիկանի մեջ առաջացած զարմանքն ու ապշությունը
վայրկենաբար վերածվեց զայրույթի: Խիստ ջղայնացավ: Եվ
ի՞նչպես շղջացնանար ու շղայրանար: Լուրջ աշխատանքի
ժամանակ ահա դեռատի ֆրանսուհին համարձակվում է
թեթևամիտ կատակներ անել, արհամարհել ու ծաղրել իրենց
սպատասխանատու գործը... Այո՛, արհամարհել ու ծաղրել...

Զայրույթով լի աչքերը սևեռելով փարիզուհու վրա, ոս-
տիկանը գոռաց.

— Ուրիշ անգամ, տիկի՛ն, նման հիմար կատակներ

շանեք, դրա համար դուք ամենախիստ պատասխանատու-
թյան կենթարկվեք...

Հետո, հանգստանալով գեղեցիկ ֆրանսուհու կախարդիչ
ժպիտից, տոնը ցածրացրեց և ասաց.

— Իսկ հիմա՝ գնացե՛ք ձեր գործին:

Բոլորը ուշադիր դիտում էին փոքրիկ պայուսակով կնո-
ջը, որ գլուխը հպարտ պահած, հանդիստ առաջանալով
բաղձության միջով, մտավ էլեկտրաքարշի վագոնից ներս:
Նրա հետևից անմիջապես դուռը փակվեց և էլեկտրաքարշը
շարժվեց:

Կինը խոր շունչ քաշեց, թեթևություն զգաց: Ասես շուր-
ջը միանգամից ամեն ինչ պայծառացավ:

«Լավ կատակ էր» — մտածում էր նա՝ լուրջ տագնապ
անցկացրած մարդու խաղաղված, ուրախ սրտով, իր ձեռ-
քում ամուր բռնելով կանացի փոքրիկ պայուսակը:

Տուն հասնելով՝ նա բացեց պայուսակը, հանեց ատրի-
ճանակները և թաքցրեց վառարանի խողովակի մեջ:

Փարիզյան շրջանի Ինտերնացիոնալ պարտիզանական
խմբակների համար այդ շորրորդ անգամն էր ատրճանակ
փոխադրում ֆրանսիական դիմագծերով դեռատի կինը՝ հա-
յուհի Մելինե Մանուշյանը:



Վաղ գարնան առավոտյան, մշուշը թեթև քողով ծածկեց
էր ֆաշիստական դարշապարի տակ հեծող Ֆրանսիայի մայ-
րաքաղաքը: Նրբեմնի շողշողուն, կախարդական գեղեցկու-
հին՝ Փարիզը՝ ցրտից, թե վշտից, կծկվել էր, դժգունել, կըն-
ճրոտվել...

Աղատատենչ ֆրանսիացին տխրամած ու մուսյ
դեմքով շտապում էր գործի: Մի քանի պառավ ու դեռատի
ֆրանսուհիներ վերադառնում էին շուկայից՝ փոքրիկ գնում-
ների տոսրակները ձեռներին: Նրանց մեջ՝ Ալֆորվիլ ար-
վարձանի գլխավոր փողոցով, լիքը պայուսակը ձեռքին,

քայլում էր մի կին: Բեռան ծանրությունից կարմրել էր ու
թեթև քրտինք էր պատել սպիտակ ճակատը: Մոտենալով
խաչմերուկին՝ նա ուղեց անցնել մյուս մայթը: Սակայն այդ
միջոցին, բազմաթիվ ուրիշ կանանց ու տղամարդկանց հետ
միասին, ոստիկանները կանգնեցրին նաև նրան:

— Սիրունիկ օրիորդ, — հաճոյախոսեց երիտասարդ ոս-
տիկանը՝ վավաշոտ դիտելով նրա կարմրությունից գեղեց-
կացած դեմքը, — ապա մոտ եկե՛ք տեսնե՛նք, ի՛նչ կա ձեր
այդ ծանր պայուսակի մեջ:

Դեռատի կինը ժպտաց երիտասարդ ոստիկանին ու փո-
խանակ պատասխանելու, անմիջապես բացելով պայուսակը,
ցույց տվեց բանջարեղենները, որ նոր էր գնել շուկայից:

— Պարոն ոստիկան, շտապում եմ տուն, աշխատանքի
էմ հասնելու, — աշխուժորեն ու քնքշաձայն խոսեց նա:

Ոստիկանը, որ ձեռքը մտցրել էր պայուսակի մեջ՝ պա-
րունակությունն ստուգելու համար, թողեց պայուսակը և
աճապարող աղջկա ժպտուն աչքերին նայելով՝ կատակեց.

— Շտապեցե՛ք, սիրունիկ օրիորդ, շտապեցե՛ք, ժամա-
դրությունից շուշանաք. թե չէ՝ հանդիմանության կարժանա-
նաք:

Կեղծ ժպիտը դեմքին կինը բաժանվեց ոստիկանից ու
արագորեն անցավ խաչմերուկից:

Այդ Մելինեն էր, որ պայուսակի մեջ, բանջարեղենի
տակ մշտապես փոխադրում էր հակաֆաշիստական լողունդ-
ներ, թուցիկներ և Մովսեսական Միության պաշտպանու-
թյանը նվիրված կոչեր՝ Ալֆորվիլ արվարձանում տարածելու
համար:

Նույն բովանդակության կոչեր ու թուցիկներ Մելինեն
մի օր առաջ տարել էր Բելվիլ բանվորական թաղամասն ու
Բանյո և Իսի-Լե-Մուլինո արվարձանները:



Գերմանական գարշապարի տակ տրորվող, անարգվող,
վշտահար ու մոռյլ Փարիզի հետ, ընդհատակում ապրում էր

Յի ալ՝ անտեսանելի, մարտնչող ու առնական Փարիզ՝ Կոմունայի Փարիզը, Մարաթի, Դանտոնի, Ռոբեսպիերի քաղաքը... Այնտեղ դորժում էին ֆրանսիական ազատատենչ ժողովրդի Դիմադրության միացյալ ուժերի ընդհատակյա կազմակերպությունը՝ Փարիզի և նրա շրջակայքի պարտիզանական ջոկատները: Այդ մարտական ջոկատների մեջ ֆրանսիացիների հետ միասին համախմբվել էին շեխեր, լեհեր, հայեր, հրեաներ, իսպանացիներ, իտալացիներ ու բելգիացիներ: Պարտիզանական այս Ինտերնացիոնալ ջոկատների հրամանատարն էր Մելինեի մարտական ընկերն ու սամուսինը՝ Միսակ Մանուշյանը:

Իր սամուսնու հետ միասին՝ Մելինեն ամբողջովին նվիրվել էր ընդհատակյա կազմակերպության աշխատանքներին: Այդ կազմակերպության քարտուղարուհին էր: Նա էր հաշվի առնում պարտիզանների կատարած ամբողջ ուսուցիչոն աշխատանքը: Նա էր ուղարկում մարտական գործունեության ղիբեկախիվները...

...Անցնում էին ուսուցիչոն աշխատանքի օրերը, շաբաթներն ու ամիսները: Մելինեն սրտի երջանիկ տրոփյունով ամփոփում էր պարտիզանական ջոկատների երեք ամսվա գործունեությունը: Այդ կարճ ժամանակամիջոցում նրանք կատարել էին վաթսուհից ավելի դիվերսիոն և տեռորիստական ալիտ, խորտակել էին բազմաթիվ ռազմական էջելոններ, ոչնչացրել՝ ֆաշիստական բազմաթիվ սպաներ և ղինվորներ, պայթեցրել կամուրջներ ու զինապահեստներ:

Մի քանի ամսվա ընթացքում Մելինեն տպագրել էր հազարավոր թուղիկներ ու կոշեր, կատարել էր բազմաթիվ ալի կոնսպիրատիվ աշխատանքներ:

Այդ օրը պարտիզանները, Մանուշյանի մարտական առաջադրանքով, խորտակել էին գերմանացիների ռազմական դնացքը: Մի ուրիշ տեղ հաջողությամբ պայթեցրել էին երկաթուղային կամուրջը և Մանուշյանի ղեկավարությամբ, օրը ցերեկով Փարիզի փողոցներից մեկում, իր ավտոմեքենայի մեջ սպանել էին Փարիզի պարետ, գերմանական զեներալ

Թիթերին, որը Փարիզից առաջին անգամ Գերմանիա ստրկա-
յին աշխատանքի էր քշում հարյուր հազար ֆրանսացի բան-
վոր: Այդ բոլորը տոնական տրամադրություն էին առաջաց-
րել Միսակի ու Մելինեի մեջ: Պայքարի երջանկությամբ
հարբած՝ նրանք անձնատուր էին եղել վառ երազանքների:
Այո՛, անպայման կհաղթեն ազատատենչ ժողովուրդները,
անպայման կջախջախվի ֆաշիզմը և կիրականանան իրենց
հոգում փայփայած երազները...

Գիշերը, լուսաքողարկված սենյակում, աղոտ լույսի
տակ նստած՝ նրանք ջերմ զրուցում էին: Միսակի մեջ դարձ-
նել էր բանաստեղծը և նա հատկապես այդ գիշեր լիրիկա-
կան զեղումներով էր խոսում Մելինեի հետ:

Ինչքա՛ն լավ կլիներ կյանքը հաղթանակից հետո, ֆա-
շիզմի ջախջախումից հետո, և ինչքա՛ն քաղցր էր այդ հաղ-
թանակի համար մարտնչող զինվոր լինելու զգացումը...

Այս բերկրալի մտորումների մեջ էին նրանք, երբ դըր-
սից լավեցին ոտնաձայներ և մեկը խփեց դուռը:

Մելինեն դժգունեց:

— Անմիջապես բաց անել դո՛ւռը, — պահանջեց մի հրա-
մայական, բարձրագույն ձայն:

Միսակը կույ տվեց դեռ նոր դրած կոշը և մոտենալով՝
դուռը բաց արեց:

Ներս մտան Մանուշյանի հետքը գտած Գեոտապոյի
գործակալները և սկսեցին խուզարկել սենյակը: Միսակի
մոտից գտան միայն մի ատրճանակ: Վառարանի խողովակի
մեջ թաքցրած մյուս ատրճանակներն ու փաստաթղթերը ֆա-
շիստները չկարողացան հայտնաբերել:

Խուզարկությունը վերջացնելուց հետո, երբ սպան դառ-
նալով Միսակին ասաց՝ «գնա՛նք», Միսակի դունատ դեմքին
ուրվագծվեց գոհունակություն ու խաղաղություն: Ուրեմն
Մելինեն չէր ձերբակալվում...

Հրաժեշտ տալու ժամանակ կնոջը համբուրելիս՝ Միսա-
կը նրա ականջին շշնջաց.

— Անհայտացի՛ր այս տնից, զգո՛ւյշ գործիր:

Միսակի ձերբակալումից հետո՝ Մելինեի համար ստեղծվեց ծանր, տառնապալի մի դրություն։ Բացի ամենօրյա բնագիտական գործունեությունից, նա աջ ու ձախ էր ընկնում՝ պարզելու համար իր ամուսնու տեղն ու վիճակը։

Երկար տառապանքներից հետո, ամիսներ անց, Մելինեն մի փախստական կալանավորից իմացավ, որ ամուսինը գտնվում է Փարիզից 90 կիլոմետր հեռու՝ Կոմպիենի անտառներում, ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում և որ նրա համարը 351-ն է։ Տեղեկացավ նույնպես, որ իր ամուսնու հետ էին Ֆրանսիայի կոմունիստական սլաքախաչի Կենտկոմի անդամ Ժորժ Կոնյոն, կոմունիստ իրավաբաններ՝ Պիտարը, Հաշը, Ռոլնիկասը, որոնք Մանուշյանին անմիջապես հաջորդող թվերն ունեին։

Փախստականը հայտնել էր, որ կալանավորները պահվում էին խիստ հակողության տակ՝ կիսաքսողց վիճակում։

Ամուսնու տեղն իմանալու հետևյալ օրը, շնայած հիվանդությանը, Մելինեն վերցրեց սննդամթերքի մի փոքրիկ կապոց և հեծանիվով 90 կիլոմետր ճամփա կտրելով՝ հասավ համակենտրոնացման ճամբարը։ Այստեղ պարզվեց, որ կալանավորներին հանձնելու համար ծանրոց չէր ընդունվում։ Բայց Մելինեն գտավ ելքը։ Նա ծանոթացավ համակենտրոնացման ճամբարում աշխատող մի ծերունի պահակի հետ և նրան խնդրեց կապոցը հասցնել 351, 352, 353 կամ 354 համարի կալանավորներին։

Մանուշյանն ստացավ սննդամթերքի կապոցը։

Մի քանի օր անց, Մելինեն նորից ճամբար դնաց, բայց այս անգամ նրան շահադիվեց ոչ ծերունին տեսնել, ոչ էլ ամուսնուն սննդամթերքի կապոց հասցնել։ Բոլոր պահակները փոխարինվել էին ստուգված, ֆաշիստների համար վստահելի անձերով, ավելի էին խստացվել կալանավորների պայմանները։ Նրանց արգելել էին դրսի հետ բոլոր տեսակի կապերը։

Բայց Մելինեն որոշել էր՝ ինչ գնով էլ լինի՝ տեսնել իր ամուսնուն և կարևոր տեղեկություններ հաղորդել նրան։

Գաղտնագողի թափանցելով ճամբարին մերձակա անտառ, երեկոյան դեմ նա հասավ ճամբարը շրջապատող փշալարերի այն մասը, որը բալականին հեռու էր գտնվում գերմանական պահակի աշտարակից:

Հանկարծ, երեկոյան խաղաղության մեջ ճամբարում արձագանքեց կանայցի մի ձայն.

— 351, ուզո՞ւմ եմ 351-ը...

Անծանոթ կնոջ համարձակությունից հուզված, կալանավորներն անմիջապես, բերնե-բերան իրար հաղորդեցին 351 համարը:

Շուտով ճամբարային շենքի երկաթե ձողերով պատած լուսամուտի առաջ երևաց Մանուշյանի առնական դեմքը:

Լսելով իր մարտական ընկերուհու ձայնը և սաղարթների մեջ տեսնելով նրան, Միսակը հուզվեց և իրեն հպարտ զգաց՝ Մելինեի համար: Բայց, երբ լսվեց գերմանացի ժամապահի գոռոցը, որով Մելինեից պահանջում էր շտապ հեռանալ՝ կրակելու սպառնալիքով, Միսակը սարսափած աղաղակեց.

— Մելինե՛, շո՛ւտ հեռացի՛ր, պահակը հիմա կկրակե, շո՛ւտ հեռացի՛ր...

Մելինեն կարևորություն չտվեց գերմանացի ժամապահի նախազգուշացմանը: Ծառի բնով ժամապահից պաշտպանվելով, նա իր ամուսնուն հաղորդում էր քաղաքական նորությունները, Կարմիր Բանակի նոր հաղթանակների ոգեշնչող լուրերը:

— Ամո՛ւր կացե՛ք, ընկերնե՛ր, գալիս է ազատարար մեր Կարմիր Բանակը, — ճամբարում արձագանքեց նրա հոգեհույզ ձայնը:

Ֆաշիստ ժամապահը երկու անգամ կրակեց աշտարակի վրայից, սակայն կրակոցին նորից հաջորդեց Մելինեի բարձրագուշ ձայնը.

— Ստալինգրադում ջախջախվեցի՛ն ֆաշիստական դիվիզիաները, ամբողջ աշխարհը ցնծո՛ւմ է սովետների մեծ հաղթանակով...

Հայերեն արտասանած այդ բառերը անմիջապես թարգմանվեցին ֆրանսերենի: Հուզումի, ոգևորության ու բերկբանքի ալիք բարձրացավ ճամբարում: Առույզացնող մի ջիւղ մություն լցվեց բոլորի սրտերը: Երեկոյան խաղաղության մեջ ինչքան հուզիչ ու վեհ էր արձագանքում ճամբարում փշալարերի այն կողմից լսվող ազատության ձայնը...

Երբ գերմանացի պահակը պատրաստվում էր կրակել երրորդ անգամ... Մելինեն արդեն խորացել էր անտառի մեջ՝ ամուսնուն ու մյուս բոլոր կալանավորներին ցույց տալով, թե որտեղից նպատակահարմար է ճամբարին մոտենալ կամ ճամբարից հեռանալ...

Մելինեի ալցելությունից մի քանի օր անց, նույն ճանապարհով ճամբարից փախավ Միսակ Մանուշյանը: Դրանով նա փրկեց իր կյանքը: Ֆաշիստները չհասցրին նրան ևս զնդակահարել իր ընկերների հետ միասին:



Նորից ձերբակալվեց Միսակ Մանուշյանը: Բնակարանը խուզարկելիս դտան հակաֆաշիստական կոչեր, թուցիկներ ու հաշվետվություններ, որոնք Մելինեն էր մեքենագրում: Գեստապոյի գործակալները վերցրին նաև Միսակի և Մելինեի միասին նկարված մի նկարը: Բնակարանը բռնադրավվեց:

Թեև Մելինեին պատահականորեն հաջողվեց խուսափել ձերբակալումից, բայց նրա դրությունը խիստ վտանգված էր: Գեստապոյի գործակալները լուսանկարը ձեռներին, ամեն տեղ փնտրում էին Մելինեին: Արդեն գիտեին, որ Մելինեն ոչ միայն Ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատների պետ Միսակ Մանուշյանի կինն էր, այլև նրա մարտական ղինակիցը, որ ղեկավար աշխատանք էր կատարում պարտիզանների մեջ:

Դեռ Մելինեին չձերբակալած, ֆաշիստներն արդեն կայացրել էին իրենց դատավճիռը—առանց հարցաքննության,

առանց դատանիան պրոցեսի՝ մահվան էին դատապարտել նրան:

Փարիզում և նրա արվարձաններում Գեստապոյի դործակալները փնտրում էին Ֆրանսիական դիմագծերով, վարդապետյն դեմքով, շագանակագույն հոնքերով, կապուտաշյա առ սկեհեր Մելինենին: Մինչ նույն այդ օրերին Փարիզում բևեռացիոն դործունեությամբ էր զբաղված քարածուխի նման սև մազերով ու սև հոնքերով, աջ աչտի վրա սև խալով ու մուգ կապույտ ակնոցներով մի կին... Մելինե Մանուշյանը...

Հոգեկան աննկուն կորովով ու կրքով, նա լծվել էր աշխատանքի, այնպիսի կրքով, որի առաջ չքանում էր մահվան երկյուղի զգացումը...

Այս տագնապալի օրերին Մելինեն հպարտ վշտով իմացավ Միսակի խրոխտ ելույթի մասին՝ ֆաշիստական ռադմական դատարանի առաջ: «Ես կամավոր կերպով մտա Ֆրանսիայի աղատության համար պայքարող մարտական ջոկատները և իմ խիղճը մաքուր է: Այո՛, ես հպարտ եմ այն գիտակցությամբ, որ եղած եմ ազատ հրաձիգներու ղեկավար» — բարձր հնչել էին նրա խոսքերը:

Հիտլերյան բարբարոսները Մոն-Վալերինայի բանտում ամիսներ շարունակ խոշտանգումների էին ենթարկել Միսակ Մանուշյանին, բայց նա մնացել էր անհողողող: Գնդակահարությունից մի քանի ժամ առաջ նա իր կնոջը գրել էր.

«Իմ սիրելի Մելինե».

Շատ սիրելի որբուկս.

Քանի մը ժամ հետո այլևս այս աշխարհեն կհեռանամ: Այս կեսօրեն հետո, ժամը 3-ին, պիտի գնդակահարվինք: Այս դեպքը որպես արկած մը կը պատահի կյանքիս մեջ: Չեմ հավատար: Այսուհանդերձ գիտեմ, որ այլևս քեզ չպիտի տեսնեմ: Ինչ կրնամ ըսել քեզի, ամեն ինչ անորոշ է մեջս և պայծառ միաժամանակ:

Ֆրանսայի աղատագրական բանակին մեջ մտած էի որպես կամավոր զինվոր և կմեռնեմ գաղափարիս համար, հաղթանակին քանի մը մատ մնացած: Երջանկությունս ա-

նոնց, որ պիտի ապրեն մեղմե հետո և պիտի վայելեն վաղ-
վա խաղաղության և ազատության անուշությունը:

Վստահ եմ, որ Ֆրանսայի ժողովուրդը ազատության
համար պայքարող ընկերներուն հիշատակը պիտի գիտնա
պատվել արժանավայել կերպով...:

Բարեկամներու օգնութեամբ, որոնք վստահ եմ, որ
չպիտի զլանան և պիտի ուզեն պատվել զիս, տպել կուտաս
բանաստեղծություններս, որոնք արժանի են կարդացվելու
եթե կրնաս՝ հիշատակներս տար Հայաստան»:

Դեռ նամակի ընթերցումը չվերջացրած՝ Մելինեն փրղծ-
կաց. հորդ արցունքներ էին թափվում նրա աչքերից: Նա ար-
դեն կորցրել էր իր կյանքի ընկերոջը, իր սիրելի Միսակին,
որի հետ միասին մի տասնյակ տարի ապրել ու պայքարել
էր՝ աշխատավոր ժողովրդի երջանիկ ապագայի համար...

Այդ ծանր, կոշմարային գիշերը քունը կարծես առհա-
վետ հեռացել էր նրանից: Աչքերը փակ՝ նրա մտապատկերի
առաջ կանգնել էր Միսակը՝ հուզված, թուխ աչքերի արտա-
կարգ փայլով...

Ուշ գիշերին Մելինեն մռայլ մտորումների մեջ էր:
...Տխուր ու ողբերգական էր եղել իր անցյալը, մանկությու-
նը: Նա չէր հիշում ո՛չ ծնողներին, ո՛չ էլ իր ծննդավայր Պո-
լիսը: Հայկական մեծ եղեռնին՝ տաճկական յաթաղանին զոհ
էին գնացել նրա ծնողները, իսկ ինքը—ինչպես և Միսա-
կը,—ընկել էր Պոլսի, Հունաստանի, Ֆրանսիայի որբա-
նոցները, որտեղ անցել էին նրա մանկության և պատանե-
կության գորշ տարիները:

Որբանոցում նա ստացել էր միջնակարգ կրթություն,
արդեն կարողանում էր ինքնուրույն կերպով խորհել և գտնել
իր և իր հարազատ ժողովրդի դժբախտության բուն պատ-
ճառները, կարողանում էր խորապես ըմբռնել, թե ինչո՞ւ ին-
քը որբացավ, զրկվեց ծնողական գուրգուրանքից ու սիրուց,

Թե ինչո՞ւ աշխատող, քրտնիք թափող մարդը մնում էր ստրուկ ու կիսաքաղց...

Այդ գիտակցութեամբ էլ նա դարձել էր ռևոլուցիոն բանակի զինվոր և Միսակի կյանքի բնկերն ու նրա հետ կանգնել էր մի շարքի։

Բայց այժմ՝ այլևս չկար իր Միսակը...

Չնայած վշտի ծանրութեանը՝ Մելինեն չկորցրեց իր հոգեկան արիությունը։ Նա հպարտ էր, որ Ֆրանսիայի կոմունիստական պարտիան իրեն վստահել էր շափազանց պատասխանատու աշխատանք՝ Փարիզի շրջանի Պարտիզանական Ինտերնացիոնալ ջոկատների քարտուղարուհու աշխատանքը։ Նա հպարտ էր զգում և հոգեպես բավարարված, որ Միսակին սպանող նույն այդ ֆաշիստներն իրեն էլ ռևոլուցիոն գործունեության համար դատապարտել էին մահվան...

Մելինեն՝ ամուսնու զնդակահարությունից և իր մահվան դատապարտվելուց հետո՝ ամելի կրքոտ ու հանդուգն էր գործում։

— Ֆաշիստները կատաղի հետապնդում էին մեզ, պարտիզաններս ծանր պայմաններում էինք ապրում, իսկ դրսի հետ կապը շափազանց դժվարացել էր։ Այդ դժգոհ օրերին, — պատմում է պարտիզանական զնդի հրամանատարը, — անտառի մեջ, մեր պարտիզանական ճամբարում հայտնվեց ամուսնու ողբերգական մահվան վշտից հյուծված Մելինե Մանուշյանը։ Նա խիստ նիհարել էր։ Այնքան, որ ինձ թվում էր, թե նա երբեք չի կարող քայլել։ Սակայն նա ոտով անցնում է տասնյակ կիլոմետր ճանապարհ, մեզ գրականութուն, կոշ և նյութական օգնութուն էր հասցնում, զինվորական ճամբարներից սովետական ռազմագերիների փախուստն էր կազմակերպում և նրանց ուղարկում մեզ մոտ։ Պարտիզանների առաջ կրակոտ ճառեր էր արտասանում։ Նս զգում էի, որ ամուսնու հերոսական մահը Մելինեի ամբողջ սիրտն ու ջղերը լարել էր ռևոլուցիոն գոր-

ծունենության համար: Նրան անծանոթ էր երկյուղն ու ահը,
էրբ նա դործում էր...

Պարտիզանական գնդի հրամանատարը ողևորված, դեռ
երկար պատմում էր Մելիքների անսպառ կորույթի, աննկուն
կամքի ու անձնվեր գործերի մասին, որ նա կատարել էր Ֆա-
շիստական լծից Ֆրանսիայի ազատազրման համար:



Երևանի պետական համալսարանից դուրս է գալիս մի-
ջահասակ, վայելչակազմ, դեռատի մի կին: Բաց վարդագույն
դեմքին առանձին թովչանք են տալիս կապտավճիտ աչքերն
ու խարտյաշագեղ վարսերը:

Ֆաշիստների կողմից մահվան դատապարտված նույն
Մելիքնե Մանուշյանն է նա, այժմ Պետհամալսարանի լեզվա-
գրական ֆակուլտետի ուսանողուհին:

Արևահորդ, գարնանային Աբովյանով նա դանդաղ իջ-
նում է ներքև: Շուրջը փարթամորեն կանաչել են ծառերը:
Կյանքը նորից թարմ, փիրուզյա բնձյուղներով է ժպտում:
Եվ վերևից՝ Աբովյանով ներքև նայողին թվում է, որ լայնա-
հուն ճանապարհով զուգահեռ կանաչ գետեր են հոսում դեպի
Արարատյան դաշտավայրը, դեպի թափանցիկ, կապույտ
շղարշով քողարկված ձյունափառ Մասիսը: Երկինքը այն-
քա՞ն ջինջ է, օդը այնքա՞ն թեթև ու դուրեկան... Մելիքնեն
լիաթոք շնչում է, ժպտում շուրջը, ժպտում նոր, թովչազեղ
երևանին, փողոցից անցնող ալ վզկապներով պիոներներին
և հպարտ ու երջանիկ քայլում... Ինչքա՞ն հաստատ է հողը
իր ոտների տակ, ինչքա՞ն լավ է կյանքը ազատ ու հարազատ
հայրենի երկրում և ինչքա՞ն ջերմ է բարախում մարդու
սիրտը...

Մելիքնեն ներս է մտնում իր սենյակը: Գրասեղանի վրա-
յից նրան են նայում մի զույգ թուխ աչքեր: Նկարի տակ
դրված է՝ «Ֆրանսական Ազգային Հերոս Միսակ Մանու-
շյան»: Այո՛, ճիշտ էր կուսակց Միսակը: Ֆրանսիական ժողո-

վուրդը երախտագետ ժողովուրդ է: Մանուշյանը հռչակվեց ֆրանսիական Ազգային Հերոս: Մելինեն նորից է հիշում սիրելի, անմոռանալի ընկերոջ խոսքերը. «Վստահ եմ, որ ֆրանսացի ժողովուրդը ազատության համար պայքարող ընկերներուն հիշատակը պիտի գիտնա պատվել արժանավայել կերպով...»:

Նվ ի՞նչ կա ավելի արժանավայել, քան Ազգային Հերոսի կոչումը:

Մելինեն երկյուղածությամբ երկարում է ձեռքը և սեղանի վրայից վերցնում մի գեղակազմ գիրք: Այդ Միսակ Մանուշյանի բանաստեղծությունների նոր տպագրված ժողովածուն է: Ինչքա՞ն էր Միսակն իր սրտում փայփայել ու աճեցրել այս գիրքը, որն արդեն լույս աշխարհ է եկել:

Մելինեն թերթում է էջերը, գտնում. «Հողի կարոտը» բանաստեղծությունը: Նա հուզված կարդում է Միսակի ամենից շատ սիրած այս բանաստեղծությունը.

Բաներ եմ գյուղի ոլոր ծառուղին.

— Արևն ուտերուս որպես ծիրանի,

Շրթներուս դողդոջ հին երգ մ'արորի,

Կերթամ սիրտս հանձնել լեռներու սրտին...

Հետո նա բաց է անում մեծ ալբոմը, որի վրա գրված է. «Միսակ Մանուշյան»: Ալբոմի մեջ կանացի հոգատար ձեռքը խնամքով դասավորել է ֆրանսիական թերթերում և սովետական թերթերում Մանուշյանի մասին լույս տեսած բոլոր հոդվածներն ու նկարները: Ահա կտրվածք «Յոմանիտե» թերթից, որի ճակատին գրված է՝ «Փարիզի և շրջակայքի Պարտիզանական Ինտերնացիոնալ ջոկատների պարագլուխ, ֆրանսական Ազգային Հերոս Միսակ Մանուշյան»: Ահա կտրվածքներ «Սովետական Հայաստանից», «Կոմունիստից», «Գրական թերթից», «Ավանգարդից»...

Մելինեն նորից է կարդում իր մարտական ընկերոջ նամակը.

«Եթե կենդանի մնամ՝ կվերադառնանք հայրենիք: Կմասնակցենք մայր հայրենիքի շինարարությանը: Կուսանենք և կճաշակենք հայրենիքի քաղցրությունը: Եթե մեռնիմ՝ իմ հիշատակները փոխադրե հայրենի երկիրը»:

Խոնավացած աչքերով՝ Մելինեն դուրս է նայում թաց լուսամտովից: Կանաչ գոտի կապած ասֆալտե պողոտան՝ ողողված է արևով, ամառային պայծառ արևով, դիմացը՝ զմրուխտ պուրակում ծաղկանոցների շուրջ խաղում են մանուկները, հեռուն՝ ընդարձակ հրապարակում քարձրանում է ձենինի տիրական արձանը, ավելի հեռուն՝ երկնահույլ լեռան ֆոնի վրա ուրվագծվում են նորակառույցների բազմաճարկ կորպուսները: Եվ նրան թվում է, որ իր հետ միասին հայրենի լեռնաշխարհի այդ դյուխանկարը դիտում են մի զույգ թուխ աչքեր, մտերիմ, պայծառ, երազող աչքեր...

1046 Թ.

— —

ԱՐՄԵՆԿԱ*)

Բուլղարական Բուսեգրադ քաղաքի և Լիտակովո գյուղի միջև, մենավոր մի բարձունքի վրա, քառասունչորս թվի աշնանային խաղաղ երեկոյան հավաքվել էր խումն մի բաղմություն: Հազիվ նկատելի մի հողաթմբի շուրջ բոլորված՝ մարդիկ մռայլ դիտում էին հուզիչ արարողությունը: Լեռների խոր լռության մեջ միայն լսվում էր բահերի տխրածոր ձայնը և փոքրիկ հողաթումբը հետզհետե անհետանում էր:

Բոլոր հայացքները սեռված էին այդ թաղմ գերեզմանին:

Շիրմաթմբի գլխին կանգնել էր ալեհեր, լայն դեմքով, թախծամշուշ աչքերով մի ծերունի, վաստակավոր մի ուսուցիչ, նրա անմիջապես կողքին՝ հասակավոր երկու բժիշկներ ու բաղմաթիվ պարտիզաններ: Վշտաբեկ սրտով՝ նրանք սպասում էին՝ տեսնելու ֆաշիստների կողմից գազանաբար սպանված գեռատի պարտիզանուհուն՝ անմոռանալի Մաշկային:

Երկու բուլղար գյուղացի շիրմաթմբի վրայից զգուշությամբ վերցնում ու դեն էին գցում հողը, նոր ազատագրված հայրենի հողը, որ ֆաշիստական տիրապետության սև օրերին այնքան վիշտ ու տառապանք էր ամփոփել իր ծոցում:

Շիկահողի միջից ահա երևաց դիակը: Գյուղացիները դեն դրին բահերը և սկսեցին կամաց-կամաց ավերով մաքրել հողը: Չլինի, որ վնասովի նվիրական դիակը...

* Բուլղարերեն՝ հայունի:

Նախ հողից դուրս եկավ աղջկա դուխը՝ արշունից իրար
կապած թուխ վարսերով, հետո երեաց ալանդակված, սար-
սըռազդեցիկ դեմք՝ աչքերի տեղ սև խոռոչներով:

Բժիշկներն ավելի մոտեցան՝ դիազննություն կատարելու:

Այդ ողբերգական պահին վաստակավոր ուսուցչի հա-
յացքն ամբողջովին ձուլվեց զոհի բաղմաշարշար մարմնին,
խոշոր, խաժ աչքերն ավելի մեծացան, ջերմող հիվանդի
նման դողդողացին նրա շրթունքները: Եվ վշտահար մար-
դիկ տեսան, որ փուլ եկավ նրա սիրտն ու նա առժամանակ
անզգա ընկավ դետնին: Հետո, ուշքի եկավ, դանդաղ բացեց
նվաղուն աչքերը և սրտի հեռավոր խորքերից խուլ հեկեկոցի
նման բխեց մի կերկերուն, հոգեհույզ՝ ձայն.

— Հերմինե, աղջիկս...

Արտասուքներ երեացին ծերունի հոր շորս բոլորը հա-
վաքված բուլղար կանանց ու տղամարդկանց աչքերին:

Դիազննությունից պարզվեց, որ դահիճները փշրել էին
իրենց զոհի ծնոտը, հանել աչքերը, ջարդել ատամները,
կոտրել աջ ոտքը, որը ծալված էր գերեզմանի մեջ, և, սրա-
խողխող արել նրա մարմինը:

Աշնանային արշունոտ վերջալույսը անհետանում էր
հեռավոր լեռների շուրջպարում, երբ դադաղի մեջ դրին
տասնութամյա պարտիզանուհի Սաշկայի խոշտանգված
մարմինը և բուլղար գյուղացիները, նրա պարտիզան ընկեր-
ները, անպաճույճ ու սրտաբուխ խոսքեր ասացին աղջկա
պայծառ կյանքի ու հերոսական գործերի մասին: Ապա
երախտագետ ու վշտահար ժողովուրդը, որպես սրբություն,
աղջկա նվիրական մարմինն ուսերի վրա վերցնելով, բար-
ձունքից իջեցրեց ու դնացքով ճանապարհ դրեց դեպի ազա-
տագրված մայրաքաղաքը:



...Քառասուներեք թվականի վերջերին, մի ցրտաշունչ
օր, Ստարոպլանինայի շրջանի լեռնային բարձունքներից

մեկի վրա, «Չավդարի» անվան Սոֆիայի . առաջին պարտի-
զանական ջոկատի և ֆաշիստական պատժիչ արշավախմբի
միջև արյունալի կռիվ էր տեղի ունենում:

Լեռան կտրատված լանջին, մարտադաշտի մի հաստվա-
ծում, շորս-հինգ պարտիզան ընկել էին շափազանց նեղ
դրության մեջ: Գերակշռող ուժերով թշնամին մոտեցել էր
այդ մի բուռը պարտիզաններին և փորձում էր նրանց կտրել
ջոկատից ու ոչնչացնել: Այդ ծանր վայրկյաններին ոչ հեռա-
վոր մի բարձունքից, ժայռերի հետևից բոլորովին անակնկալ
կերպով դնդակներ տեղացին և շրջանցել փորձող ֆաշիստ-
ների մի մասը, սպանված կամ վիրավոր, փովեցին լեռան
լանջին: Մյուսներն ստիպվեցին նահանջել: Պարտիզանները
հնարավորություն ստացան դուրս գալ պաշարումից և սո-
ղեսող բարձրանալ այն ուղղությամբ, որտեղից արձակված
դնդակները փրկել էին իրենց կյանքը:

Բայց ո՞վ էր քարակույտի հետևում թաքնված պարտի-
զանը, իրենց կյանքի փրկիչը:

Վերջապես, երբ պարտիզանները հասան լեռան բարձուն-
քի ժայռերին և տեսան իրենց ազատարարին, ուրախության
հուզումից լցվեցին նրանց աչքերը:

— Սաշկա՛, սիրելի՛ Սաշկա, այդ դո՛ւ էիր, — շշնջում էր
պարտիզան Աթանասովը, ջերմորեն գրկելով իրենց ջոկատի
ամենակրտսեր պարտիզանուհուն:

— Так арменката, пак арменката*, — հուզված գոչում էր
սպիտակամորուս պարտիզան Գեորգի Չենկելովը, հպարտ
դիտելով դեռատի հայուհուն:



Անդնդախոր քարափներից վեր, ժայռանիստ լեռան ան-
տառապատ լանջերին գտնվող պարտիզանական շտաբից ա-
ռավոտյան վաղ դուրս եկան դինված երկու մարդ, նստան
աշխատ ձիերը և լեռնային կածանով ճանապարհ ընկան: Այդ

* Դարձյալ հայուհին:

ուզեալորնեցից մեկը հիսունն անց, հաղթանդամ, թիկնեղ, ուժեղ
դիմագծերով մի տղամարդ էր, մյուսը՝ խոշոր, թուխ ու երա-
զուն աչքերով մի աղջիկ:

Նեղ և վտանգավոր առապարից դուրս գալով՝ նրանք ան-
ցան քարափի պոնկով, մոտեցան գյուղամիջյան ճանապար-
հին: Այժմ արդեն հնարավորութիւն ունեին ձիերը քշել կողք-
կողքի և խոսել իրար հետ:

Հանդիպակաց հորիզոնը շառագունեց: Արեւածագ էր: Շու-
տով, արեւի ճառագայթների տակ, կանաչի վրա իջած դիշե-
րային ցողն արծաթ կաթիլների վերածվեց: Ձիերի սմբակ-
ները թրջվեցին ցողից, ունգերից գոլորշու սյուների ժայթ-
քեցին:

Միառժամանակ հեծյալները լուռ առաջանում էին: Մի-
այն լսվում էր ձիերի դոփշունը և կապույտի մեջ ճախրող
արտուտների վաղորդյան դալլալը: Հետո նրանք, ասեւ խոսք
մեկ արած, մեղմ երգեցին.

Ժողովրդի վրիժառու սուրն է ձեռքին մեր,
Մենք պարտիզաններ ենք անվեհեր...

Էտրոպուլե գյուղի մոտերը հասնելով, նրանք շեղվեցին
ճանապարհից, նեղ շավիղով ձիերի գլուխները թեքեցին դեպի
քարքարոտ լեռնալանջը, մի քանի հարյուր մետր բարձրա-
նալուց հետո դտան փոս տեղ, ձիերը թաքցրին, և ապա, վե-
րադառնալով, դարան մտան խճուղու մոտ, մի բարձրադիր-
ժայռի հետևում:

Նրանց հայացքի առաջ ոլորապտույտ ձգվում էր էտրո-
պուլե գյուղից Բոտեգրադ քաղաքը տանող խճուղու սպիտակ
ժապավենը: Ճանապարհին ոչոք չէր երևում: Կեսօրվա դեմ
միայն երևացին մաշված հադուստով մի քանի գյուղացիներ,
որոնք էշերի վրա միմեք բարձած, քաղաք էին տանում վա-
ճառելու:

Պարտիզանական ջոկատի հետախույզներն անհամբեր
էին դարձել: Վերջապես պիտի հաջողվե՞ր նույն օրը կատարել
մարտական առաջադրանքը:

Ժայռի հետեր թաքնված՝ նրանք մտերիմ զրուցում էին:

— Սաշկա՛, — դիմեց հայուհուն տարիքոտ պարտիզանը, — հի՛շում ես մեր ազգային բանաստեղծ Բեյու Յավորովի Арменци* ոտանավորը: Կամ է գրել բանաստեղծը:
Ու պարտիզան Պոպովը մեղմ արտասանեց.

Հայածված, թշվառ, չնչին բեկորներ,
Մի ազգի հերոս, այսօր նահատակ,
Սհաբեկ, գերի մի մոր գավակներ,
Հայրենիքից դուրս՝ օտար երկրի տակ
Հյուծված, հավաքվել մի տան մեջ խաբխուլ՝
Ըմպում են... իրենց սիրան արյունալից,
Երգում, ինչպես երգն՝ արցունքի միջից.

.
.

Բուլղար մեծ բանաստեղծը հայերին նվիրած այս հրուշակավոր բանաստեղծությունը գրել էր 1896-ին, ականատես լինելով թյուրքական սարսափներից փախչելով բուլղարական հողն ապաստանող հայ գաղթականների թշվառ վիճակին:

— Սաշկա՛, այժմ այս ոտանավորը ասես գրված լինի ոչ թե հայերի, այլ մեր բուլղար ժողովրդի մասին, — շարունակեց Պոպովը, — դուք այժմ երջանիկ ժողովուրդ եք, ունեք ձեր ազատ — սովետական հայրենիքը...

Նրա հայացքը նորից ուղղվեց խճուղուն:

Սաշկայի կրծքի տակ ինչ-որ մի վեհացնող զգացում ալեց. բերկրալի մտորումների մեջ ընկավ նա: Այո՛, շուտով կվերջանա պատերազմը, կոչնչանա ֆաշիզմը, ազատ կշնչի և բուլղարական հողը: Ու կիրականանա՛, կի՛րականանա՛ իր սրտի խորքում փայփայած երազը՝ կտեսնի իր սովետական հայրենիքը...

Այս քաղցր երազներից հանկարծ սթափվեց Սաշկան: Հեռվում, խճուղու վրա նա տեսավ ֆաշիստական մի ժանդարմ, որ ձիուց վար էր իջել և սանձից քաշում էր դեպի վեր,

* Հայեր.

այն ուղղութեամբ, որտեղ թաքնվել էին իրենք: Վերջապես «որսք» գնալիս էր:

Նրանց առաջադրանք էր տրված անպայման ոստիկանութեան մի պաշտոնյա բռնել և կենդանի հասցնել պարտիզանական շտաբը:

Ժանդարմը հետզհետե մոտենում էր և արդեն պարզ երեւում էր նրա ժանդարմական հագուստը և ուսից կախ հրացանը:

Պարտիզանները սրտատրոփ սպասում էին:

Հանկարծ, ժանդարմի համար բռնորովին անակրնկալ, երկու պարտիզաններն ատրճանակները պահած, դուրս եկան նրա առաջ և սպառնացին.

— Չեռներդ վե՛ր...

Պարտիզանների դարանն ընկած ժանդարմը հնարավորութեան շունենալով զենքի դիմելու, անձնատուր եղաւ: Նրան զինաթափեցին ու կապեցին ձեռները:

Նրանք ճանապարհից հազիվ մի քիչ հեռացել էին, երբ հեռվից լսվեց ձիերի դուփշուն: Սմբակների ձայները արագորեն մոտենում էին: Աղջիկը ետ դարձաւ և հեռվում, խճուղու վրա նկատեց վեց զինված հեծյալներ, որոնք արագորեն մոտենում էին:

— Ընկեր Պոպո՛ւ, շուտ պառկեցե՛ք, քանի շեն նկատել,—ասաց նա, ձին քշելով ժայռի հետևը:

Նրանք պառկեցին այնտեղ՝ ամուր կապելով ժանդարմի բերանը:

— Ոստիկաններ են,—Պոպովին շշնջաց աղջիկը: Ու նրանք սեղմվեցին գետնին:

Ճիշտ է ժանդարմի բերանը կապված էր, նա ոչ մի ձայն ու ծպտուն չէր կարող հանել, բայց որ ձին խրխնջա՞ր... Այդ տագնապ էր առաջացրել հետախույզների մեջ, որոնք նոնակները պատրաստած՝ սպասում էին կռվի բռնվելու:

Սակայն, ամեն ինչ հաջող վերջացաւ: Ոստիկանները ձիերն արագորեն քշեցին նրանց առջևով և սլացան խճուղով:

Պարտիզանները շունչ քաշեցին, դուրս եկան թաքստոցից,

բարձրացան քարքարոտ լեռնալանջը և ժանդարմը ձիու վրա կապելով, իրենք էլ հեծան նժույդները ու լեռնային կածանով ճանապարհ ընկան:

Երեկոյան նրանք երեքով պարտիզանական շտաբումն էին: Հարցաքննվելիս ժանդարմը խոստովանեց, որ արդեն Բոտեգրադի ժանդարմերիան իմացել է պարտիզանների տեղը և երկու օրից հետո պատժիչ արշավախումբ է ժամանելու այդտեղ: Պարտիզանական հետախուզության տեղեկությունը հաստատվում էր:

Պարտիզանական ջոկատի պետը հրաման տվեց նույն օրն և եթ փոխադրվել մի այլ տեղ և շնորհակալություն հայտնեց ամենակրտսեր պարտիզանուն՝ Սաշկային ու Պոպովին՝ ջոկատը վտանգից փրկելու համար:



Մութ գիշերին հետախուզությունից վերադարձող երկու ղինված մարդիկ մոտենում էին Ստարոպլանինայի շրջանի գյուղերից մեկին: Նրանք շտապում էին նախքան անձրևելը տեղ հասնել և ապաստան գտնել:

Գյուլի հեռավոր ծայրին գտնվող առաջին հյուղակին հասնելով՝ նրանք կանգ առան, նախքան դուռը թակելը անշշուկ մոտեցան լուսաքողարկված պատուհանին ու ականջ դրին: Արդյոք ո՞վ կար ներսը: Անհրաժեշտ էր զգույշ լինել վտանգավոր անակնկալից: Հաճախ ֆաշիստական ոստիկանության գործակալներ և ժանդարմներ էին շրջում և ղիշերում այս գյուղերում:

Մի քանի րոպե նրանք լուռ լսեցին սենյակից հասնող խոսակցության ձայներ: Երկու կին և մի տղամարդ խոսում էին ինչ-որ կորած ոչխարի և հարկ տալու մասին: Հետո լսվեց երեխայի լաց ու օրորոցի ճռուց:

Ձինված մարդկանցից մեկը կամայ թակեց դուռ:

— Ո՞վ է, — ներսից լսվեց տղամարդու ձայնը:

— Երկու անցորդներ, խնդրում ենք թույլ տալ գիշերելու, — պատասխանեց կանացի մեղմ ձայնը:

Դուռը բացվեց:

Զինված կինն ու տղամարդը նախամուտքից մտան աղոտ լույսով լուսավորված սենյակը: Ակնոցափոր, գլուխը սև շորով կապած մի պառավ կին՝ սենյակի անկյունում, գետնի վրա ծալապատիկ նստած՝ բուրդ էր գզում. անմիջապես կողքին դեռ օրորվում էր օրորոցը, լույսի մօտը դեռատի, նիհար մի կին խմոր էր հունցում: Կանայք և միջին տարիքի միաչքանի տղամարդը՝ երկյուղած հայացքով՝ նայում էին եկվորներին: Նրանք արդեն կռահել էին, որ իրենց մոտ գիշերելու եկողները պարտիզաններ էին:

— Բարով եք եկել, հազար բարով, հոգնած կլինեք. հանվեցեք և հանգստացեք, — ասաց պառավը, ակնոցների վրայով առանձին ուշադրությամբ դիտելով դեռ շատ-շատ ջահել պարտիզանուհուն ու համարյա նրան տարեկից պարտիզանին: Ապա նա հարսին դառնալով կարգադրեց.

— Մարիցա, աղ ու հաց հանիր, հյուրերը սոված կլինեն:

Սաշկան և Գեորգին նկատեցին, որ տանտերն ու երիտասարդ կինը մտախոհ տեսք ունեին: Պարտիզանների համար հասկանալի էր մոր հյուրասիրությունն ու ջահելների մտատանջությունը: Գիտեին, թե ինչպիսի արյունալի դատաստան են տեսնում ֆաշիստները՝ պարտիզաններին օգնողների, նրանց գիշերային ապաստան տվողների հետ:

Տանտերը հյուրերի մոտ նստելով, բաց արեց ծխախոտի տախտակե մեծ տուփը և Գեորգիին երկարելով՝ ծխախոտ առաջարկեց: Իսկ հարսը նրանց առաջ դրեց հաց, պանիր, սոխ և ձիթապտուղ:

Բայց տակավին սենյակում տիրում էր երկյուղը:

— Մենք մի քանի ժամից հետո կմեկնենք, — ասաց Գեորգին, հանգստացնելու համար հյուրասեր տանտերին:

— Անիծած ժանդարմները դեռ երեկ մեկնեցին գյուղից, — խոսեց պառավը՝ պատճառաբանելու համար իրենց երկյուղը:

Միաշքանի տղամարդը գանգառվեց ծանր հարկերից և այն տեղորից, որ իշխանությունները ենթարկում էին գյուղացիներին: Վերջապես ե՞րբ էր վերջ տրվելու ֆաշիստների կամայականություններին, ո՞վ էր մտածելու տառապող ժողովրդի վիճակի մասին...

— Ժողովրդի մասին մտածող կա, — խոսեց Սաշկան:

Ու նա պատմեց պարտիզանական դադիոկայանի Մոսկվայից ընդունած վերջին հաղորդումների, Սովետական Բանակի հաղթական արշավի և այն մարդու մասին, որ գիշերցիների մտածում էր ֆաշիզմի ջախջախման և տառապող մարդկության ազատագրման մասին:

Եվ գաղտնի արտասանված Ստալինի անունը հրճվանքով լցրեց բոլորի սրտերը:

Հետո տանտերը հետաքրքրվեց Դիմիտրովի վիճակով. տպրո՞ւմ է նա, որտե՞ղ, ինչո՞ւ է դբաղված...

Նրանք տարվեցին լավատես խոհերով, գոտեպնդվեցին:

Այո՛, խավարը մշտական չի կարող տիրապետել երկրի վրա: Մոտ է արեւածագը: Այո՛, կլինի ազատ, դեմոկրատական Բուլղարիա, ազատ ու երջանիկ կյանք, ու ժողովուրդը աներկյուղ, ջերմ սիրով կարտասանի Ստալինի ու Դիմիտրովի անունները...

Այսպիսի բերկրալի մտորումներով երկար շարունակվեց գրույցը:

... Կես գիշերն անց՝ նրանք դուրս եկան գյուղից և աստղալույսի տակ կողմնորոշվելով, նեղ կածանով ճանապարհ ընկան գեպի լեռան անտառապատ բարձունքը:

Երկու ժամից հետո, երբ նրանք դեռ նոր էին անտառ մտել, ծառերի հետևից մի ձայն լսվեց.

— Ո՞վ է գալիս:

Նրանք առանց պատասխանելու շեղեցին իրենց ճանապարհը և խորացան անտառի մեջ: Հանկարծ տեղի ունեցավ հրացանաձգություն և Սաշկան սարսափով տեսավ, որ Գեորգին վայրկենական ընկավ գետին ու այլևս ոտքի չկա-

յողացավ բարձրանալ: Գնդակները խավար անտառում սու-
լում էին իր գլխավերևում, ականջի տակը, իր շուրջը, բայց նա
մոտենալով ընկերոջը, գրկեց նրա գլուխը:

Ծանր վիրավորի աչքերը հանդում էին ու շնչառությունը
դժվարանում էր: Աստղալույսի տակ Սաշկայի հագիով նկա-
տելի դեմքին նայելով, վիրավոր ընկերը նվազում ձայնով
շշնջաց.

— Փախի՛ր, Սաշկա՛, շո՛ւտ փախի՛ր, փրկի՛ր քեզ:

Սաշկան կրծքին սեղմեց մանկության ընկերոջ գլուխը,
հետո արցունքները զսպելով՝ շոշափեց նրա դարկերակը: Վի-
րավորը դեռ ապրում էր: Սաշկան ղննեց վերքը: Գնդակը
դուրս էր եկել կրծքից և արհյուճահոսությունը շարունակ-
վում էր:

— Սաշկա՛, փախի՛ր, — լսվեցին վերջին բառերը:

— Քեզ ֆաշիստներին չեմ թողնի, — կերկերաց աղջկա
ձայնը և սվավացող գնդակների միջով նա անտառի խորքը
տարավ Գեորգիի արդեն անշնչացած մարմինը:

Խիտ անտառում, գիշերային խավարի մեջ, դարանակալ
թշնամին կորցրեց Սաշկայի հետքերը:

Դարավոր կաղնու տակ իր սիրելի Գեորգիի մարմինը
թաղելուց հետո, հետևյալ գիշեր, երկու հրացան ուսին Սաշ-
կան հայտնվեց պարտիզանական շտաբում և զեկուցեց իր
հետախուզության արդյունքների մասին:



Այդ՝ Բուլղարիայի ազատագրումից ընդամենը երկու ա-
միս առաջ էր, քառասունչորս թվի հունիսին, երբ ֆաշիստա-
կան ժանդարմերիան Էտրոպոլե գյուղի շրջակայքում հար-
ձակվեց պարտիզանական ջոկատի վրա: Տաք կռիվներ բոր-
բոքվեցին: Ֆաշիստներին մեծ կորուստներ պատճառելուց հե-
տո՝ պարտիզաններն ստիպվեցին անմիջապես տեղափոխվել:
Թշնամին ավելի մեծ ուժեր կենտրոնացնելով՝ կարող էր կրթ-
կրնել հարձակումը: Սաշկան, որ այդ օրերին գտնվում էր հե-

տախուզության մեջ, մի քանի օրից հետո վերադառնալով պարտիզանական ծանոթ ճամբարը, ընկերների փոխարեն տեսավ ֆաշիստների հետ տեղի ունեցած արյունալի ընդհարման թարմ հետքերը: Նա անմիջապես կռահեց, որ կատաղի մարտերից հետո պարտիզանները տեղափոխվել են մի այլ տեղ:

Մի շաբաթ անընդհատ Սաշկան որոնեց իր ընկերներին: Բայց նրա բոլոր որոնումներն ապարդյուն անցան:

Քաղցի մատնված Սաշկան որոշեց այս անգամ մոտենալ անծանոթ բնակավայրի՝ ուտելիք ձարելու և դիշերը իր ընկերների մասին որևէ տեղեկություն ստանալու համար:

Առավոտյան, երբ մշուշը պարզվեց, բնակավայրի մոտակա լեռան լանջին Սաշկան տեսավ արածող ոչխարների սպիտակ հոտը և մի հովիվ, որ գամփուր կողքին նստած բարձր ժայռի վրա՝ հսկում էր հոտը:

Ցերեկով, զինված, գլուղ դնալ վտանգավոր էր: Շրջանում վխտում էին ֆաշիստական գործակալները և կարող էր ժանդարմների ձեռքն ընկնել: Բայց հարմար չէ՞ր երևալ մենակ հովվի աչքին: Երկար մտածելուց հետո Սաշկան որոշեց երևալ:

Երբ նա մոտեցավ և հաց խնդրեց, հովիվն ուշադիր նայելով հրացանով զինված անծանոթ աղջկան, կարեկցաբար ասաց.

— Մոտս հաց չունեմ, սիրելիս, մի քիչ սպասիր, ես խուլոյն կբերեմ,— ու շտապ գլուղ մեկնեց:

Էտրոպուլե գլուղը հասնելով՝ հովիվն անմիջապես գտավ ֆաշիստական պատժիչ ջոկատի պետին՝ որը մի շաբաթ է գլուղումն էր գտնվում, նրան պատմեց զինված աղջկա մասին, կասկած հայտնելով, որ նա պարտիզանուհի կլինի:

Ժանդարմերիաջի պետը գովելով հովվի շորեր հագած դավաճանին, նրան խորհուրդ տվեց անմիջապես հաց ու պանիր տանել պարտիզանուհուն և խրատեց, թե ինչպես պետք է գործի:

Երբ Սաշկան հովվի ձեռքին տեսավ հացը, վաղեց նրա մոտ, շնորհակալություն հայտնելով վերցրեց, ու ազահորեն

սկսեց ուտել: Ճիշտ այդ միջոցին դավաճանն իր մահալիցով
ուժեղ հարվածեց ուժասպառ Սաշկայի ձեռքերին: Սաստիկ
ցավից ճշալով՝ նա թուլացած ընկավ խոտերի վրա:

— Եվ դու ինձ հացո՞վ խաբեցիր, դավաճա՛ն, բայց
կյանքովդ կհատուցես,— լսվեց Սաշկայի նվաղուն ձայնը:

Վրա հասան ժայռի հետևում դարանակալ ժանդարմները և
ձերբակալեցին պարտիզանուհուն:

Հյուժված աղջկան տարան էտրոպուլե գյուղը, այնտեղ
ենթարկեցին նախնական հարցաքննության, շարշարեցին, պա-
հանջելով, որ նա ասի պարտիզանական ջոկատի տեղը, թի-
վը, հրամանատարի ու իր ընկերների անունները:

Բայց աղջիկը լռեց:

Հետևյալ օրը նրան տեղափոխեցին Բոտեգրադ քաղաքը:

Այստեղ Սաշկայի համար սկսեց իսկական փորձություն-
ներ, ծանր տանջանքները: Պահանջեցին, որ ասի գյուղերում
ունեցած իրենց մարդկանց ու կապերի մասին, թվի նշանա-
վոր պարտիզանների անունները, տնային հասցեները:

Բայց աղջիկը նորից ոչինչ չխոստովանեց:

Ֆաշիստները բանտում երկար չպահեցին ծայր աստի-
ճան հյուժված Սաշկային: Հուսահատված նրա համառություն-
նից, դադանային տանջանքների ենթարկելուց հետո, նրան
տարան Լիտակովո գյուղի մոտ՝ մի ամայի բարձունք, վեր-
ջին անգամ խոշտանդեցին և կիսամեռ վիճակում թաղեցին
այնտեղ:

... Մի քանի օրից հետո, երբ Սաշկայի դադանային
սպանության մասին պարտիզանական հետախուզությունը
տեղեկություն բերեց, հուզման ալիքը միանգամից բարձրա-
ցավ պարտիզանական ջոկատում և լսվեցին վրեժի բացա-
կան շություններ:

Այդ դեպքից մի շաբաթ հետո, կես գիշերին, մի խումբ
պարտիզաններ լեռներից իջան էտրոպուլե գյուղը, այնտեղ
բաժանվեցին երկու մասի: Պարտիզանների մի մասը գնաց
դավաճանի տունը, մյուս մասը՝ այն տունը, որտեղ գիշե-
քում էին ժանդարմները:

Առաջին խումբը մտավ դավաճանի բնակարանը:

Սենյակում աղոտ լույսի տակ քնել էին հինգ հոգի։ Դռան մոտ քնել էր դավաճանը։ Խոր քնի մեջ՝ նա խուլ ձայներ էր հանում։ Պարտիզաններից մեկը մոտենալով նրան՝ մերկացրեց դաշույնը։ Բայց Աթանասովը հասնելով՝ ետ պահեց երիտասարդ պարտիզանի բազուկը։

— Սպասի՛ր, — ասաց նա, — քնած տեղը չեն սպանի. նախ պետք է զարթեցնել բոլորին, հայտնել ժողովրդի վճիռը։ Թող իմանան, որ բուլղար ժողովուրդը երբեք չի ներում դավաճաններին...

Այդպես էլ կատարվեց։

Զարթնելով ու պարտիզաններին տեսնելով, մատնիչը սարսափից սկսեց դողալ։ Հետո, ժողովրդի դատավճիռը լսելով, լաց եղավ և պաղատեց, որ իրեն չսպանեն։

Պարտիզանական վրիժառուների հրամանատարը նողկանքով թքեց նրա վրա, արագ կատարեց սրբազան վճիռը, հետո հրամայեց հրդեհել դավաճանի տունը։

Խավար գյուղը լուսավորվեց բոցեղեն լեզուներով. լավեցին պարտիզանական նռնակների ու ավտոմատների պայթյուններ։

Քիչ անց, բարձունքի ճանապարհին առաջին խմբի պարտիզանները միացան մյուս խմբի պարտիզանների հետ, որոնք Ֆաշիստ ժանդարմներին ոչնչացնելուց հետո, վերադառնում էին։

Բարձր էր նրանց տրամադրությունը և սրտերը խաղաղված։ Նրանք լուծել էին փոքրիկ պարտիզանուհուն՝ անմոռանալի Սաշկայի վրեժը։



Ազատագրված Սոֆիայում այժմ ապրում են Սաշկայի ծնողները։ Նրա վշտահար հայրը՝ հայոց լեզվի վաստակավոր ուսուցիչ Դանիել Ռազկրատյանը հպարտ հուզումով պատմում է իր հերոս աղջկա մասին.

— Հերմինեիս երբեք վատ տրամադրության մեջ չեմ տեսներ, — ասում է նա, — իր վարակիչ ուրախությամբ միշտ

ջերմ ու հաճելի մթնոլորտ կատեղծեր մեր ընտանիքին մեջ։
Օր մը, երեկոյան, երբ ես ու ինքը առանձին էինք սենյակին
մեջ, ես ըսի. — աղջիկս, ղգույշ եղիր, շորս կողմդ լրտեսներ
կպտտին։

— Մի անհանգստանա՛ր, հայրի՛կ, — պատասխանեց Հերմինեն, — լրտեսներն իրենց գործը կկատարեն, ես ալ՝ իմը։

— Զարմանալի հեռատես աղջիկ էր Հերմինեն, — հուզումը զսպելով ասում է մայրը, — երբ մեկ անգամ անոր ըսի, որ աղջիկս, գործերը վատ կերթան, այսօր ռադիոն հայտնեց՝ գերմանացիք նորեն բազմաթիվ քաղաքներ գրավել են և ռուսները կնահանջին, Հերմինեն հանգիստ պատասխանեց.

— Մայրիկ, մի մտահոգվիր, Կարմիր Բանակը կնահանջե, բայց երբեք չի պարտվիր։ Շուտով Կարմիր Բանակը Հիտլերի հաշիվը պիտի տեսնե և հոս ալ պիտի գա՝ մեզ ազատագրելու։

— Կզգայի, որ Հերմինեիս հետ ինչ-որ բան կկատարվի, — շարունակում է հայրը, — բայց ճիշտը չէի կրնար հասկնալ։ Օր մը անոր հարցուցի.

— Հերմինե, դո՞ւն ալ կպատրաստվիս պարտիզաններու մոտ երթալ։

Իմ այս անակնկալ հարցեն անկա քիչ մը շփոթվեց, կարմրեց, փայլեցան սև աչքերը։ Զգացի, որ բռներ էի անոր դադունիքը։

— Թեկուզ այդպես, հայրի՛կ, — վերջապես խոստովանեց ան և ոգևորված ավելացուց. — Այսպիսի ժամանակ ամոթ է տունը նստիլ, երբ զենք պիտի գործածել...

Այդպես, Հերմինեն գիշեր մը անհայտացավ տունեն ու այլևս անոր երեսը չտեսանք։

Այս խոսակցութեան ժամանակ հուզվել էր մայրը։ Պատուհանին մոտենալով, դրքի միջից նա վերցրեց մի փոքրիկ ծալված թուղթ, դողացող ձեռներով երկարեց ու շշնջաց.

— Սա Հերմինեիս միակ նամակն է...

Դեղնած թղթի վրա մատիտով գրված էր.

«Սիրելի մայրիկ, գիտեմ, Հերմինեդ քեզ մեծ վիշտ պատ-

Հառեց: Ներիր: ինծի, որ ես թողեցի քեզ, հայրիկին: Ուրիշ
չեմք չէի կրնար: Քեզի հպարտ զգա, որ Հերմինեդ իր կյան-
քը կնվիրե ժողովրդի ազատութեան ու երջանկութեան համար:
Գիտեմ, որ մեր թափած արյունն իզուր չպիտի անցնի, կար-
միր Բանակը պիտի դա և փրկե բոլորիդ: Հոգ մի ընեք: Բու-
դարիայի վրա ալ պիտի ծագի ազատութեան արշալույսը, և
այն ժամանակ Հերմինեդ նորեն պիտի վերադառնա քեզ
մոտ»:

— Հերմինեն այլևս չվերադարձավ, — շարունակեց հայ-
րը, — ես միայն անոր դիակը հանել տվի և թաղեցի այստեղ՝
Սոփիայի գերեզմանատան մեջ:

Սիրելի Սաշկայի, տասնութամյա կոմերիտուհու թաղման
օրը Սոփիայի թերթերը բազմաթիվ հուզիչ տողեր գրեցին
«Арменка»-ի մասին, հիշատակեցին փոքրիկ հայուհու մեծ
գործերը, ցույց տալով նրա բյուրեղի նման մաքուր կյանքն ու
ժողովրդին նվիրվածությունը: «Նրա անունը շրջապատված է
մարտիրոսացած հերոսուհու փառապաշտով: Նա արդեն ան-
մահացել է» — գրում էր բուլղար ռեժուցիոններ Մարվինա
Պրչվարովան:



Սոփիայի գերեզմանոցում այժմ հանգստանում է Սաշ-
կայի աճյունը: Հողն ամփոփում է դեռատի հայուհու ջերմ
սիրտը, որն այլևս դադարել է բաբախելուց: Նրա ծած արշա-
լույսը, որ նա այլևս չի տեսնում, լուսո ճաճանչներով է ողո-
ւել նրա գերեզմանը: Այստեղ, նրա շիրիմաթմբի վրա կան
թա՛րմ-թա՛րմ ծաղիկներ: Մարդիկ նորից այցելելով նրան,
նվիրական շիրմի վրա դրել են նրա սիրած սպիտակ ու կար-
միր քրիզանթեմներից մի զեղեցիկ ծաղկեպսակ՝ սպիտակ
մետաքսե ժապավենով, որի վրա բուլղարերեն տառերով գրը-
ված է.

«Անմոռանալի մեր Սաշկային, որ հերոսի մահով ընկավ՝
ֆաշիզմի դեմ մղված մարտերում»:

Իր պարտիզան ընկերների կողմից»:

ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԴՈՒՍՏՐԸ

Ռազմաճակատից վերադառնալիս՝ ծովափնյա Տ. քաղաքի մոտակա երկաթուղային կայարանում ես հանդիպեցի մի փոքրակազմ, թուխ աղջկա, որ հենակները թևատակին մոտենալով սանիտարական գնացքին, ուրիշների օգնությամբ վագոն բարձրացավ: Նրա երկու ոտներն էլ փաթաթված էին «պիտակ փաթաթաններով»:

Անձանոթ այս աղջկա հետ ես էլ վագոն բարձրացա և տեղավորվեցի ուղիղ նրա դիմացը:

Դժգույն էր նա: Նիհար դեմքին վառվում էին մութ աչքերը և մեկ-մեկ կծկվում էին դեմքի մկանները: Ըստ երեվույթին ցավեր էր զգում:

«Ցրտահարվել են ոտները» — մտածեցի ես, բայց ոչինչ չհարցրի:

Շուտով գնացքը շարժվեց. բոլորովին դադարեց աղմուկը: Թիկունքային հիվանդանոց փոխադրվող աղջիկներն ու տղաները մի պահ լուռ, հայացքները ուղղած վագոնի լուսամուտից դուրս, դիտում էին Կովկասյան ձյունածածկ լեռներն ու անտառները: Կսվում էր միայն գնացքի ուժեղ հեռոցը, որ արձագանքում էր ձորում:

Քիչ անց, մի վիրավոր աղջիկ մեղմ ձայնով սկսեց երգել մարտիկների սիրած երգը, որին ամբողջ վագոնը ձայնակցեց.

В тоске и тревоге
Не стой на пороге,
Я вернусь когда растает снег...

.

Նա ուշադիր դիտում էի դիմացս նստած աղջկան: Նրա դիմագծերն այնքան ծանոթ էին թվում ինձ:

Երգը դադարեց և զանազան դեղերի հոտով հագեցած վազոնում սկսեց աշխույժ խոսակցություն: Խոսում էին կոփվներից, պատմում իրենց վիրավորվելու հանգամանքները, դատողություններ անում պատերազմի ընթացքի ու ելքի մասին: Այս ծանր օրերին էլ հաղթանակի հավատը չէր լքում նրանց:

— Ըստ երևույթին ցուրտն է տարել ձեր ոտները, ընկեր սանիտարուհի, — հետաքրքրվեցի ես դիմացս նստած աղջկանից, որ իր մտքերով տարված՝ չէր խոսում ոչ-որի հետ:

Նրա սևորակ աչքերում խաղաց մեղամաղձատ ժպիտը: Մի պահ ոչինչ չպատասխանեց: Հետո, տեսնելով, որ ես սպասում եմ պատասխանի, ակամա խոսեց.

— Նախ, ընկեր լեյտենանտ, ես սանիտարուհի չեմ, ապա ոտներս ոչ թե ցուրտն է տարել, այլ տաքը...

Տարօրինակ թվաց լուրջ տոնով տրված այդ պատասխանը: Ի՞նչպես թե տաքը... Կրկնապատկված հետաքրքրություն մը ես նորից հարց տվի.

— Չհասկացա՛, ինչպե՞ս թե տաքն է տարել...

Այս անգամ աղջիկը խորամանկ ժպտաց և խորհրդավոր ավելացրեց.

— Պարզապես տաքը, կրակը, խարույկը, հասկացա՛ք...

— Ո՛չ. ներեցե՛ք, նորից չհասկացա, — կրկնեցի, ուշադիր և հարցական նայելով նրա աչքերին:

Արդեն զգում էի, թե ինչ-որ արտասովոր պատմություն կար այս աղջկա հետ կապված, մի հետաքրքիր պատմություն, որն ինձ՝ որպես ռազմաճակատային թերթի թղթակից անհրաժեշտ էր անպայման իմանալ: Ննթադրելով, որ նա հայուհի կլինի, ես հայերեն մտերմորեն հարցրի.

— Կարժեմ դուք հայ եք:

— Այո՛, — աշխուժացավ նա:

— Հայաստանի՞ց:

— Այո՛, Կոռուց:

— Դե՛, ուրեմն հայրենակիցներ. ենք. հիմա խնդրում
եմ ասացեք, թե ինչպես կրակը տարավ ձեր ոտները:

Աղջիկը նեղն ընկավ: Մտերիմ խոսակցություններից
հետո, տեղի տվեց իմ խնդրանքին: Ես լուռ ու լարված լսում
էի նրան:

...Պատերազմի սկզբին, նա Մոսկվայում սովորում էր
տեխնոլոգիական ինստիտուտում: Շուտով հրաժարվում է
սովորելուց և կամավոր մեկնում ռազմաճակատ: Զորամա-
սում ցանկանում են օգտագործել որպես սանիտարուհի:
Աղջիկը բողոքում է և պահանջում, որ իրեն սովորեցնեն
վնդացրից կրակել:

— Չապակի դիվիզիայի գնդացրորդ Անկան էր միշտ
իմ աչքերի առաջ և ես, ինչ գնով էլ լինի, ուզում էի անպայ-
ման գնդացրորդ դառնալ, — ոգևորված պատմում է նա:

Հրամանատարությունը բավարարում է նրա համառ պա-
հանջը. նա կարճ ժամանակամիջոցում զորամասում հռչակ-
վում է որպես խիզախ և հմուտ վնդացրորդուհի: Իր անձ-
նուրաց, հանդուգն գործերի ու տոկունության համար նրան
սիրում են մարտիկներն ու հրամանատարները և Չապակի
անվախ վնդացրորդուհուն հիշելով, նրան անվանում են Ան-
կա, թեև նա 19 տարի Սոնյա էր կոչվել:

Պաշտպանողական բազմաթիվ արյուճնալի մարտերի է
մասնակցում փոքրիկ հայուհին: Նրա վնդացրի դիպուկ կրա-
կը հնձում է թշնամու շատ զինվորների:

Մի անգամ, սակայն, այնպես է պատահում, որ թշնա-
մուն հաջողվում է շրջապատել Սոնյայի վնդացիրը: Աղջիկը
կրակում է մինչև վերջին փամփուշտը, սպանված ընկերոջ
ափսոսմատում մնացած բոլոր փամփուշտները, բայց գեր-
մանացիներին հաջողվում է նրան կենդանի բռնել և որպես
«լեզու» տանել իրենց հրամանատարի մոտ: Հենց այստեղից
էլ սկսվում է նրա ոտների պատմությունը:

— Դուք ո՞ր դիվիզիայից եք, — կեղծ քաղաքավարությամբ
և իր ձայնի մեջ քնքշություն մտցնելով հարց է տալիս գեր-
մանական սպան:

Գնդացրորդ աղջիկը լռում է:

Սպան՝ այս անգամ տոնը մի քիչ բարձրացնելով՝
կրկնում է իր հարցը:

Աղջիկը նորից է լռում:

Թաքցնելով զայրույթը՝ սպան համբերատար շարունա-
կում է իր հարցաքննությունը:

— Ասացեք խնդրեմ, ի՞նչքան զորք կա ձեր հատվա-
ծում... դումարտա՞կ, դո՞ւնդ, դիվիզիա՞...

— Չեմ հաշվել, կարիք չեմ ունեցել հաշվելու, — վերջա-
պես շոր պատասխանում է աղջիկը:

Գերմանական սպան դեռատի աղջկա այս արհամարհա-
կան, հանդուգն պատասխանից գազազած՝ ոտքի է ելնում ու
ձեռքը խփելով սեղանին:

— Խո՞ղ, կեղտոտ խո՞ղ, — ճշում է նա, — նման պատաս-
խանների համար ես քեզ անմիջապես կգնդա՛կահա՛րե՛մ:
Բայց կա՛ց, սատանա՛, նախ քան այդ՝ ես քեզ խոսնեցնել
կտամ. դո՛ւ կխոսե՛ս:

Քիչ հեռուն հիտլերականները խարույկ էին վառել՝ տա-
քանալու համար: Սպան հրամայում է իր զինվորներին՝
աղջկան քարշ տալ դեպի խարույկը:

— Այսպես, կամ կպատասխանեք իմ հարցերին, կամ
կայրվեք խարույկի վրա. այժմ կատարեցեք ընտրություն, —
հաղթական տոնով հայտարարում է ֆաշիստական սպան:

Սոնյային տանում են խարույկի մոտ, հանում են նրա
կոշիկները և ոտները մոտեցնում կրակին: Այրվածքի սուր
ցավերից աղջիկը ճշում է:

— Հիմա կասե՛ս ամեն ինչ, — հարց է տալիս գլխին
կանգնած սպան: Սոնյան զզվանքով նայելով մարդակերպ
գազաններին, լոկ մի բառ է արտասանում:

— Ո՛չ...

Անասնացած ֆաշիստները նորից սկսում են այրել
աղջկա ոտները:

Այդ պահին մերոնք անակնկալ կերպով հրետանային ու
ականետային կրակ են բացում խարույկի ուղղությամբ:

խարուշկին շատ մոտիկ պայթում են արկերն ու ականները։
Գերմանացիները շտապ թողնում են խարուշկը և խուճապա-
հար թաքնվում այս ու այն կողմ։ Սոնյան էլ իսկույն
նետվում է մոտակա փոսի մեջ և այրվածքի պատճառած
սուր ցավերից ուշաթափվում։

— Զգիտեմ ինչքան ժամանակ էր անցել, — հուզված
պատմում է աղջիկը, — մեկ էլ աղմուկից գլուխս բարձրացրի
և ի՜նչ տեսնեմ. մերոնք, իմ ընկերները կանգնել էին գլխու
և ուրախությունից դողդողացող ձայնով աղաղակում էին.

— Անյա՛, Անոշկա՛, դու կենդանի՞ ես...

Նրանք փաթաթվում էին վզովս ու համբուրում։ Սա
հրաշք չէր, երազ չէր, այլ իրականություն։ Նա փրկված էի։

— Ինչպես տեսնում եք, ընկեր լեյտենանտ, ոչ միայն
ցուրտը, այլև տաքն էլ է տանում ոտքը, — վերջացրեց իր
պատմությունը մեր լեռնաշխարհի դուստր Սոնյա Չիլին-
գարյանը։



Սոնյային երկրորդ անգամ հանդիպեցի Թամանի թերա-
կղզում։

...Վաղ առավոտյան թերակղզին կարծես ծխում էր։
Արևածագին սպիտակ գոլորշի էր բարձրանում թաց գետ-
նից, ծովի գորշ ջրերի վրայից։ Այդ սպիտակավուն քողի-
միջով սովետական բազմաթիվ տանկեր առաջ էին սլանում
դեպի Թաման։ Տանկերի հետևից առաջ էին շարժվում մեր
հետևակայինները։ Այդ մարտիկների շարքում, չայկական
89-րդ դիվիզիայի № զորամասի հետ, առաջ էր վազում
լեյտենանտի հագուստներով մի փոքրիկ աղջիկ։ Այդ աղջիկը
դասակի հրամանատար Սոնյա Չիլինգարյանն էր։ Առաջին
հայուհին, որ սպայական կուրսերն ավարտելով՝ դարձել էր
մարտական հրամանատար։

Սոնյան Կարմիր Բանակի զորամասերի հետ մտավ Թա-
ման։ Թշնամին ոչնչացվել կամ շարտվել էր ծովի մյուս

ափը: Առաջին ազատարարը լինելու բերկրանքից, ավելի էր պայծառացել Սոնյայի արևալատն, կենսուրախ դեմքը:

Հաղթանակի գիշերը քունը չէր կաշում նրա աչքերին: Աղջիկն ապրում էր հաղթանակի քաղցրությամբ և ապագայի վառ հեռանկարներով:

Այո՛, շուտով կվերջանա արհավիրքը, ինքը կվերադառնա Մոսկվա, նորից կշարունակի ուսումը, բայց այս անգամ արդեն բոլորովին սերիշ տեղ:

Սոնյայի քաղցր մտորումներն ընդհատեց ընկերուհու անակնկալ հարցը.

— Սոնեչկա՛, պատերազմը որ վերջանա էլի՞ կդնաս տեխնոլոգիական ինստիտուտ:

Տարօրինակ զուգադիպություն: Հենց ինքն էլ հիմա մտածում էր այդ մասին:

Պայծառացած, ուրախությունից վառվող սև աչքերը հանելով ընկերուհուն, նա պատասխանեց.

— Ո՛չ:

— Բա հրաժարվո՞ւմ ես ինժեներ դառնալուց:

— Այո՛, սիրելիս:

— Ապա ի՞նչ ես ուզում դառնալ:

— Առաջին կին գեներալը, — պատասխանեց Սոնյան հպարտ ժպտալով:



Խուսադեմի կաթնամշուշի միջից հազիվ էին նկատվում Լոյկովի անվան մետալուրգիական գործարանի ումբակոծությունից կիսաքանդ կորպուսները: Գործարանի շուրջը խրամատավորված գերմանացիները օգտագործելով պաշտպանության համար խիստ նպաստավոր այդ տեղանքը, ուժեղ կրակով պահպանում էին կերչ քաղաքի մատույցները: Սովետական դեսանտայինների ու ֆաշիստների միջև գիշեր ու ցերեկ արյունալի մարտեր էին տեղի ունենում ամեն մի թիղ հողի համար:

...Վաղ առավոտյան աղջամուղջին, գետնատնակում տեղավորված շտաբում մայորի դեմ կանգնած էր կուբանկան գլխին, կիսամուշտակ և բամբակե հաստ շալվար հագած մի դեռատի լեյտենանտ և մարտական առաջադրանք էր ստանում:

— Ձեր անձնական ցանկության համաձայն, — ասում էր մայորը, — ձեզ եմ նշանակում գրոհիչ խմբի ղեկավար. բայց խմացեք, որ դուք հանձն եք առնում դժվարին մարտական խնդիր... Վոյկովի գործարանները թափանցելը ռազմական հմտության քննություն է լինելու ձեզ համար...

— Խնդիրը կկատարվի, ընկեր մայոր, — կարճ պատասխանեց լեյտենանտը և դուրս դալով հրամանատարական գետնատնակից, ականանետային կրակի տակ հասավ իր ստորաբաժանումը:

Մի քիչ անց ավտոմատավորներն առաջ էին շարժվում: Նրանք արագորեն մոտենում էին Վոյկովի գործարանին: Գրոհիչ խմբի հրամանատար լեյտենանտն իր տարերքի մեջն էր: Նա ձգտում էր առաջ և իր ետևից տանում էր բոլոր մարտիկներին: Գնդացրորդներն ու ավտոմատավորները փորսող տալով աննկատելիորեն առաջ էին ընթանում՝ ջանալով կրճատել վճռական գրոհի տարածությունը: Լեյտենանտի այդ ցանկությանն օգնում էր գետնին լողացող դեկտեմբերյան մշուշը:

Կարճ, բայց կատաղի մարտ տեղի ունեցավ գրոհող ռազմիկների և գործարանային կորպուսներից մեկի ավերակներում թաքնված գերմանացիների միջև: Լեյտենանտն իր ավտոմատով սպանեց մի քանի ֆաշիստ և նոնակով լոցրեց փլատակների միջից գործող թշնամու զնդացիներ: Այդ րոպեին հրամանատարն իր հետևից մի ձայն լսեց.

— Ընկեր լեյտենանտ, զգո՛ւյշ, կիսփվեք, պառկեցե՛ք գետնին...

Լեյտենանտը շպատախանեց: Փայլում էին նրա թուխ աչքերը և քրտինքը պսպղում էր ճակատին...

Գրոհը վերջացավ մարտական առաջադրանքի կատարու-

մով: Ավտոմատավորներն ամրացան իրենց նոր գրաված դիրքերում:

Գրոհող քաջերն ու նրանց հրամանատար Սոնյա Չիլին-գարյանն արժանացան հրամանատարութեան շնորհակալութեանը և առաջադրվեցին կառավարական պարգևի:

Գնդի հրամանատարի քաղաքական դժով տեղակալ մայոր Մխիթարյանը պատմում է, որ Սոնյան հաճախ գալիս էր հրամանատարի մոտ և խնդրում՝ իրեն հետախուզութեան ուղարկել: Կոխվն ու ռազմական արկածներով լի կյանքը դարձել էր այդ գեռատի, վառվռուն հայուհու տարերքը:



Քառասուններեք թվի դեկտեմբերի քսանհինգի առավոտը Կերչի թերակղզում բացվեց շափաղանց մռայլ ու փոթորկալի: Գորշ ամպերը կապարի նման ծանրացել էին երկնակամարի վրա, հուզված ծովը արշավում էր դեպի ծովափ, իսկ իր մղձավանջն ապրող գաղաղած թշնամին ցամաքից և շղից կատաղի կրակ էր տեղում սովետական դեսանտայինների վրա՝ նրանց ծով նետելու համար: Բայց մարտիկներն անսասան էին մնում իրենց գրաված յուրաքանչյուր մետր հողում:

Վաղ առավոտյան, ծովի ջրով իր դեմքը թարմացնելուց հետո՝ Սոնյան հիացած դիտում էր գրոհող փրփրակուտակ ալիքները, որոնք մեկը-մյուսին հրելով, ահեղ շառաշով խփվում ու փշրվում էին ծովափնյա ժայռերի վրա:

Բնութեան տարերքի այդ մարտը առատ հույզեր էր զարթեցրել Սոնյայի հոգում: Այո՛, ամեն տեղ կոխվ է՝ և՛ ցամաքում, և՛ ծովում: Բայց ահեղ փոթորիկներին միշտ էլ հաջորդում է խոր խաղաղությունը: Բնությունը նորից կփռվի իր կապույտ թովչութեամբ:

Սոնյան ռազմի թոհ ու բոհից վերացած, մի պահ երազում էր. —

Ահա Սովետական Բանակը արդեն մոտեցել է թշնամու

որջին՝ Բեռլինին: Ահա ինքը՝ իր ավտոմատավորների գլուխն
անցած՝ հաղթական մարտեր է մղում Բեռլինի պատերի
տակ: Ահա, վերջապես, ծնկաշոք Բեռլինի վրա ծածանվում
է հաղթողների դրոշը և իր հետ ցնծում է ողջ սովետական
հայրենիքը, ամբողջ գեմոկրատական աշխարհը...

Ու նա հաղթող զինվորի օրինական հպարտությամբ,
Բեռլինից հայրենիք է վերադառնում, հայրենիք, ուր ամեն
ինչ հարազատ է, հին և մշտապես նոր ու թարմ, ուր ամեն
ինչ ժպտում է հոգեթով ժպտով...

Եվ նա նորից ջերմ, քնքուշ սիրո խոսքեր է լսում.

— Սոնյա՛, Սոնեչկա՛...

Ռումբերի ու արկերի սրտոնները սթափեցնում են երազ-
ներով տարված աղջկան: Այժմ պետք է մտածել միայն
հաղթելու մասին, միայն Բեռլին մտնելու մասին:

Սոնյան ստուգում է ժամացույցը: Ժամն ուղիղ ութն է:
Նա շարժվում է դեպի հրամանատարական կետը: Այդ միջո-
ցին թշնամու արկը պայթում է նրան շատ մոտիկ և ծանր
վիրավորում նրան: Սոնյան ընկնում է՝ արյունով ներկելով
հայրենի հողը:

Իրենց հրամանատարին անմիջապես օգնության հասնող
մարտիկները տեսնում են, որ նրա վերքը մահացու է: Այդ
դպում է և Սոնյան: Մշուշված հայացքով, նա վերջին անգամ
նայում է Ղրիմի ամսյամած երկնքին, իր մարտական ըն-
կերների մռայլ դեմքերին: Ասես մահամերձ աղջկա աչքերի
առաջ պարզվում են կապույտ քողի մեջ ննջող հայրենի
էոովա զմբուխտ լեռները, որոնք այլևս երբեք չէր տեսնելու
դպում են շրթունքները և նա հազիվ լսելի շշնջում է.

— Որ հասնեք Բեռլին...

Ու կիսատ՝ նվաղում է նրա ձայնը:

Հավիտյան փակվում են Սոնյայի մշուշոտ աչքերը...



Քառասունհինգ թվականի մայիսին, Բեռլինում, կիսալեր
Ռայխստագի պատի ամենաբարձր մի անկյունում երևաց
զինվորական կոշտ ձեռներով գրված երկտողանի մի մակա-
դրություն.

«Հավե՛րժ փառք մեր անմոռանալի հրամանատար Սոնյա
Չիլինգարյանին:

Նրա դասակի մարտիկներ»:

1945 թ.

Ը Ն Դ Ն Ա Տ Ա Կ Ո Ւ Մ

Արևի ճառագայթների մի բարակ շերտ վարագույրի արանքից ընկել էր կիսամութ ու զով սենյակի մեջ: Լույսի այդ դիծը լուսամուտի առաջ դրված փոքրիկ հայելու միջից անդրադառնալով, ծիածանի բոլոր գույներով խաղում էր նկարազարդ պատերի վրա:

Խաղաղ սենյակում, սեղանի մոտ նստել էին երկու հոգի—բրոնզագույն, խոշոր ու առնական դեմքով մի երիտասարդ, նրա դիմացը՝ թխաշյա, կուպրի պես սև մազերով, կենսուրախ մի աղջիկ, որի լիքը այտերին փոսիկներ էին դոյանում խոսելիս:

Աղջիկը շափաղանց ցած ձայնով ինչ-որ բան էր պատմում երիտասարդներին:

— Այդ շատ լա՛վ է, շա՛տ լավ, — ընդմիջում էր նրան երիտասարդը:

Աղջիկը տեղեկություններ էր հաղորդում գերմանական կայազորի և քաղաքում տիրող դրության մասին:

— Զգո՛ւյշ, սիրելի՛ս, զգո՛ւյշ, — շնչում էր երիտասարդը, — Սիմֆերոպոլի բնակչության մեջ շափաղանց կոնսպիրատիվ ձևերով պիտի աշխատել, այնտեղ վխտում են Գեստապոյի գործակալները: Իսկ Բախչի-Սարայի ռազմագերիների ճամբարը հարկավոր է շուտ-շուտ այցելել: Մենք այժմ այնպես պետք է աշխատենք, որ ավելի շատ ռազմագերիներ փախչեն ճամբարից և գնան պարտիզաններին միանալու:

Գնչուական դիմագծերով աղջկան՝ Պարաբաղի դուստր, Հրանուշին այդպես էր խորհուրդ տալիս Շաքուլ-Սեվաստյանովկա գյուղերի ընդհատակյա հակաֆաշիստական կազմակերպության ղեկավար՝ Վրաստանի կոմերիտմիության սան Սուրեն Պողոսյանը:

Այդ օրը՝ ֆաշիստական պահակի անուշադրությունից օգտվելով՝ Հրանուշին հաջողվեց անտառում աշխատող ռազմագերիներին նորից հանձնել տպագրված թռուցիկներ, «Կրասնի Դրիմ» պարտիզանական թերթի մի քանի օրինակ, ինչպես նաև ծխախոտ ու հին թերթեր՝ ծխախոտ փաթեթելու համար:

Նա տաժանակիր աշխատանքի դատապարտված ռազմագերիներին տեղեկացրեց, որ անցյալ շաբաթ աշխատանքի վայրից փախած բոլոր ռազմագերիները հաջողությամբ հասել էին անտառ՝ պարտիզանների մոտ:

Երեկոյան, երբ Հրանուշը վերադառնում էր անտառից, գերմանացի պահակը նկատելով նրան՝ գոռաց.

— Կանգնե՛լ, թե չէ՝ կկրակե՛մ...

Հրանուշը կանգ առավ, դժգույն ու շփոթ, բայց շուտով տիրապետեց իրեն ու սկսեց հանգիստ քայլերով մոտենալ պահակին: Ռազմագերիները տազնապի մատնվեցին: Ժամապահը հիմա կխուզարկի նրան, կհայտնաբերի հակաֆաշիստական գրականութուն, և ահա, Գեստապոյի նկուղներում տանջամահ կլինի այս հանդուգն աղջիկը, — անցավ բոլորի մտքով:

— Ի՞նչ գործ ունեիք այստեղ, — գոռաց պահակը:

Հանգիստ ու սիրալիր հայացքով նայելով պահակի խոժոռած դեմքին, աղջիկը միամիտ պատասխանեց.

— Սիրելի՛ս, եկել էի ծխախոտ վաճառելու... Վերջապես պետք է ապրել մի կերպ... այդպես չէ՞...

Ժամապահը մի պահ դիտեց գեղեցիկ աղջկան, որի աչքերը կախարդիչ կերպով փայլում էին, հետո ուշադիր զննեց նրան ձեռքի զամբյուղն ու ինչ-որ բան կասկածելով՝ պահանջեց.

— Բայ արե՛ք զամբշուղը:

Քիչ հեռվից ռազմագերիները տաղնապով հետևում էին աղջկա և պահակի խոսակցությանը:

Ահից ուժեղ տրոփեց Հրանուշի սիրտը: Եթե՝ պահակը ուշադիր նայի զամբշուղի մեջը, պրպտի՛ հատակը... Այնտեղ դեռ մի օրինակ մնում էր «Կրասնի Ղրիմ» թերթից, որի ճակատին գրված էր՝ «Մա՛հ գերմանական զավթիչներին»:

Բայց դանդաղելն ավելի շատ կասկածներ կարող էր հարուցել պահակի մոտ:

Հրանուշը համարձակ, անմիջապես բացեց ձեռքի զամբշուղը և միջից ծխախոտի տուփը հանելով՝

— Խնդրե՛մ, ծխե՛ք, լավ ծխախոտ է, — ասաց նա ժրպտալով:

Պահակը վերցրեց ծխախոտը, թեթև հայացք նետեց զամբշուղի մեջ, հետո աղջկան դառնալով ասաց.

— Գնացե՛ք:

Ու Հրանուշը անտառային կաժանով հանգիստ շարունակեց իր ճանապարհը:



Զովաշունչ երեկոն իջել էր անտառի վրա, երբ Հրանուշը վերադառնում էր պարտիզանների մոտից:

Կապտավուն շղարշով էին պատել կանաչ ծառերն ու թփուտները: Անտառային կաժանի եզրերին իրենց փոքրիկ, կապույտ աչիկներն էին բացել մանուշակները:

Հրանուշը քայլում էր արագ, բոլորովին անտարբեր բնության այդ գեղեցկություններին: Հոգնել էր և բարձունքում, հին կաղնու տակ մի պահ կանգ առավ՝ հանգստանալու: Միտք էր անում: Ինչքա՛ն գեղեցիկ է Ղրիմի դարունը, ամեն ինչ կանաչում է, ծաղկում, կյանքի հյուսված լցվում: Իսկ մարդի՛կ: Մարդիկ թռչնում են, հյուծվում ֆաշիստական լծի տակ: Ինչքա՛ն դառնացավ կյանքը...

Այս մտքերով տարված, շարունակելով ճանապարհը,

նա հասել էր Ալմա կայարանը, երբ հանկարծ նկատեց, որ դերմանական ոստիկանությունը շուրջկալ է կատարել և ինքն էլ գտնվում է շրջապատման մեջ:

— Յույց տվեք ձեր փաստաթուղթը, — Հրանուշից պահանջեց շիկամորուս մի ոստիկանապետ:

— Մոտս փաստաթուղթ չունեմ. ես եկել էի բարեկամիս տեսնելու, — հանգիստ պատասխանեց աղջիկը:

Հրանուշի հանգստությունը չժաբեց ոստիկանապետին: Ետ դառնալով, նա իր օգնականին հրամայեց.

— Վերցնե՛լ սրան:

Աղջկա թևից բռնելով, կոպտորեն քաշ տվեց միջահասակ, դեղնավուն մազերով մի ավագ ոստիկան:

Այդ վայրկյանին ոստիկանի հայացքը հանդիպեց աղջկա տափնապալի աչքերին:

Հրանուշի սիրտը տրոփեց ուժգին: Սա՛ նա՛ է, իրենց պարտիզանական ջոկատի անդամը, որը վաղուց էր անհայտացել, այո՛, այո՛, նա՛ է. ո՛չ մի կասկած: Նո՛ւյն աչքերը, նո՛ւյն հասակը, միայն այժմ չաղացած ու տարբեր հագուստով... Ուրեմն նա՛ Ստյոպա Դենիսյովը դավաճան է — ֆաշիստական լրտես: Ուրեմն նա կարող է մատնել պարտիզանական ամբողջ ջոկատը...

Արդեն մթնշաղն իջնում էր կայարանի վրա, երբ կալանավորված մի բազմություն սպասում էր գնացքի դալուն՝ Սիմֆերոպոլ փոխադրվելու համար:

Գնացքը կանգ առավ կայարանում և կալանավորներին սկսեցին լցնել վագոնի մեջ: Հրանուշին նույնպես հրելով մտքին վագոնից ներս:

«Այսքան էլ անշնորհքություն, ինչպես չկարողացա խուսափել շուրջկալից», — ինքնիրեն մեղադրում էր աղջիկը:

Վագոնի մեջ խռնված մարդիկ մռայլ մտքերի մեջ էին ընկել. նրանք ծխում էին անընդհատ:

Բոպեններ էին մնում գնացքի մեկնելուն: Այդ միջոցին նույն ավագ ոստիկանը, քրտնած ու ցասումնալի, մտավ վա-

դոն, գտավ Հրանուշին և հայհոյելով քարշ տվեց վագոնից դուրս:

Նրանք վագոնից ներքև իջան ու առաջացան ամբոխի մեջ: Մթությունն արդեն տարածվում էր կայարանի վրա: Խաղաղության մեջ հնչեց վերջին դանդը: Գնացքն սկսեց դանդաղ առաջ շարժվել: Այդ վայրկյանին ավագ ոստիկան Դենիսյուկը մեղմ թեանցեց Հրանուշի մեջքն ու կարեկից, փաղաքշական ձայնով շշնջաց.

— Դե՛, հիմա չքվի՛ր, Անյա՛, անուշի՛կս, շո՛ւտ չքվի՛ր, ցտեսություն և հաջողություն...

Ու նա շատալ բաժանվելով՝ մոտեցավ դանդաղորեն ընթացող գնացքին և բարձրացավ վերջին վագոնի առաջնանի վրա:

Մի պահ Հրանուշը չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Նրա՞դ էր այդ բոլորը, թե՞ իրականություն: Նա զգում էր միայն, որ սրտից դուրս էր պոռթկում բերկրանքը և արտասուքներով թափվում աչքերից:

Թաց աչքերով նա երկա՛ր ու երկա՛ր դիտում էր գնացքի վերջին վագոնի կարմիր լույսի հետ մթնշաղի մեջ անհայտացող ավագ ոստիկան Ստյոպա Դենիսյուկին և, որպես շնորհակալության նշան, իր փոքրիկ, սպիտակ թաշկինակն էր շարժում անհետացող գնացքի հետևից...



Քառասուն երեք թվականի դարնան մի օր, վաղ առավոտյան, նորից տազնապի մեջ էր ամբողջ քաղաքը: Գերմանացիները դարձյալ կախաղան էին բարձրացրել սովետական մարդկանց՝ պարտիզանների հետ կապ ունենալու մեղադրանքով:

Սենյակում, մենակ նստած՝ սաստիկ հուզվել էր Հրանուշը: Միջնակարգ դպրոցը նոր ավարտած աղջկա սիրտը լցվել էր անհուն տխրությամբ: Վիշտը բարձրանում էր մինչև նրա կոկորդը և ծանրացած մնում այնտեղ:

Քիչ հետո սենյակից ներս մտավ Հրանուշի մայրը, նա դժգույն էր: Գլխի վրա ցրիվ էին եկել սպիտակած մաղերն ու հուզումից դողում էր ամբողջ մարմնով:

— Հրանո՛ւշ, տեսե՛լ ես կախաղանները, — դողդողաց մոր ձայնը:

— Տեսե՛լ եմ, — տխուր պատասխանեց աղջիկը:

Արևի շողքի մի շերտ թափանցել էր լուսամուտից ներս և ընկել Հրանուշի մուգ դեմքի վրա: Առկայծում էին նրա թուխ աչքերը:

— Աղջի՛կս, սիրելի՛ս, — կերկերաց մոր տագնապալի ձայնը, — վախենում եմ, որ մի օր այդ կախաղանը մեր դռան առաջ էլ չոքի: Ա՛խր դու... Ու այլևս չկարողանալով շարունակել, փաթաթվեց աղջկան և լաց եղավ:

Հրանուշը արձանացել էր: Հետո ոտքի բարձրանալով, մի պահ անխոս դիտեց վշտահար մորն ու ապա գլխարկը վերցնելով, գործովալի շշնջաց:

— Մամա ջան, այս դիշեր ինձ մի սպասի, ես դնացի...

Կարծես կսկծից ճռալով, դուռը փակվեց ու նորից կախաղանների աշխարհը դուրս եկավ ընդհատակի աղջիկը:



Երկրորդ օրը, երեկոյան, Հրանուշը վերադարձավ Բախչի-Սարաչի ռազմագերիների ճամբարից: Այնտեղ, աշխատանքի վայրում նա կազմակերպել էր 20 հոգու փախուստը պարտիզանների մոտ և այժմ հոգնած, բայց գոհ սրտով նրստել տանը, սենյակի մի անկյունում և լուսամտորումների մեջ էր: Այդ միջոցին դուռը բախեցին: Մայրը անորոշ երկյուղով դուռը բացեց: Հանկարծ, դռան առաջ կանգնած գերմանական ռատիկանին տեսնելով, գլուխը պտտվեց և հազիվ-հազ կարողացավ պատին հենվել՝ հստակին շքնկնելու համար:

— Այստե՛ղ է ապրում Անյան:

Մոր լեզուն կապ ընկավ, նա ոչինչ չկարողացավ պա-

տառախանել: Կնոջ այդ տագնապը նկատելով, ֆաշիստական
ոստիկանն անմիջապես ավելացրեց.

— Մամաշա՛, մի՛ վախենա, ես անվնաս մարդ եմ. եկել
եմ մի քանի րոպեով մեր Անյային տեսնելու:

Գերմանական ոստիկանի համադրեցածով մարդուն տես-
նելով՝ աղջիկը թեթև ժպտաց ու աթոռ առաջարկեց:

Պատավ մայրը խաղաղվեց ու գլուխն օրորելով դնաց
իր դորժին:

Ոստիկանը ծխախոտի գլանակի միջից հանեց մի փոք-
րիկ թուղթ և Հրանուշին երկարեց:

Հրանուշը շտապ կարդաց միտոդանի գրությունը — «Լսի՛ր
և կատարիր»: Ու ծանոթ, անընթեռնելի ստորագրություն:

Գերմանական ոստիկանի համադրեցածով մարդը՝ պար-
տիզան Ստյոպա Դենյիսուկը, խուզարկու հայացքով ղննեց
շուրջը և ապահով լինելով, որ ոչոք չի լսում իրեն, ցածրա-
ձայն ասաց.

— Անյա՛, Բախչի-Սարայ-Սիմֆորոպոլ երկաթգծով եր-
կու օրից հետո անցնելու է գերմանական զրահապատ դնաց-
քը. որոշում կա պայթեցնել այն:

— Բայց դրա համար պայթուցիկ նյութ է անհրա-
ժեշտ, — ընդմիջեց Հրանուշը:

— Հենց այդ պործով էլ Սուրենն ինձ ուղարկել է քեզ
մոտ:

Միառժամանակ լռություն տիրեց: Ո՛րտեղից ճարել ան-
հրաժեշտ պայթուցիկ նյութը: Վեց-յոթը կիլո... Այդքանը
կարելի չէր ծանոթների միջոցով գողանալ պահեստից, գըր-
պանում թաքցնել:

Այդ մասին էր մտածում Դենյիսուկը, երբ Հրանուշը
վճռելով հարցը, ինքնագոհ ասաց.

— Հայտնի՛ր Սուրենին, որ հրամանը կկատարվի
որոշված ժամկետին:

Գիշերն Հրանուշն այցելեց ռազմամթերքի գերմանական
պահեստներից մեկում որպես բանվոր աշխատող իր ընկե-
րոջ՝ Սերգեյ Մակարովին ու նրա հետ պայմանավորվեց պա-
հեստից պայթուցիկ նյութ դուրս բերելու մասին:

Հետևյալ օրը քաղաքի ծայրամասում դռնվող գերմանական ռազմամթերքի պահեստի առաջ հայտնվեց մի դեռատի կին, որ մայթի վրայով քշում էր ձեռքի փոքրիկ սալակը: Հասնելով պահեստի դռան առաջ, նա կանգ առավ, արևից պաշտպանելու համար ծածկեց սալակի մեջ քնած երեխայի դեմքը, ուղղեց վերմակը և ժամապահից սիրալիր խնդրեց՝ թույլ տալ իրեն՝ պահեստում աշխատող ամուսնուն մի քանի րոպեով տեսնելու:

Ժամապահը մերժեց:

— Կողմնակի անձերին չի կարելի պահեստ մտնել, — չոր ասաց նա:

— Ես պահեստ չեմ մտնի, պարո՛ն ժամապահ, երեխաս հիվանդ է, ուղում եմ հենց դռան առաջ մի քանի խոսք ասել ամուսնուհ, — նորից խնդրեց դեռատի կինը:

Գեղեցիկ կնոջ գերմաներեն խոսակցությունից ժամապահը մեղմացավ:

— Ձեզ երեք րոպե ժամանակ, — ասաց նա, կանչելով Սերգեյ Մախարովին:

Երբ ժամապահը մի քանի քայլ թիկնադարձ հեռացավ պատի երկայնքով, Սերգեյը պահեստի դռան հետևից մի տոպրակ վերցրեց և շտապ դրեց սալակի մեջ, իսկ կինն անմիջապես երեխայի վերմակով ծածկեց այն: Նույն վայրկյանին գերմանացին ետ դարձավ, մոտեցավ սալակին և ձեռքը երկաթեց՝ վերմակը բացելու և փոքրիկին տեսնելու համար:

Գեռատի կինը և ամուսինը գունատվեցին: Սարսափելի է... սարսափելի... եթե հանկարծ ժամապահը բաց անի վերմակը... ամեն ինչ կխորտակվի, ամեն ինչ... և՛ գոթծը և՛ իրենք...

Սակայն, մայրը ելք գտավ ծանր դրությունից:

— Զգո՛ւյշ, պարոն ժամապահ, դեռ նոր քնեց հիվանդ բալիկս, — խոսեց նա մտահոգված, — վախենում եմ զարթնի, այնքա՛ն տանջել է ինձ այսօր, այնքա՛ն լացել:

Եվ Հրանուշը ժամապահին շնորհակալություն հայտնելով, երեխայի սալակը քշեց դեպի տուն, վերմակի տակ տանելով պայթուցիկ նյութը:

Երկու օրից հետո, ամբողջ քաղաքում լուր տարածվեց, որ պարտիզանները պայթեցրել են գերմանական զրահապատ գնացքը:



Անցնում էին ընդհատակյա գործունեության ամիսներն ու տարիները: Սովետական Բանակը վաղուց ձեռնարկել էր հարձակողական մարտերի՝ ամեն օր ազատագրելով Ֆաշիստական արյունոտ լծի տակ տանջահար մեր քաղաքներն ու գյուղերը: Մեր զորքերը հարավից դեսանտ էին իջել Կերչի թերակղզին, իսկ հյուսիսից՝ արդեն մոտենում էին Պերեկոպին: Վրա էին հասնում Ղրիմի պարտիզանների երազած օրերը:

Վերջնական հաղթանակի այս մոտալուտ օրերին մեծ դժբախտություն պատահեց Հրանուշի հետ: Մարտական առաջադրանքի կատարման ժամանակ, նա ընկավ գերմանացիների ձեռքը:

Դեռատի աղջկա համար սկսվեց դաժան հարցաքննությունների ու փորձությունների շրջանը:

...Հարցաքննությունից հետո Հրանուշին դուրս բերին Գեստապոյի քննիչի առանձնասենյակից և հարվածելով՝ հասցրին նկուղ, ուր երկու գեղջկուհի կային, որոնք նույնպես մեղադրվում էին պարտիզաններին օժանդակելու մեջ: Նրանք կարեկցությամբ հետաքրքրվեցին աղջկա միճակով և օգնեցին արյունոտ մայկան հանելու:

Չնայած սաստիկ ցավերին, աղջկա բերնից ո՛չ մի

տրտունք, ոչ մի հառաչանք չէր լսվում: Կարծես նա քարացել էր: Հետո նա գեղջկուհիներին պատմեց, թե իրենից պահանջում էին մատնել իր ընկերներին, ասել պարտիզանների տեղը՝ խոստանալով մեղմ վարվել իր հետ:

— Այդ երբե՛ք չեն տեսնի գազաննե՛րը, — մրմնջաց նա:

Մառը նկուղում անցնում էին ծանր ու մաշող վայրկյանները, ժամերը: Գիշերային սարսափելի ու ճնշող լուսթյան մեջ յուրաքանչյուրը խոսում էր իր մտքի, իր սրտի հետ: Սվելի ուշ, Հրանուշին թվաց, որ գեղջուկ կանայք քնել են: Նա իրեն բոլորովին մենակ զգաց ու այդ բոլորին խոր խաղաղության մեջ նրա շուրթերը հազիվ լսելի շշնջացին:

Հավատա՛, ընկեր, կծագի նա դեռ,
Արշալույսը դուրսի՛չ երջանկության ..

Պառկած կանանցից մեկը մի կողքից մյուսը շուռ գալով՝ նկատեց անքուն Հրանուշին:

— Քնի՛ր, աղջի՛կս, քնի՛ր, որ ուժ հավաքես: Այս ժամին բոլորն են քնած, — մայրաքար հորդորեց նա:

Հրանուշը հուզվեց գեղջուկ ոռւս կնոջ այս կարեկից խոսքերից:

Շարունակելով իր մտորումները, նա կիսաձայն պատասխանեց:

— Չէ՛, մամաշա, չէ՛, բոլորը չեն քնած: Նա արթո՛ւն է, նա այս ժամին մտածո՛ւմ է իմ մասին, քո մասին... ամբողջ ժողովրդի մասին...

Նվ Հրանուշի հուզված երևակայության առաջ պատկերացավ Առաջնորդի գործվալից դեմքն ու խոհուն աչքերը: Այդ աչքերն ասում էին.

— Մի ընկճվի՛ր աղջիկս, մինչև վերջը դիմացի՛ր փորձություններին և դու կհաղթես:

Կես գիշերն անց, աղոտ լույսով լուսավորված միջանցքից ոտնաձայն լսվեց: Մեկը մոտեցավ նկուղի դռանը, կանգ առավ և բանալին մտցրեց կողպեքի մեջ: Հրանուշն ահ զգաց բանալու զրնգոցից և ցնցվեց, երբ դահիճը դուռը բացելով տվեց նրա անունը, ազգանունը և հայրանունը:

— Ես գնացի, սիրելիներ, եթե դուք ողջ մնաք, կպատմեմք իմ մասին, — ասաց գեղջկուհիներին և նրանց համբուրելով դուրս եկավ նկուղից։

Պահակը նրան տարավ քննիչի առանձնասենյակը։

Թեթև հայացք ձգելով Հրանուշի վրա, սպան կեղծ կարեկցությամբ խոսեց.

— Ափսո՛ս է անմիտ կերպով մեռնելը։ Ես խոստաւում եմ փրկել ձեր կյանքը, եթե միայն դուք ասեք պարտիզանների տեղը։

Աղջիկը լուռ էր։

— Կատարեցեք ընտրություն՝ կամ հիմա կոնդակահարվեք, կամ ինձ կպատասխանեք, — մայորը բարձրացրեց իր տոնը։

Աղջիկը վեր պահեց գլուխը, արհամարհական հայացքով նայեց Գեատապոյի քննիչին և շոր պատասխանեց.

— Ես ընտրությունը վաղուց եմ կատարել, պարո՛ն մայոր։

— Ուրիշ ոչի՞նչ։

— Ոչի՞նչ։

Մայորի աչքերը փայլատակեցին. ջղայնացած ոտքի ելնելով, ուժեղ հարվածեց սեղանի զանդը։

— Տանե՛լ այս բանդիտին և նկուղում անմիջապես կոնդակահարե՛լ, — հրամայեց նա ներս մտնող ֆելդֆեբելին։

Երկար, կիսամութ միջանցքով և թաց աստիճաններով դահիճը Հրանուշին տարավ մի ստորերկրյա սպանդանոց։ Աղոտ ու մռայլ լույսով լուսավորված այդ քարայրից բորբոսի հոտ փչեց. սառը օդը մի պահ սթափեցրեց աղջկան։ Դահիճը նրան քարե պատին դեմ տալով, գոռաց.

— Մերկացի՛ր։

Հրանուշը դողում էր ամբողջ մարմնով։

— Մերկացի՛ր, — կրկնվեց հրամանը ավելի խիստ. և աղջիկը նկատեց, որ դահիճի ատրճառակի փողն իր կրծքին էր ուղղված։

— Գարշելի՛, վերջացրո՛ւ, քանի կենդանի եմ չե՛մ մերկանա, — դողդողաց աղջկա ձայնը:

Այդ միջոցին դահիճը թուլացավ, բաց թողեց ատրճանակը և մեղմ, խրատական տոնով ասաց.

— Ափսո՛ս ես, հիմա մի գնդակից դանդղ ջարդ ու փշուր է լինելու, կյանքը չի կրկնվում. արի, ասա՛ պարտիզանների տեղը և դու կփրկվես: Մի համառի, միևնույնն է, վաղ թե ուշ նրանք ընկնելու են մեր ձեռքը:

Աղջիկը չպատասխանեց: Նա դողում էր ամբողջ մարմնով:

Դահիճն իր փորձի անհաջողությունից հուսահատ, պարտիզանուհուն դուրս բերեց սպանդանոցից, ետ տարավ խոնավ ու մռայլ միջանցքով, և հարվածելով՝ նորից մտցրեց նկուղը:

Սոսկումով զարթնեցին գեղջկուհիները:

Նրանք երկար չկարողացան քնել: Հարց ու փորձ էին անում աղջկան, ահով լսում նրա պատմածները և լուռ մտածում. — Ո՛րտեղից էր կամքի ու ոգու այդքան ուժ կուտակվիլ այդ ջահել աղջկա սրտում:



Քառասունչորս թվականի գարունն արտակարգ գեղեցկությամբ բացվեց Ղրիմում: Կարծես երբեք այսքա՛ն չքնաղ, այսքա՛ն թովիչ չէր եղել Ղրիմի բնությունը:

Մահվան ծանր փորձություններից հետո, հաղթանակի այդ գարունը տեսնելու երջանկությունն ունեցավ նաև Հրանուշը: Նրան և նկուղում գտնվող գեղջկուհիներին կախաղանից փրկեցին Սովետական բանակից երկու օր առաջ հանկարծակի քաղաք ներխուժող պարտիզանները:

Այժմ Բախչի-Սարայի ճանապարհին Հրանուշը կանգնել էր բարձունքի վրա և վեհացած սրտով դիտում էր դաշտանկարը: Երեկոյան ամեն ինչ խաղաղ էր, ամեն ինչ ջե՛րմ ու դուրեկա՛ն:

Ներքեում, աշգիների լայնարձակ, կանաչ ծովի մեջ, սպիտակին էին տալիս ծաղկած տանձենիների ու խնձորենիների փրփուրե կղզիները: Այս գեղեցիկ հովիտով նա շատ էր անցել ու գնացել ծանր, տաժանակիր աշխատանքից հյուծված սովետական ռազմագերիների մոտ և նա «Արցունքի հովիտ» էր դրել ծաղիկների այս դաշտավայրի անունը: Իսկ ա՛յժմ... Այժմ վերջալույսի ծիրանին ողողել էր ձյունափրփուր տանձենիների և խնձորենիների հովիտն ու երջանկությունից հարբած մի թռչուն իր հեքիաթային երգն էր հյուսում սոճիների անտառում:

Հրանուշը լիաթոր շնչում էր ազատ օդը և իրեն դգում էր թեթև ու թևավոր, ինչպես հայրենի անտառների այդ թռչունը:

Նրեկոյան, մթնշաղով մշուշվող հովտից Հրանուշի առկանջին հասան ռուսական մարտական երգի հզոր հնչյունները: Հետո նա լսեց զինվորական ոտների համաշափ դոփյուն, ու հեռվից տեսավ սովետական զորքերի հաղթական զորասյուները:

Ինչքա՛ն գեղեցիկ ու կախարդական էր վայրկյա՛նը «Երջանկության հովիտում»:

Նվ ընդհատակի աղջիկը ցանկանում էր, որ անա՛նց լինի հորդուն բերկրանքի այս վայրկյա՛նը, անա՛նց լինի կարմիր զորագնդերի դոփյունը՝ հաղթանակի երջանկությամբ ողողված այս աշխարհում...

1944 թ.

ԾՓՈՒՆ ԱՐՏԵՐԻ ԵԶՐԻՆ

Նախկին բատրակ Պետրոսը, կամ «Զքավոր Պետոն», որին կոչանաւեալին կարգը դարձրել էր անվանի կոլխոզնիկ Պետրոս Մարտիրոսյան, հոգնած ու մռայլ նստել էր տան առաջ ընկած ջրաղացաքարի վրա ու ոտներից թափ էր տալիս հանդամիջյան ճանապարհների փոշին:

Պետրոս քեռին հռչակած էր:

Բոլորովին անուշադիր թողնելով իրեն մոտեցած «Ասլանին», որ ուրախությունից աշխույժ խաղացնում էր պոչը, աչքերը հառած կապույտ հեռուները, լուռ մտորում էր:

— Մի ջուր բեր, աղջի՛, սիրտս էրվում է, — վերջապես խոսեց նա՝ դառնալով իրեն մոտեցող դեռատի աղջկան՝ Մարիամին, մինչ մտքում կրկնվում էր Սովետական ինֆորմբյուրոյի օրվա հաղորդագրությունը, որ՝ «Կատաղի մարտերից հետո մեր զորքերը թողեցին...»:

Նրան մի պահ թվաց, որ մեկը հեռուններից, շատ հեռուններից տխրածոր երգում է.

Սե-մութ ամպեր ճակատիդ ղիզվան,
Դու՛մա՛ն հագուր, Ալագյազ...

Ալագյազից փչում էր երեկոյան զովը՝ ալպյան թարմ կանաչի ու վայրի ծաղիկների բուրմունքով ողողելով կապտամշուշ գյուղը: Որպես վիթխարածալ, սպիտակաբաշ շրրվե՛ծ՝ լեռան գոգավոր լանջով գյուղի վրա էր հոսում ոչխարների ճերմակ հոտը, քիչ ներքեում ծփում էին աշնանացանի

փարթամ հասկերը և խճուղու երկայնքով ձգվող հեռագրա-
թելերին թառած ծիծեռնակները անհանգիստ ճիչերով էին
լցնում իրիկնամուտի խաղաղությունը:

— Տրակտորիստ Վաղոն և Մաթոսենց Սեթոն էլ այսօր
ֆրոնտ մեկնեցին, — ամուսնուն մոտենալով, վշտալի հաղոր-
դեց կինը:

Նրանք մի պահ լուռ էին: Ամեն մեկը խոսում էր իր
սրտի հետ: Հետո կինը շարունակեց.

— Առանց Վաղոյի ու Սեթոյի ո՞վ է սևացնելու մեր էս
հողերը... Տրակտորը որ ծուխ չհանի, մեր գործը շատ
դժար կլինի...

Պետրոսն աչքի տակով խորիմաստ նայեց կնոջը. դողա-
ցին ալեխառն, հաստ բեղերը:

— Բանն էլ էն է, որ դուշմանին թույլ չտանք հանգցնել
մեր տրակտորների և մեր օջախների ծուխը... — շնչաց նա:

Մարիամն անհանգիստ շարժվեց տեղում: Ներքին տագ-
նալով շողացին նրա երազուն աչքերը:

— Հայրի՛կ, թույլ տո՛ւր գնամ Երևան, — դողդողաց նրա
ձայնը:

Պետրոս քեռին զարմացած նայեց աղջկա դեմքին, նրա
առկայծող աչքերին: Ոչինչ չհասկացավ: Ի՞նչպես թե: Այս
կովի տարին ի՞նչ Երևան, երբ բոլորը ֆրոնտ են դնում...

— Տղերքը ֆրոնտ են դնում, դու էլ՝ Երևա՞ն, — սրբա-
նեղեց հայրը:

— Այո՛, այդ էլ իմ ֆրոնտն է...

— Չեմ հասկանում, — աղջկան ու ապա կնոջը հարցա-
կան ականարկ գցեց քեռի Պետրոսը:

Մարիամը մի ականթարթ սրտի դողով նայեց մորը, ապա
հորը դառնալով՝ շարունակեց.

— Չէ՞ որ թույլ չպետք է տալ հանգչի տրակտորների
ծուխը...

— Չեմ հասկանում, հետո՞...

— Հետո, ես կգնամ Երևան, կսովորեմ Գյուղմեխանի-

դացիայի դպրոցում, կվերադառնամ ու կաշխատեմ որպես տրակտորիստ...

Հայրն ու մայրը կարճ հայացքներ փոխանակեցին իրար հետ: Մարիամը սրտատրոփ սպասում էր հոր վճռին:

Ինչ-որ վեհացնող մի զգացում համակեց քեռի Պետրոսի ամբողջ էությունը: Նա իրեն հպարտ զգաց աղջկա համար:

Հեռագրաթեղերի վրայից ձուլողելով կապույտ երկնքի մեջ սլացան ծիծեռնակները: Իրիկնային խաղաղության մեջ գյուղի ծայրից արձագանքեց ոչխարների մայունը:

— Գնա՛, աղջիկս, — ասաց հայրն ինքնագոհ, — դնա՛ և սովորիր տրակտոր վարել: Ֆրոնտում դուշմանին զենքով են խփում, թիկունքում՝ աշխատանքով...

...Երևան մեկնելու ճանապարհին Մարիամի հայացքը մեկ էլ կանգ առավ լուռ ու մունջ կանգնած տխրատեսիլ տրակտորների վրա, որոնք դեռ դարնանը հայրենի դաշտն ու անդաստանը երգով ու երաժշտությամբ էին լցնում... Եվ թախծալի կարոտով հիշեց տրակտորիստ այն տղին, որ կովի գնաց՝ սիրո առաջին ծիլերը սրտում...

— Քո՛ տրակտորը շուտով ծուխ կարձակի, Վաղո՛, — շշնջաց նա, ու անորոշ հրճվանքից բաբախեց սիրտը:



Ուշ աշնան լիալուսին գիշեր: Զիթհանքով գյուղը խոր քուն էր մտել: Կես գիշերվա խաղաղությունը խռովում էր միայն հեռավոր դաշտերից հասնող տրակտորի հոնդյունը:

Այդ Մարիամն էր, որ աշնանավար էր կատարում:

Նրա տրամադրությունը շափազանց բարձր էր: Տրակտորն աշխատում էր լիաթոք, անխափան: Վարի խորությունը ամեն տեղ պահպանում էր 24—26 սանտիմետր: Եվ, շնայած գիշերային աշխատանքի դժվարությանը, դաշտում ոչ մի տեղ խարակներ չէին թողնվում:

Տրակտորի ղեկը ձեռքին ամուր բռնած՝ հողի կուրծքը ձեղքելով, նա առաջ էր դնում՝ սև ալիքների սփռելով աջ ու

ձախտ շէտո, կոշտացած ափերի մեջ ամէլի ամուր սեղմելով
ղեկը՝ նա ձայնակցեց իր տրակտորի հռնդյունին՝

Տրաքտորը հասաւ արաւ,
Աղբի դեկավար մարթը,
Դուշմընի մեջ ընկնի ջարթը.
Այ տրաքտոր, ջան արաքտոր,
Դու մեր հոքի, ջան տրաքտոր ..

Կես գիշերն անց երկինքն ամպեց։ Թուխալը ծածկեց լուսինն ու աստղերը։ Դաշտը խավարեց և դժվարացաւ վարի տրակին հետեւելը։ Մարիամը մի պահ կանգ առաւ և աչքաշափով որոշեց հերկած հողը։ Պլանն արդեն գերակատարված էր։ Կարելի էր տուն գնալ ու հանգստանալ, մանավանդ, որ սկսեց անձրեւել։ Բայց նա որոշել էր առավոտյան անակընկալի բերել կոլտնտեսութեան նախագահին և բոլոր կոլտնտեսականներին։ Մինչև լուսաբաց նա ուղում էր վարել ամբողջ դաշտը։ Թող առավոտյան բոլորը տեսնեն համատարած սեփն տվող արտը և հրճվեն իր հետ միասին։

Այս մտքերով տարված Մարիամը՝ միաժամանակ անձրեւից պաշտպանվելու համար՝ կուշ եկաւ տրակտորի տակ՝ իր նոր վարած հողի վրա։ Անձրեւը կաթկթում ու ծծվում էր շապիկից ներս՝ թացացնելով մարմինը։

Նա երկար չսպասեց։ Շուտով ձյունոտ բարձունքներից փչեց սառը քամին, ամպերը լուսնի վրայից արագահոս հեռացան, աստղերը ցրտից դողահար պլպլացին երկնքի խորքում ու լիալուսնի շողերը ողողեցին երկիրը։

Աղջիկը նորից բարձրացաւ իր տրակտորի վրա։ Չմեռնամուտի քամին սարսուռ առաջացրեց նրա թաց մարմնում։ Նա ցնցվեց ուժեղ, բայց ամուր ձեռներով բռնեց ղեկը և տրակտորը նորից ձխերի քուլաներ արձակելով՝ առաջ նետվեց։

Լուսադեմին ամբողջ դաշտը համատարած ծփում էր սև

ալիքներով: Մարիամն ուրախ սրտով մեկ էլ դիտեց աշխա-
նավարը ու ճանապարհվեց դեպի գյուղ: Գլուխը պտույտ էր
գալիս: Տուն հասնելով՝ նա իրեն գցեց անկողին և միայն մի
շաբաթից հետո վեր կացավ անկողնից:



Անցան պատերազմի դաժան տարիները: Մեծագույն
արահավիրքների միջից Մեծ Նավավարը սովետական նավը
հասցրեց հաղթանակի նավահանգիստը: Այդ անմոռանալի
օրերին Մարիամ Մարտիրոսյանն իր տրակտորի դեկը
հանձնեց Բեռլինից փառքով վերադարձած շքանշանակիր
ռազմիկին:

— Վաղո ջան, — ասաց աղջիկը, — քո տրակտորը հանձ-
նում եմ քեզ... Պատերազմի տարիներին երբեք չհանգավ
նրա ծուխը...

Եվ այնուհետև Մարիամը որպես օդակավարուհի աշխա-
տանքի անցավ դաշտավարական բրիգադում:

Հին, փորձված ռանչպար հայրը ուրախությամբ էր
հետևում իր քսանամյա աղջկա ջանքերին:

— Աղջի՛կս, — ասաց նա, — քեզանից շատ շնորհակալ
եմ: Պատերազմի տարիներին դու ինձ սպիտակերես հանե-
ցիր: Այժմ նոր պատերազմ է սկսվում Հայրենիքի վերքերը
դարմանելու համար... Անիծածները շատ վնաս տվեցին...
Պետք է շատ քրտինք թափել... Բայց ամեն ինչից առաջ պի-
տի սիրել հողը, հասկանալ նրա լեզուն... Հողը, աղջի՛կս,
բարիքների մայր է, ամեն բարիք ծնվում է հողից. եթե դու
սիրես նրան լի սրտով, ու խնամես հարազատի պես, նա էլ
քեզ հարազատ մաչքություն կանի...

Մարիամը լուռ ու հուզված լսում էր հորը, զգում իր
նոր աշխատանքի պատասխանատվությունը: Աշխատանքի
հանդեպ այդ պատասխանատվությունը նրա մեջ աճել էր
մանկուց, և՛ տանը, և՛ դպրոցում, և՛ կոմերիտական ժողով-
ներում: Հայրենի հողի հանդեպ սիրո նվիրական զգացում-
ներ էր դաստիարակել նրա մեջ մայրենի դրականությունը,

որի ջերմ ընթերցողն էր նա դեռ աշակերտական նստարանից: Ընթերցանությամբ դիշերներ էր լուսացնում՝ ինչպես իր հայրը՝ ինքնուս ու շատ բան կարդացած քեռի Պետրոսը:

Մարիամն իր երիտասարդական օղակի անդամների հետ անցավ գործի: Նախքան հողամասը վարելը տասը հեկտար տարածությունից հավաքեցին բոլոր քարերը և փոխանակ արտի մեջ քարակույտեր դիզելու, քարերը ցանքադաշտից դուրս թափեցին:

— Հարկավոր է, — ասում էր Մարիամը, — ամեն մի թիղ հողն օգտագործել: Եթե Հայաստանի բոլոր կոլտնտեսությունների ցանքադաշտերից դուրս թափվեն քարակույտերը, մենք հակաչական հողամաս կշահենք, մինչև այժմ չօգտագործված այնպիսի հողամաս, որ առատ բերք կտա:

Սկսվեց մանրակրկիտ, քրտնաջան աշխատանքը հողի հետ: Հորդ անձրևներից հետո, երբ երևացին մոլախոտերն ու հողի երեսը կեղևակալվեց, Մարիամի օղակը պատրաստվեց կրկնավարի: Ցելը երկու անգամ կուլտիվացիայի ենթարկելուց հետո, նրանք աշնանացանը կատարեցին տրակտորային շարքացանով, ճիշտ ժամանակին և ընտիր, լիարժեք սերմով:

Բարձր բերքի նախապայմաններն ստեղծվել էին: Սակայն Մարիամը չէր հանդստանում: Նրան թվում էր, թե ինչպիսի մի բան պարտական մնաց հողին, թվում էր, թե իր մըրցակից ընկերուհին՝ օղակավար Օֆիկ Մադոյանը իրենից լավ է մշակում հողը: Ու նա հաճախ այցելում էր արտը, սրտատրոփ փնտրում իր օղակի աշխատանքի առաջին կանաչ շյուղերը, առաջին ծիլերը...



Այդ դիշեր քունը չէր կաշում Մարիամի աչքերին: Անկողնում պառկած՝ նա ոգեշնչող մտորումների մեջ էր ընկել: «Եթե, — մտածում էր նա, — հեկտարից 10 ցենտներ ավելի հացահատիկ ստանամ, իմ օղակի 10 հեկտար հողա-

մասից պետութեանը 100 ցենտներ ավելի հացահատիկ կտամ... իսկ մեր Միութեան մեջ քանի՛-քանի՛ միլիոն հեկտար ցանք կա... եթե բոլոր կոլտնտեսութեանները, բոլոր օղակները լավ մշակեն հողը, ինչքա՛ն շատ կլինի բերքը, և ինչքա՛ն լի ու երջանիկ կապրեն բոլորը, բոլորը...»:

Գյուղի հեռավոր ծայրերից դիշերային անդորրութեան մեջ տարածվում էր կալսիչի աշխատանքային երգը: Արդեն երկրորդ օրն է կալսում էին առատ բերքը:

Հանկարծ, Մարիամի մտքերի հետ միասին կտրվեց կալսիչի ձայնը, ու կատարյալ խաղաղութեան տիրեց:

Մարիամն անհամբեր սպասեց հինգ, տասը, տասնհինգ րոպե, բայց կալսիչի ձայնն այլևս չէր լսվում: Անհանդիստ նա բարձրացավ անկողնից, շտապ հագնվեց և իր քայլերն սղդղեց կալատեղ:

Ճանապարհին նրան հանդիպեց կոլտնտեսութեան նախագահը:

— Այդ ո՛ւր, Մարիամ:

— Հե՛շ, կալը, — պատասխանեց աղջիկը:

— Ի՞նչ գործով, — հետաքրքրվեց նախագահը:

— Գնամ, տեսնեմ, ինչո՞ւ լռեց կալսիչը, արդեն կես ժամ է որ չի աշխատում, — մտահոգվեց Մարիամը:

Հրճմանքից թևավորվեց նախագահի հոգին: Մի րոպե նրա մեջ ցանկութեան առաջացավ գրկել դեռատի աղջկան, ջերմորեն համբուրել և ասել. «Դու ոսկի աղջիկ ես, Մարիա՛մ. մեր կոլտնտեսականները, մեր ամբողջ ժողովուրդը կարող են հպարտանալ քեզանով...»:



Երկու օրվա բացակայությունից հետո, երբ Մարիամը նորից այցելեց իր հողամասը, դեռ հեռվից սիրտը բաբախեց երջանկութեանից. ամբողջ ցանքադաշտը հավասարապես ծածկվել էր նորածիլ կանաչով...

Ինչքա՛ն հմայիչ էին աշխատանքի այդ առաջին կանաչ

ծիլերը, որոնք խոստանում էին առատ բերք ու հաղթանակ սոցիալիստական մրցության մեջ...

Բերկրալի սրտով նա տուն վերադարձավ:

Երեկոյան, իր օղակի բոլոր անդամների հետ միասին Մարիամը ներկա էր ագրոտեխնիկան ուսումնասիրող խմբակի պարապմունքին, որ անց էր կացնում կոլտնտեսության բազմափորձ ագրոտեխնիկ Արամայիս Անտոնյանը:

— Քեզ միայն գյուղատնտեսական Ակադեմիան կարող է բավարարել, — հաճախ Մարիամին ասում էին ընկերները:

Իր այդ երազի իրականացման վառ հույսերով էլ ապրում է Մարիամը, օր-ավուր հարստացնելով գիտելիքները:



Երբ արևի ջերմության տակ սկսեց հալել ձյունը, և բացվեց գարունը, Մարիամն շտապեց դաշտ՝ իր և ընկերների քրտնաջան աշխատանքի արդյունքը դիտելու: Հինգ կիլոմետր ճանապարհ կտրելով՝ տեղ հասավ: Ուրախությունը թրթռաց նրա երակներում: Արբեցումով շնչեց գարնանային դուր և լայն հայացքով ընդգրկեց իր օղակի հողամասը: Աշնանացանը համատարած կանաչ գորգ էր փռել: Այդ՝ բարձր բերքի երաշխիքներից մեկն էր: Բայց մրցությունից պարզերես դուրս գալու համար դեռ հարկավոր էր աշխատել ու աշխատել...

Եվ Մարիամ Մարտիրոսյանի բարձր բերքի երիտասարդական օղակն անցավ աշխատանքի: Ցանքի լրացուցիչ սնուցումից ու փխրեցումից հետո, աշնանացանի բաց կանաչ ծիլերը սկսեցին բարձրանալ փարթամորեն: Դաշտի մի փոքրիկ մասում ցանքը դանդաղ էր աճում: Այդ խիստ մտահոգեց Մարիամին: Նա դիմեց ագրոտեխնիկին ու փորձառու կոլտնտեսականներին և անմիջապես ձեռնամուխ եղավ նրանց տված խորհրդի կենսագործմանը: Օղակի անդամները տակառներով գոմաղբի հեղուկ փոխադրեցին դաշտ և ավելների օգնությամբ շաղ տվեցին դանդաղ աճող ցանքի վրա: Այս ագրոձեռնարկումը տվեց իր դրական արդյունքը: Ապա օղակը ձեռնարկեց մոլախոտերի ոչնչացմանը: Ցորենի դաշ-

տից նրանք արմատախիլ արեցին մոլախոտերը՝ դանդակա-
ծաղիկը, խատուտիկը, փառփառ ծաղիկը, ճնճղալեզուն...

Հասավ ամառը: Կանաչ հասկերը ծծեցին արևի ջերմու-
թյունն ու դեղնությունը, ծծեցին հողի հյութը, աճեցին, ոս-
կեղծվեցին և հակնթե հատիկներով ծանրաբեռ իրենց
գլուխները կամաց-կամաց սկսեցին խոնարհել մայր հողին:
Ալագյաղի հովը խշշալով անցավ ու ալեկոծեց ցորենի ոսկի
ծովը և կաքավը, ուրախ ճիշ արձակելով թռավ՝ փարթամա-
ցած, «ուլ խեղդող» հասկերի միջից: Սկսվեց հունձը: Երեք
օր ու գիշեր Մարիամն ու իր երիտասարդ ընկերները չէին
հեռանում դաշտից: Գերանդիների ու մանդաղների արծաթյա
մահիկը գիշեր ու ցերեկ լողում էր ցորենի ոսկեծուփ ծովի
մեջ:

Բարձր բերքի երիտասարդական օղակի անդամները
իրիկնամուտին, լուսնի շողերի տակ, նստել էին ընթրիքի՝
արտի եղերքով խոխոջացող առվակի ափին: Մարիամը դի-
տում էր արծաթափայլ ջրերը, անխոս ունկնդրում նրանց
կարկաչը և թվում էր, թե իր սրտից բխող երջանկության մե-
ղեդին է այդ, որ առվակը կարկաչաձայն տանում է հեռու-
ները...

Ինչքան լավ է աշխատանքը հաղթական պատերազմից
հետո, հայրենի ազատ հողի վրա, հայրենի բնության գրը-
կում...

Հեռվում առկայծեցին գյուղի էլեկտրական լույսերը:

Խոր խաղաղության մեջ լավեց տրակտորի հռնդյուն:
Այդ քաղցր հուշեր զարթեցրեց Մարիամի սրտում: Նա զգաց
իր հարազատ տրակտորի բուրմունքը, այն մտերիմ տրակ-
տորի, որի ծուխը երբեք չհանգավ Հայրենական Պատերազ-
մի ահեղ օրերին...

Նորից լավեց աղջիկների զրնգուն ձայնը. լուսնալույսի
տակ փայլփլեցին մանդաղներն ու գերանդիները և խշշացին
ցորենի հնձվող հասկերը...

Երիտասարդական ձեռքերի ճկուն աշխատանքով բերքա-
տատ խուրձերը խնամքով կիտվեցին դաշտում, և լուսադե-

մին, երբ նախագահն ալցելեց նրանց մոտ, արդեն ամբողջ դաշտը հնձված գտավ:

— Սա՛ղ լինեք, ջահելներ,— հիացած բացականչեց նա.— ա՛յ, այսպես պետք է աշխատել. գրոհել եք, ինչպես մենք՝ Ստալինգրադում,— հիշեց նախագահը Ստալինգրադյան անմոռանալի օրերը, երբ ինքը ղեկավարում էր հակառակակալին հրանոթի դումարտակը:

Հետևյալ օրն սկսեց կալսվել օղակի քրտնաջան աշխատանքի արդյունքը: Կալսիչ մեքենան երախաբաց կուլ տվեց ցորենի խուրձերը և ոսկու նման խշշացին խոշոր, սերմացու հատիկները: Եվ երբ կշեռքը գործի դրվեց, թրթռաց Մարիամի սիրտն ու երջանկությունից լցվեցին նրա երազուն աչքերը: Պայծառացա՛վ ու պայծառացա՛վ նրա արևախանձ գեմքը: Տասը հեկտար ցանքից նա ստացել էր 395 ցենտներ ցորեն... հեկտարից 39,5 ցենտներ աստղահատիկ...

— Մարիա՛մ, աղջի՛կս, շա՛տ ապրես, հազա՛ր ապրես...

Հուզվել էր հայրը, քեռի Պետրոսը:

Այդ օրը Զիթհանքով լեռնային գյուղում ավելի վառ շողշողացին էլեկտրական լամպերը:

Եվ ալեհեր, հին ռանչպար քեռի Մինասը, մոտենալով Մարիամին, իր գեղջկական կոշտ բազուկներով ամուր գրկեց նրան: Երջանկությունից ծերունին թեթևաշարժ պատանի էր դարձել:

— Զորանաս ու շժերանաս, աղջիկս,— դողդողաց նրա ձայնը,— ես ութսուն տարեկան մարդ եմ, յոթանասուն տարի ռանչպարություն եմ արել, բայց այս հողում առաջին անգամն եմ տեսնում այսքա՛ն առատ բերք... դու քո հունարով ետ թողիր իմ յոթանասուն տարվա ռանչպարությունը, աղջի՛կս: Դե՛, գիտեմ, զօր ու դիշեր քրտինք թափեցիր, աշխատանքը սրտի գործ դարձրիր... ապրե՛ս, հաղթեցի՛ր...

Մարիամը հուզվել էր: Նրան թվում էր, որ աշխարհը ավելի լուսավոր է, արևը՝ ավելի պայծառ, երկինքը՝ ավելի կապույտ և մարդիկ այնքա՛ն-այնքա՛ն գորովալի ու բարեսիրտ...

Թագիտալիքները Մոսկվայից լեռնային Ջիթհանքով գյուղը հասցրին կառավարական որոշումը՝ քսաներկուամյա կոմերիտական Մարիամ Մարտիրոսյանին Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելու մասին: Առաջին հայուհին է նա, որ արժանացավ նման բարձր կոչման: Այդ լուրը խորապես հուզեց Ջիթհանքով գյուղի կոլտնտեսականներին ու ամբողջ հայ ժողովրդին:

...Այդ գիշեր քունը չէր իջնում Մարիամի աչքերին: Հորդառատ զգացումները խռովել էին նրա հոգին: Բերկրանքից բաբախում էր սիրտը. և նա, աչքերը փակ, երազում էր այն մարդուն, որ հեռավոր Կրեմլից տեսել էր հայկական լեռնաշխարհում ծվարած մի փոքրիկ գյուղի համեատ հողի աշխատավորին, մտածել նրա մասին, գնահատել նրա աշխատանքը...

Սակայն բերկրանքի հետ մի ուրիշ զգացում հետզհետե սկսեց տեղ գտնել Մարիամի սրտում՝ ցավ պատճառելով նրան: «Ա՛խր, Օֆիկն էլ քուն ու դադար չի ունեցել. նա էլ սրտով է աշխատել, դրա համար հեկտարից ստացել է 38 ցենտներ հացահատիկ: Ինչո՞ւ միայն իմ աշխատանքը պետք է գնահատվի» — տանջվում էր նա:

Բաց լուսամուտից ներս էր թափանցում լեռների զովր և շոյում Մարիամի այրվող ճակատը:

«Օֆիկ ջա՛ն», — շշնջաց նա ինքն իրեն՝ վերհիշելով, թե ինչպես Օֆիկը կառավարական որոշումն իմանալով, անմիջապես վազել էր մոտը, համբուրել իրեն ու սրտալի շնորհավորել: Եվ նա նկատել էր ուրախության արցունքներ իր մրցակցի աչքերին:

Առավոտյան վաղ, աքլորականչի հետ, Մարիամը վերկացավ ու դուրս եկավ գյուղամեջ: Լեռների գազաթներն ար-

դեն ծիրանավորվել էին ու երկինքը պարզել էր իր մանուշակը: Մարիամը գնում էր Օֆիկի մոտ: Այդ միջոցին հեռվից չավեց ավառյի ձայն, և, խճուղու վրա փռվի բարձրացնելով, մեքենան մոտեցավ Մարիամին: Շրջկոմի աշխատողներն էին, որ շտապ Մարիամին ցույց տվեցին «Սովետական Հայաստան» թերթի նոր համարը, որտեղ տպված էր ՄՍՌՄ կառավարության որոշումը՝ Օֆիկ Մադոյանին լենինի շքանշանով պարգևատրելու մասին: Մարիամը հափշտակեց այդ թերթը և վազեց մրցակցի մոտ:

Նրշանկությունից խոնավացել էին նրա աչքերը և նա շշնջում էր.


— Օֆիկ ջան, ի՞նչ լավ է այժմ, ի՞նչ լավ...



Հայկական լեռնաշխարհում նորից դարուն է: Զուգվել են արտ ու անդաստան: Լեռան թեք լանջին նորից բոցավառվում է կակաչադաշտը, առվի խոխոջուն ջրերի մոտ, կանաչ թավիշի մեջ երազում է սպիտակ ջրաշուշանը և արտի մեջ նազանքով օրորվում են հովվածաղիկն ու աստղածաղիկը... Նորից հայրենի աղատ լեռների խինդը քրքշալով, պաղպաջուն առվակները շտապում են դեպի հովիտները... Նորից զվարթ երգում են տրակտորները...

Ու մի վայելչագեղ, հպարտ, երազուն աչքերով աղջիկ, կանգնել է ծփուն արտերի եզրին՝ հայացքը զմրուխտ բոցով բռնկած աշնանացանին...

Նա անրջում է վաղվա մեծ բերքի մասին...



ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ԹՅՈՒՆ


	Էջ
Բոյանկա	5
Վերադարձ	17
Մայրը	24
Մահվան դատապարտված կինը	45
Арменка	60
Լեւոնաշխարհի դուստրը	75
Ընդհատակում	85
Ծփուն արտերի եղբին	98
ԽՈՎՈՐԱ	110



Գառ. խմբագիր՝ Վ. ՂԱԶԱՆՁՅԱՆ
Նկարիչ՝ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎՃ 02209 Պատվեր № 517. Տիրաժ 4000.
Հեղին. 5 մամուլ, տպ. 8 1/2 մամուլ
Հանձնված է արտադր. 22/XI 1947 թ.
Ստորագրվ. է տպ. 25/I 1948 թ.:

ՀՍՍՌ Մ. Սովետին կից
Պոլիդր. և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, Ալա-
վերդյան № 65,
Երևան, 1948 թ.







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028266

8n

